Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

2204
24559

1862

84
Z-66

2011

596
[illegible] 798.

# ԳԱԹԸՐԻՆ ՀՕՎԱՐՏ

## ԹԱՏՐԵՐԳՈՒԹԻՒՆ

Ի ՀԻՆԳ ԱՐԱՐՈՒԱԾՍ ԵՒ ՅՈՒԹՆ ՊԱՏԿԵՐՍ

ՅԱՂԵՔՍԱՆԴՐ ՏԻՒՄԱՅԷ

ԹԱՐԳՄԱՆԵԱՑ

ՏԻԳՐԱՆ ՅԱՐՈՒԹԻՒՆ ՏԷՏԷԵԱՆ

84

ՄԻՍԱՔ Կ. ՔԷՐԻՔԷՔԵԱՆ ՀԱԼԷՊ ALEB-SYRIE MISSAK G. KERIKEKIAN



ԶՄԻՒՌՆԻԱ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ՏԷՏԷԵԱՆ

[illegible] , թի. 50.

1862.

548

10080-57

9

# ՔԱԹԷՐԻՆ ՀՕՍԻԱՐՏ

ԹԱՏՐԵՐԳՈՒԹԻՒՆ

Ի ՀԻՆԳ ԱՐԱՐՈՒԱԾՍ ԵՒ ՅՈՒԹՆ ՊԱՏԿԵՐՍ

## ԱՆՁԻՆՔ

ՀԷՆՐԻ Ը․ *Թագաւոր Անգղիոյ*։
ԷԹԷԼՎՈՒՏ, *Տայրհէմի դուքս*։
ՍՈՒՍԷՔՍԻ ԿՈՄՍԸ։
ՍԸՐ ՃՕՆ ՍՔՕԹ, *Յակոբ Ե.ի դեսպան*։
ՍԸՐ ԹՕՄԱՍ ՔՐԱՆՄԷՐ, *Քանթըրպըրիի արքեպիսկոպոս*։
ՖԼԷՄԻՆԿ, *ալքիմիագէտ*։
ՍԵՆԵԿԱՊԵՏ ԼՈՐՏԸ։
ԱՏԵՆԱՊԵՏ ՄԸ։
ՆՕՐՖՕՔ ԿՈՄՍԸ, *զօրապետն անգղիական*։
ԴԱՀԻՃ ՄԸ։
ՆՈՒԻՐԱԿ ՄԸ։
ԼՈՆՏՈՆԻ ԱՇՏԱՐԱԿԻՆ ՊԱՀԱՊԱՆ ՄԸ։
ՔԱԹԷՐԻՆ ՀՕՍԻԱՐՏ։
ՄԱՐԳԱՐԻՏ ԻՇԽԱՆՈՒՀԻՆ։
ՔԷՆԷՏԻ, *Քաթէրինի սնուցիչը*։
ՌՕՔԷՊԻՒ ԴՔՍՈՒՀԻՆ։
ՕՔՍՖՕՐՏԻ ԴՔՍՈՒՀԻՆ։
ԹԱԳԱՒՈՐԻՆ ՄԱՆԿԼԱՒԻԿՆԵՐԸ։
ՏԱՅՐՀԷՄԻ ԴՈՒՔՍԻՆ ՄԱՆԿԼԱՒԻԿ ՄԸ։
ԻՇԽԱՆՆԵՐ։
ՇՔԱԴԻՐ ՏԻԿԻՆՆԵՐ։
ԹԱԳԱՒՈՐԻՆ ՊԱՀԱՊԱՆՆԵՐԸ։
ՍԿՈՎՏԻԱՑԻ ԻՇԽԱՆՆԵՐ, *Սըր Սքօթի ուղեկից*։
ՊԱՀԱՊԱՆԱՑ ՀԱՐԻՒՐԱՊԵՏ ՄԸ։
ԺՈՂՈՎՈՒՐԴ։
ԱՏԵՆԱԴՊԻՐ ՄԸ։
ԱՂԱՂԱԿՈՂ ՄԸ։

Տեսարանն է յԱնգղիա · ի 1542.

ALEB-SYRIE

## ԱՐԱՐՈՒԱԾ ԱՌԱՋԻՆ

### ԱՌԱՋԻՆ ՊԱՏԿԵՐ

*Ուայթ-Հօլի պալատին մէջ ընդունելութեան սենեակը։*

#### ՏԵՍԱՐԱՆ ԱՌԱՋԻՆ

ՆՕՐՖՕՔ ԴՈՒՔՍԸ. *Սենեկապե՛տ լորտ*։

ՍԵՆԵԿԱՊԵՏ ԼՈՐՏԸ. *Ի՞նչ կը հրամայէք*։

ՆՕՐՖՕՔ ԴՈՒՔՍԸ. *Ո՞ւր է Նորին Վեհափառութիւնը*։

ՍԵՆԵԿԱՊԵՏ ԼՈՐՏԸ. *Մեծ դիւանադպրին հետ իր սենեակն է*։

ՆՕՐՖՕՔ ԴՈՒՔՍԸ. *Նոր արթննալու ժամանակ եղած սովորական արարողութեանը փոփոխութիւն մը չեղա՞ւ*։

ՍԵՆԵԿԱՊԵՏ ԼՈՐՏԸ. *Ամենևին, տէր իմ*։

ՆՕՐՖՕՔ ԴՈՒՔՍԸ. *Նոր դուրս ել-*

չերլունճպիտի սպասեմ հօս ։ (Քան-թըրպըրիի արքեպիսկոպոսին դառնալով՝ որ ներս կը մտնէ ։) Բարի եկաք, տէր իմ։

ՍԸՐ ԹՕՄԱՍ. Բարեւ ձեզ, Պ. սենեկապետ ։

ՆՕՐՖՕՔ ԴՈՒՔԸ. Հռովմէն ինչ լուր ունիք, արքեպիսկոպոս տէր ։

ՍԸՐ ԹՕՄԱՍ. Սկովտիայէ՞ն ինչ լուր ունիք, անգղիակա՛ն զօրապետի ։

ՆՕՐՖՕՔ ԴՈՒՔԸ. Պապին հետ գժտութիւններս պիտի տեւէ՞ տակաւին ։

ՍԸՐ ԹՕՄԱՍ. Յակոբ թագաւորին հետ միշտ թշնամի պիտի ըլլա՞նք ։

ՆՕՐՖՕՔ ԴՈՒՔԸ. Այո՛, Միքայէլ հրեշտակապետին՝ սատանային հետ եղածէն աւելի. Թագաւորին Եօրքէն վերադառնալը գիտէք. Նորին Վեհափառութիւնը հոն վեց օր կեցաւ իր ծանծաղամիտ եղբօր որդւոյն սպասելու համար, որ վեց օրէն ետեւ՝ չեմ գիտեր ինչ բարուրանք բանեցուցեր էր իր գալ չկրնալը իմացընելու համար. ասոր վրայ Թագաւորը խիստ նեղացած Լոնտոն վերադարձաւ ։

ՍԸՐ ԹՕՄԱՍ. Հռոմի լուրերը Սկովտիոյ լուրերէն աւելի աղէկ չեն ուրեմն ։

ՆՕՐՖՕՔ ԴՈՒՔԸ. Թագաւորը եւ թագաւորութիւնը, ազնուականութիւնը եւ ժողովուրդը, ամէնքն ալ նեղմեալ են, այնպէս չէ՞ ։

ՍԸՐ ԹՕՄԱՍ. Այո՛. բայց անտարակոյս գիտէք որ մենք Պապէն կախեալ չենք. տասն եւ ինը առաջնորդներ եւ քսան ու հինգ գիտնական անձեր ժողովք մը կազմելով՝ յայտարարութիւն մը հանեցին, որով Պապին տէրութիւնը կը մերժեն, անոր պարզ հոգեւոր իշխանութենէ զատ ուրիշ իշխանութիւն չեն ճանչնար, Հռովմի լոկ եպիսկոպոս տիտղոսը կու տան անոր, եւ Անգղիոյ Հէնրի Ը. թագաւորը կրօնից բացարձակ գլուխ կ'անուանեն ։ Շատ կը վախնամ որ մահացու պատերազմ մը տեղի պիտի ունենայ ։

ՆՕՐՖՕՔ ԴՈՒՔԸ. Սակայն ապահով եղիք որ այնչափ վտանգալի պիտի չըլլայ. պապական շանթերը այսուհետեւ թագաւորական գահերը կործանելու ոյժ չունին ։

ՍԸՐ ԹՕՄԱՍ. Ո՛չ, բայց անոնք փայտակոյտները կը վառեն ։

ՆՕՐՖՕՔ ԴՈՒՔԸ, տխուր դէմքով մը. Պէտք չէ յուսալ որ Սկովտիայէն եկող պատերազմի այդ հողմը կարող է զանոնք շիջուցանել։ Յակոբ Ե Պապին նզովքին մէջն է եւ Պապին նզովքը՝ Յակոբ Եին պատերազմին մէջ։ Մարի տը Կիզին հետ իր ամուսնութիւնը եւ Պօղոս Գին իրեն տուած կրօնից պաշտպանութեան տիտղոսը ընդունելը բուն պատերազմի նշաններ են, չըլլայ որ խաբուիք ։

ՍԵՆԵԿԱՊԵՏ ԼՈՐՏԸ. Լռեցէ՛ք, տէր իմ. կարծեմ որ թագաւորն է որ բարձրաձայն կը խօսի ։

[illegible]

## ՏԵՍԱՐԱՆ Բ.

ԱՌԱՋԻՆՆԵՐԸ. ՀԷՆՐԻ։

ՀԷՆՐԻ. Պարոններ, Սկովտացւոց պատերազմի նուագին ձայնը առի՞ք, որ մեր պալատին մէջ կը հնչէցընեն։ Գնա՛ շուտով, Նօրֆօք դուքս, այն հիւսիսաբնակ հովիւները ներս մըտցուր, և մեր փողահարներուն հրամայէ՛ որ Ֆլօտէնի նուագը հնչեցընեն։

Նօրֆօք դուքս կ'ելլէ. Թագաւորը դէպ ի իւր գահը կը յառաջանայ։

ՖԼԷՄԻՆԿ, ցած և կամարեալ դռնէ մը գլուխը դուրս հանելով, և ամեն կոցմ նայելով. Վեհափառ տէր. . . .

ՀԷՆՐԻ. Տէ՛գդ դարձի՛ր, ծերունի մարգարէ, բան մը չէ. . . Սկովտիոյ աղուէսին ոռնալու ձայներն են, զորոնք պիտի խափանեն Անգղիոյ առիւծին մռնչելու ձայները։

Փլէմինկ կը մտնէ։ Ա՛ն մեծ-օրէն Անգլիացւոց թողերուան ձայները կը լսուին. Հէնրի Թագաւորը իր գահը կը նստի։

ՆՕՐՖՕՔ ԴՈՒՔՍԸ, ներս մտնելով. Սըր Ճօն Սքօթ Թիրլսթէյն Սկովտիոյ դեսպանը Ձեր Վեհափառութեան ներկայանալու պատիւը կը խնդրէ։

ՀԷՆՐԻ. Նե՛րս մտցուր զան։ (Սըր Ճօն ներս կը մտնէ։) Բարի՛ եկար, Սըր Ճօն. կը տեսնենք որ պարտաւորութեանդ մէջ խիստ պատրաստ ես։

ՍԸՐ ՃՕՆ. Մանաւանդ երբ իմ իշխանիս և երկրիս համար է գործը, Վեհափառ տէր։

ՀԷՆՐԻ. Քու տիրոջդ արժանաւոր և օրինաւոր ծառայն ըլլալդ գիտենք, և ես շատ ուրախ եմ որ գքեզ պատգամաւոր կարգեցին։ Եղբօրորդիս իմ պահանջումներս ընդունած է, այնպէս չէ՞, և իր հնազանդութեանը ապացոյց՝ փոխանակ Եօրք գալու, ուր ես ութը օր իրեն սպասեցի, որպէս զի մեր երկու թագաւորութեանց քաղաքական և կրօնական շահուց վրայօք մէջերնիս և գաղտնապէս վիճէինք, այսօր դեսպան մը կը ղրկէ ինձ, և հրապարակական առեան մը կը խնդրէ։

ՍԸՐ ՃՕՆ. Վեհափառ տէր, թագաւորիս յանձնարարութիւնները իրաւացի են։

ՀԷՆՐԻ. Շատ աղէկ. . . ուրեմն կը համոզուի՞ վերջապէս Բողոքական կրօնքը ընդունելու, իւր իշխանութեան տակ գտնուող վանքերը կործանելու, և Պապը Հռոմի իբր լոկ եպիսկոպոս մը ճանչնալու։

ՍԸՐ ՃՕՆ. Վեհափառ տէր, երբորդ դարէն 'ի վեր Սկովտիա և իր թագաւորը հոգւով և սրտով Հռովմէական են. Սուրբ Պետրոսի յաջորդը միշտ Քրիստոսի փոխանորդը պիտի ըլլայ, և թագաւոր ու ժողովուրդ իրենց հարց կրօնքին ինչպէս նաև քաջութեանը հաւատարիմ պիտի մնան։

ՀԷՆՐԻ. Շատ աղէկ, կիզի մոլեռանդ ընտանեաց հետ Յակոբ թագաւորին ըրած խնամութիւնը իմ առաջին հարցմանս առաջին պատասխանը գուշակել տուեր էր ինձ։ Նաքէն պիտի իմանաք թէ ինչպէս ծանր պիտի գայ այդ ընթացքը պատերազմի և հաշտութեան կշռին մէջ։

ՍԸՐ ՃՕՆ. Կը յուսանք որ Ձեր Վեհափառութիւնը իր զօրութեան համեմատ արդար ձեռօք կշիռք պիտի բռնէ. ո՛չ մոլեռանդութեան շունչը, ոչ անձնական շահուն գրգիռները կշռին նժարները պիտի չհակեցընեն։

ՀԷՆՐԻ. Իմ ընելու որոշումս, Սըր Ճօն, աւելի ընելու պատասխանէդ կախեալ է, քան թէ արդէն բրածէդ։

ՍԸՐ ՃՕՆ. Ակնածութեամբ Ձեր Վեհափառութեան մտիկ կ՚ընեմ։

ՀԷՆՐԻ. Ուրեմն Յակոբ Ե եղբօր որդիս պիտի համոզուի՝ Սկովտիոյ թագը ինծ հարկատու ընել, ինչպէս որ ըրին 900ին իր նախնիքը իմ նախնեացս, ինչպէս որ ըրաւ Էրիք՝ Էտուար Ային, Մալքօլմ՝ Էտուար-Խոստովանողին, Գուլիէլմոս-աշխարհակալին և Գուլիէլմոս-Կարմրագունին.... ինչպէս որ ըրաւ Մալքօլմի Էտկար եղբայրը Հէնրի Ային. Էտկարի Դաւիթ յաջորդը՝ Մաթիլտ կայսրուհւոյն. Դաւիթ որդին՝ Ստեփանին. անոր Գուլիէլմոս եղբայրը և Սկովտիոյ բոլոր ազնուականները Հէնրի Բին, Րիքարտոս Ային, և Յովհաննէս թագաւորին։ Այդ հարկատուութիւնը աւելի նուիրական ընելու համար հրապարակաւ Լինքօլն լերին վրայ կատարուեցաւ, և Քանթօրպէրիի արքեպիսկոպոսի խաչին վրայ երդմնուեցաւ։ Աղէկ գիտենք որ այն հարկատուութիւնը, որ Յովհաննէս Պալիօլէն Հէնրիի Էտուար որդւոյն, և Էտուար Պալիօլէն Էտուար Գին կ՚ըլլար, Րիքարտոս Բին և Հէնրի Դին թագաւորութեան ժամանակ ընդհատեցաւ. բայց այդ ընդհատման պատճառը, ինչպէս որ դուք ալ գիտէք, Սըր Ճօն, այն երկու թագաւորաց ժամանակ Անգղիոյ մէջ տեղի ունեցած քաղաքական պատերազմներն էին. և այս բանս այնչափ ստոյգ է, որչափ դուք ալ գիտէք որ երբ անոնց յաջորդ Հէնրի Ե հրամայեց Սկովտիոյ թագաւորին որ իբր հպատակ թշնամեաց վրայ զրկած խումբին ընկերանայ, Սկովտիոյ թագաւորը հնազանդեցաւ. և Րիքարտոս Գի թագաւորութեան ժամանակ այս հարկատուութեան ընդհատումը չըլլայ թէ օրինակ բերէք.... Րիքարտոս Գ յափշտակիչ էր. ուստի ամենևին իրաւունք չունէր զան պահանջելու։ Անոր Հէնրի Ե հայրը իւր իշխանութեան մէջը յուզուած քաղաքական և կրօնական երկպառակութեամբ խիստ զբաղած ըլլալուն, այն հարկը Յակոբ Դէն չուզեց, գիտեմ. բայց ես, Սըր Ճօն, երկնային վըրէժխնդրութեան գործակալը՝ ապըստամբները իրենց արեան մէջ խեղդեցի, հերետիկոսները բոցերուն մէջ այրեցի, թշնամեաց բանակները պատերազմի դաշտին մէջ ոչնչացուցի. տեսնելով, կ՚ըսեմ, որ Հին Անգղիան չորս դարէ 'ի վեր քաղաքական պատերազմէ կը յուզուի, և հազար տարիէ 'ի վեր սխալանաց մէջ ընկղմած է, ձեռքս պիտի երկարեմ անոր, ինչպէս որ Աստուած ըրաւ խաւարին վըրայ, հանդարտութիւնը և լոյսը սահմանելու համար, այս Աստուա-

ծային պարգևները մինչև հիմա ձեզ երկնքէն կ'իջնային, բայց ես չեմ կըրնար համբերել որ միշտ այսպէս ըլլայ, և գործերը իրենց ընդհատեալ ընթացքը պէտք են նորէն առնուլ։ Սկովտիոյ ժողովուրդը հարկատու է աղնուականաց, Սկովտիոյ աղնուականները՝ Թագաւորին, Սկովտիոյ Թագաւորը՝ Անգղիոյ Թագաւորին և Անգղիոյ Թագաւորը՝ Աստուծոյ։

ՍԸՐ ՃՕՆ. Ներեցէք, Վեհափառ Տէր, եթէ այս անգամ ալ կ'ըստիպուիմ Ձեր Վեհափառութեան սպասածին հակառակ պատասխան մը տալու.... Սկովտիոյ նախնի Թագաւորաց Ձեր նախորդներուն տուած հարկը Անգղիոյ մէջ ունեցած երկիրներուն համար էր, ինչպէս որ Անգղիոյ Թագաւորները Կիւյաննայի և Նորմանտիայի դքսութեանց համար Գաղղիոյ Թագաւորաց հարկատու էին։ Ձեր Վեհափառութիւնը մեր հասարակ պատմութիւնը շատ աղէկ գիտնալով, պէտք չէ չփոթել Հընթինկթընի հարկատուութիւնը Թագաւորութեան հարկատուութեան հետ, և Նօրթըմպըրլէնտի մասնաւոր Թագաւորացը՝ ըՍկովտիոյ Թագաւորաց հարկատուութեան հետ։ Իսկ Պալլեօլի Թագաւորութեան ժամանակ պատահածէն Անգղիան չկրնար հետևութիւն մը հանել. ըստ որում մեր աղնուականները միշտ բողոքեցին այն գործին դէմ։ Ստոյգ է որ Յովհաննէս Պալլեօլ հարկատու եղաւ Էտուար Ա.ին՝ գահը ելլելու համար այս վերջինին իրեն ըրած օգնութեան փոխարէն. բայց առաւ աղնուականաց յարգը և ժողովուրդին համակրութիւնը կորսնցուց, և Յակոբ Ե Թագաւորը աղնուականներէն յարգուած և ժողովրդէն սիրուած ըլլալով չկրնար այդպիսի Թշուառութեան մը դիջանիլ։

ՀԷՆՐԻ. Ուրեմն իմ եղբօր որդիս իմ աւատապետութիւնս կը մերժէ։

ՍԸՐ ՃՕՆ. Այո՛, կը մերժէ։

ՀԷՆՐԻ. Եւ այս մերժելուն ամեն հետևութիւնները առաջուց կշռած է։

ՍԸՐ ՃՕՆ. Անոր հետևութիւնները որչափ ծանր ըլլան՝ պատրաստ է կրելու. Սկովտիոյ Թագաւորները սովորութիւն մը ունին որ ձեռքերնին Թագերնուն տանելէն առաջ սուրերնուն կը տանին։

ՀԷՆՐԻ, ուժգ եշխեցով. Ուրեմն Սըր Թիրլըթէյն, մտիկ ըրէ, մենք այդ հարկատուութիւններէն ձանձրացած ենք. մինչև այս վայրկեանս իմ պահանջածովս կրնայի գոհ ըլլալ, բայց այսու հետև ուրիշ բան պէտք է ինձ. Աստուծոյ ձեռքը մեր երկու ազգերը աշխարհիս միւս ժողովուրդներէն հեռու, դէմ առ դէմ, Ովկիանու մէջ տեղը, մի և նոյն հողին վրայ նետած բայց իրարմէ անհաւասարապէս բաժնած է՝ Թուէտի անձուկ փոսովը, որ բաւական է երկու դաւառ իրարմէ բաժնելու, բայց ոչ երկու Թագաւորութիւն. ուստի՝ հազար տարիէ 'ի վեր երկու ժողովրդոց ամենամաքուր արիւնովը երբեմն մէկ և երբեմն միւս եզերքը կը ներկուին. հազար տարիէ 'ի վեր Անգղիան Թշնամի մը ունեցած չէ որ Սկովտիոյ հետ դաշնակից չըլլայ։

հաղար տարիէ ՚ի վեր Սկովտիոյ մէջ քաղաքական պատերազմը ծագած չէ, որ Անգղիոյ մէջ ալ խռովութիւններ չյարուցանէ . մեր երկու ժողովուրդոց մէջ մայր մը ատելութիւնը իր կաթին հետ իր աղջկան կու տայ, և հայր մը իր սուրին հետ իր որդւոյն . . . . Այս ատելութիւնը մինչև վերջին դատաստանին օրը սերունդէ սերունդ պիտի տևէր, եթէ իմ միտքս չի գար որ այս ատելութիւնը իմ թագաւորութեանս ժամանակ պէտք եմ վերջացընել՝ հարկաւորութիւնը բաւական չէ, այլ աշխարհակալութիւն ընել կ'ուզեմ, և երկու պսակ ու երկու գլուխ մէկ կըղզիի համար խիստ շատ է . . . . Այսօրուանէ հաշուելով, մէկ թագաւոր Անգղիոյ և մէկ թագաւոր Սկովտիոյ չպիտի ըլլայ, այլ մէկ թագաւոր Անգղիոյ և Սկովտիոյ, և ոչ աւելի . . . . Բանակաց Աստուածը միայն կարող է որոշել թէ այդ թագաւորը Հէնրի Ը՞ պիտի ըլլայ թէ Յակոբ Ե :

ՍԸՐ ՃՕՆ . Վեհափառ տէր, բանակաց Աստուածը արդարութեան Աստուածն ալ է :

ՀԷՆՐԻ . Նու ատոր մէկ ապացոյցն ալ աչացդ առջև ունիս, Սըր Ճօն . ձախ կողմդ նայէ . այդ զինանշանը Յակոբ Դ թագաւորինն է, որ իր որդւովը, տասներկու կոմսերով և տասնուեօթը ասպետներով Ֆլօտէնի պատերազմի դաշտին մէջ ինկաւ : Անոր զրահին վրայ կրնաս որոշել անոր ընդունած վէրքը, որու մէջ երկաթը մտաւ, և կեանքը անկէ դուրս ելաւ . արդ, ահա իմ թագիս և արքայական գաւազանիս վրայ կ'երդնում, Սըր Ճօն, ինչ զրահներով որ Սկովտիան ամրացընէք, այնպիսի լայն վէրք մը պիտի բանամ, որ վերջապէս ինչ ապստամբ արիւն որ ունի՝ դուրս ելլէ սրտէն .

ՍԸՐ ՃՕՆ . Մինչև հոն հասնելնէդ առաջ, Վեհափառ տէր, պէտք է որ անոր մինչև վերջին քաղաքը կործանէք, և անոր վերջին զաւակը սպաննէք . . . Իսկ ես, ինչպէս որ Ձեր Վեհափառութիւնը վկայեց որ ես իմ պաշտօնիս խիստ արժանի եմ, յանցաւոր պիտի ըլլամ եթէ կրցածիս չափ շուտով ձեզմէ հրաման չխնդրեմ, որպէս զի երթամ, և ձեզի դէմ ելլելու առաջին զինուորաց գլուխը անցնիմ, և դուք ըսէք ինձ համար թէ իմ պարտաւորութիւնս աղէկ կը կատարեմ :

ՀԷՆՐԻ . Գնա՛ ուրեմն, Սըր Ճօն, թևէդ բռնած չունինք . Անգղիոյ թագաւորներն ալ խորհրդաւոր խօսք մը ունին, զոր երբէք մոռցած չեն . կ'ուզեմ որ ամիսը չանցած հրոյ գիրերով բաւական քաղաքաց վրայ ծփայ այն, որպէս զի Սկովտիոյ ամեն անկիւններէն աս խօսքը կարենան կարդալ ԱՍՏՈՒԱԾ ԵՒ ԻՄ ԻՐԱՒՈՒՆՔՍ . . . . Պա՛րոնայք, պատուեցէք ոչ Սկովտիոյ թագաւորին, այլ Յակոբ Ե մեր եղբօրորդւոյն դեսպանը : Էթէլվուտ, դուն հա՛ս կեցիր, քեզ խօսելիք ունիմ :

## ՏԵՍԱՐԱՆ Գ.

ՀԵՆՐԻ, ԷԹԷԼՎՈՒՏ.

ՀԵՆՐԻ. Էթէլվուտի թեւը մտնելով եւ անոր հետ պտըտելով. Տայրհէմի դուքս, ի՞նչ կ'ըսես մեր եղբօր որդւոյն այս յամառութեանը :

ԷԹԷԼՎՈՒՏ. Թագաւորի մը համար անկէ աւելի ընտիր դեսպան մը չէր կրնար ըլլալ:

ՀԵՆՐԻ. Այո՛, այո՛, Սըր Ճօն արժանաւոր Սկովտացի մ'է, որ միայն մէկ յանցանք ունի, որ է ինքզինքը Ռօպէրթ Պրուսի եւ Ուիլիամ Ուէլլէսի ժամանակները կ'ենթադրէ, եւ կը կարծէ թէ վեց դարու միջոցին մէջ սիրտերը նոյնը մնացած են, ըստ որում զանոնք ծածկող զրահները նոյն են : Նախնի ժամանակաց արձանի մը կը նմանի ան, որ աշխարհիս Ճանապարհին վրայ իբր մղոնացոյց սահման մը զետեղուած է, եւ իր քարէ աչքերովը սերունդները չտեսներ, որոնք զիրար յաջորդելով կը տկարանան.... : Ո՞ւր են Ճէյմս Տուկլասները եւ Ռանտօլֆները... : Մեր օրերը անոնք Օլիվըր Սէյնքլէր կամ Մաքսուէլ կ'անուանին.. : Ափսոսալի է ճշմարիտ. բայց դուքս, հաւատա՛ ինծ, այս պատերազմը մազերուս մէկ թելը ճերմկցընելու կարող չէ, եթէ ես անձամբ ընեմ, եւ եթէ իմ տեղս Նորֆօք կոմսը ղրկեմ: Իմ սուրս երկար եւ հաստ է, եւ չհասած տեղս՝ կը նետեմ.... : Աս բանս չէ զիս դժբաղդ ընողը, դուքս, աս բաներս չէ ամենեւին :

Թիկնաբռնով մը կ'երթայ իր նաւը :

ԷԹԷԼՎՈՒՏ. Դժբա՞ղդ կ'անուանէք զձեզ, տէր իմ, եւ ինչո՞ւ համար. դուրսը յաղթող հանդիսացաք, ներսը յաղթող հռչակուեցաք, ու Եօրքի եւ Լէնքէսթրի գժտութիւնները խեղդելէն ետեւ ձեր գահը նստաք, եւ մէկ ոտքերնիդ արտաքին պատերազմին վրայ, ու միւս ոտքերնիդ քաղաքական պատերազմին վրայ դնելով, Գաղղիոյ եւ Անգղիոյ ըսիք, ինչ որ Աստուած ծովու ալեաց կ'ըսէ. Բաւական է.... : Ներեցէք. Վեհափառ տէր, մարդկային փառասիրութիւնը պէտք է որ աշխարհէս աւելի ընդարձակ ըլլայ, ըստ որում աշխարհքով չբաւականանար մարդս :

ՀԵՆՐԻ. Ամուր շինուած նաւ մը ընկղմողը ո՛չ հողմերուն եւ ոչ ալիքներուն բարկութիւնը, ո՛չ մրրիկը եւ ո՛չ Ովկիանոսն է : Ստոյգ է որ ես մեծ եմ ու հզօր... բոլոր հպատակներս ինծմէ կը նախանձին, սակայն ես ալ շատ անգամ իմ հպատակներէս ամենէ յետինին բաղդին վրայ կը նախանձիմ:

ԷԹԷԼՎՈՒՏ. Դո՞ւք, Վեհափառ տէր :

ՀԵՆՐԻ. Այո՛, պսակ ու գաւազան ունենալը բաւական չէ. այլ սնարք մը եւս պէտք է, որու վրայ կարենամ մարդ անոնց ծանրութենէն հանգչելու. Հրապարակական կենաց քովը առանձին կեանք ալ պէտք է, ու պալատի մեծութեան քովը՝ տան երջանկութիւնը... : Շատ անգամ տեսնուած չէ՞ որ ամենէն յետին հպատակներէս մէկը կին մը եւ զաւակներ

ունենայ, որո՛նք զի՛նքը սիրե՛ն. ուրեմն իմ հպատակացս ամենէն յետինը ինձմէ աւելի երջանիկ է....

ԷԹԷԼՎՈՒՑ. Բայց միթէ Ձեր թագուհի տիկինները զձեզ չսիրեցի՞ն, Վեհափառ տէր, և անոնցմէ զաւակներ չունեցա՞ք, որո՛նք զձեզ կը սիրեն։

ՀԷՆՐԻ. Իմ թագուհի կիներս... — ո՜հ, բոլորովին դժբաղդ եմ այդ կողմէ.....։ Քաթէրին տ'Արակոն առաջին կինս հետս չամուսնացած եղբօրս նշանածն էր. այս բանս այն տարիձան խղճմտանքիս դպաւ, որ պարտաւորեցայ կնութենէ արձակել զան։ Ան' տը Պուլէն երկրորդ կինս իւր վարմունքովը անկողինէն գլխատութեան բեմին վրայ ելաւ։ Ժան' Սէյմուր երրորդ կինս երկինքէն իջած հրեշտակի կը նմանէր, բայց երկինքը նախանձելով յափշտակեց զան ինձմէ։ Ան' տը Քլէվ չորրորդ կնոջս համար գեղեցիկ և շնորհալի է ըսելով, ու Հօլպէյնի պատկերը ցուցընելով, ամուսնացուցին զիս անոր հետ։ Սակայն ան իր սխալմունքը ճանչնալով՝ ինձ քոյր կոչուելու գոհ եղաւ։ Իսկ հիմա, իմ չորս ամուսնութիւններէս ինչ շահեցայ, բայց եթէ քանի մը օրուան երջանկութիւն, քսան տարուան խղճմտանքի անհանգստութիւն, ամօթ և կամ վիշտ. ասոնցմէ միայն երկու աղջիկ ունեցայ, զորո՛նք օրէնքը թագաւորելու անկարող կ'ընդունի, և մէկ տղայ զաւակ մը, որուն համար Աստուած ապրելու անկարող ըլլալը իմացուց։

ԷԹԷԼՎՈՒՑ. Վեհափառ տէր, տակաւին խիստ երիտասարդ էք, և վերստին ամուսնանալով մինչև ցարդ ունեցած պակասութիւննիդ կրնաք լեցընել։

ՀԷՆՐԻ. Այո՛, գիտեմ, ու միւս անգամ մ'ալ այդ փորձը փորձելու պիտի ելլեմ. Բայց աս անգամ, ճշմարիտ կ'ըսեմ որ իշխաններուն կամ թագաւորաց պալատներուն մէջ պիտի չփնտռեմ այդ կինը։ Ամուսնութեանցս պատճառաւ Եւրոպայի մէջ ծագած պատերազմներէն ձանձրացած եմ. Քաթէրին տ'Արակոնը կնութենէ արձակելս Սոորին Նահանգաց, Սպանիոյ, և կայսերութեան դէմ պատերազմներ յարոյց. Ան' տը Քլէվը արձակելուս համար՝ Հէյնօլթ, Ֆլըանտր, և գուցէ Գաղղիա ալ իմ վրաս յարձակին....։ Իմ երկիրս ծովերուն մէջ տեղը զետեղուած, զօրաւոր, և առանձին ըլլալուն՝ ո՛ր և իցէ ազգակցութիւն մը իմ զօրութիւնըս չկրնար աւելցնել։ Իմ զօրութիւնս իմ վրաս է, և ինձ ուրիշ բան պէտք չէ, բայց եթէ կին մը, որ երիտասարդ ըլլայ, որպէս զի կարենամ սիրել զան, գեղեցիկ ըլլայ, որպէս զի կարենայ ինձ հաճելի ըլլալ, և խոհեմ, որպէս զի անոր վրայ կարենամ վստահիլ. Ի՛նչ աստիճան ընտանիքէ կ'ուզէ ըլլայ՝ հոգս չէ։ Հասարակ ժողովրդեան մէջէն երկու առաջին պաշտօնեայ կոչած եմ, մէկը մսավաճառի ու միւսը երկաթագործի խանութէն. նոյնպէս ժողովրդեան ծոցէն կ'ուզեմ թագաւորազուն իշխան մը հանել։

ԷԹԷԼՎՈՒԴ. Բայց այդ երիտասարդութեան, գեղեցկութեան, և անմեղութեան գանձը Զեր Վեհափառութիւնը ո՞ր երկրին մէջ կը յուսայ գտնել։

ՀԷՆՐԻ. Թէեւ ըսածնին ստոյգ է, սիրելիդ իմ դուքս, զան փնտռելու համար կղզիէն դուրս ելլելու հարկաւորութիւն չունիմ։

ԷԹԷԼՎՈՒԴ. Անտարակոյս Հին Անգղիոյ պաշտպան ոգին ամրութեան մէկ անկեան մէջ պահած է այդ նախասահմանեալ կոյսը, կամ Ֆինկալի այրին և կամ Սթաֆֆայի սարին մէջ։

ՀԷՆՐԻ. Ո՛չ, դուքս, իր բաղդը որչափ որ ապառնիին մէջ պիտի փայլի, անցեալին մէջ այնչափ փառաւոր չէ...։ Այդ աղջիկը ծնողք չունենալուն՝ պառաւ սնուցիչ մը զան մեծցուցած է, և Լոնտոնէն երեք ժամ հեռու՝ Թամիզի եզերքը բաւական աղեղ երևոյթով տան մը մէջ կը բնակի։

ԷԹԷԼՎՈՒԴ. Վեհափառ տէր.... արդեօք այդ երիտասարդ աղջկան անունը քաղաքական այնչափ խորունկ և այնչափ մեծ գաղտնի՞ք մ'է, որ իմ անարժան աչքերս....

ՀԷՆՐԻ. Ո՛չ, պարոն, և որպէս զի այս գործին մէջ օգնես ինծի, պէտք է որ ճանչնաս զան....։ Անոր անունը Քաթէրին Հօուարտ է։

ԷԹԷԼՎՈՒԴ, (Յեւաթոսի մը կրկնելով). Քաթէրին Հօուա՞րտ ըսիք....

ՀԷՆՐԻ. Այո՛, դուքս... (ժպտելով։) Խիստ անծանօթ անուն մի է աս, այնպէս չէ՞.... այնպէս անծանօթ որ հազիւ Փլէմինկ իմ ալքիմիագէտս կարող եղաւ թագաւորութեանս արձանագրութեանց մէջ ստորագրուած տասն ու երկու միլիոն ժողովրդեան մէջ գտնելու։

ԷԹԷԼՎՈՒԴ. Եւ ինչպէս Փլէմինկ գտաւ զան...

ՀԷՆՐԻ. Խիստ պարզ կերպով մը, առանց կախարդութեանց և գիւթութեանց գիմելու. Լոնտոնի շրջականները իր քիմիական գործողութեանց համար չեմ գիտեր ինչ հարկաւոր տունկ մը փնտռելու ատեն՝ անձրեւէ մը բռնուելով, այս երիտասարդ աղջկան տունը ապաստանարան մը խնդրեր է։ Այնպիսի անգին գանձին վրայ զմայլելով ու իմ գիտաւորութիւններս ճանչնալով, 'ի դարձին՝ անոր վրայօք ինծի խօսեցաւ. աչխատելով և աստղները հաշուելով, գտեր էր թէ ինծի պէտք եղած երիտասարդ, գեղեցիկ, և խոհեմ կինը աս է, և յիմար ծերունին կը հաստատէ թէ այս երեք յատկութիւններն ալ ունի այն անձը....

ԷԹԷԼՎՈՒԴ. Եւ Զեր Վեհափառութիւնը այնպիսի յիմար ծերունիի մը խօսքովը այսպիսի մեծ գործի մը որոշո՞ւմ տուաւ։

ՀԷՆՐԻ. Ո՛չ, դուքս Տայրհէմ. քանզի Ան՝ տը Քլէվի հետ պատահած դիպուածը զիս բոլորովին անվստահ ըրաւ, և առանց առնելու կնոջս արժանաւորութիւնը ճանչնալու, իմ արքայական սէրս դրաւի տակ չեմ դներ....։ Ուստի երէկ խորհրդարանէն ելլելէս ետև՝ նախնի ասպետական

զգեստներ հագնելով, ու ծերունի քիմիագէտիս տունէն իյնալով, առանց զէնքի և առանց ծառայ մը առնելու մակոյկով մը Թամզի վրայէն մինչև մեր տիկնոջ բնակած կողմը գային....

ԷԹԷԼՎՈՒՏ. Ե՛տքը....

ՀԷՆՐԻ. Պառաւ կնոջ թեւին վրայ կռթնած տեսանք զան, որ տխուր և մտատանջութեան մէջ գետին եղերքը կը ճամփառէր, կարծես թէ իր բարձր բաղդին վրայ նախազգացութիւն մը ունէր....

ԷԹԷԼՎՈՒՏ. Ու Փլէմինկի ըսածը ստո՞յգ էր....

ՀԷՆՐԻ. Այո՛, Փլէմինկ իրաւունք ունի եղեր... տէր իմ, Ան՝ տը Պուլէնի գեղեցկութիւնը և Ժան՝ Սէյմուրի ազնուութիւնը անոր վրայ տեսայ....

ԷԹԷԼՎՈՒՏ. Հետը խօսեցա՞ք, Վեհափառ տէր....

ՀԷՆՐԻ. Ո՛չ, դուքս. վասն զի երբ նայեցաւ որ մենք դէպ 'ի իր կողմը կը թիավարենք, հեռացաւ անկէ...: Միտք ունէի այսօր կամ վաղը երթալ նորէն տեսնել զան... բայց Սկովտիոյ դէմ բացուած պատերազմը ընտխպողական ընելով, ամենեւին պարապ ժամանակ չունիմ. ուստի ես չի պիտի կրնամ երթալ, այլ դուն որչափ ուղեկից որ կ'ուզես՝ պալատականացս մէջէն առ հետդ, և գնա այն երկտասարդ աղջիկը Մարգարիտ իշխանուհի քրոջս քովը բեր, որ ըստ իմ յանձնարարութեանս իր շքադիր կանանց մէջ պիտի ընդունի զան:

ԷԹԷԼՎՈՒՏ. Ձեր Վեհափառութիւնը քիչ մը միջոց պիտի չթողու՞իր Ան՝ տը Քլէվի հետ ամուսնութեան լուծմանը և Քաթէրին Հօուարտի հետ ամուսնութեանը մէջ:

ՀԷՆՐԻ. Ան՝ տը Պուլէնի գլխատութեան բեմին վրայ ելլելէն մինչև Ժան Սէյմուրի գահը ելլելը քանի՞ օր անցաւ:

ԷԹԷԼՎՈՒՏ. Մարմինը պատելու և գերեզմանին մէջ տեղաւորելու համար երեք օր պէտք եղաւ:

ՀԷՆՐԻ. Նորիսի անհնազանդութենէն մինչև անոր այս ընթացքին համար մահուան հրաման տալս քանի՞ ժամ տևեց:

ԷԹԷԼՎՈՒՏ. Լորտ դիւանադպրին Լոնտոնի աշտարակէն մինչև Կրինուիչի պալատը երթալը երկու օր տևեց:

ՀԷՆՐԻ. Ու այդ հրամանը յայտնուելէն մինչև յանցաւորին մահը քանի՞ մանրերկրորդ անցաւ:

ԷԹԷԼՎՈՒՏ. Դահիճին իր կացինը վերցնելու և զարնելու համար մէկ մանրերկրորդ անցաւ:

ՀԷՆՐԻ. Ճիշտ այդպէս է, դուքս, կը նայիմ որ թագաւորութեանս պատմութիւնը կատարեալ գիտես...: Ուրեմն իմացիր ինչ ըսել կ'ուզեմ:

Գուստաւ Նէլլէ.

## ՏԵՍԱՐԱՆ Բ.

ԷԹԷԼՎՈՒՏ. Ետքը՝ ՓԼԷՄԻՆԿ.

ԷԹԷԼՎՈՒՏ. Վայրկեան մը շուարած մնալէն ետեւ՝ կ'երթայ դէպ 'ի Փլէմինկի

դուռը, ուժով մը հունչով կը բանայ․
Ֆլէմինկ․․․ Ֆլէմինկ․․․

ՖԼԷՄԻՆԿ, իւր գործարանին մէջէն․
Ո՞վ է ան․․․

ԷԹԷԼՎՈՒՏ․ Դո՛ւրս ելիր որջէդ, աղուէ՜ս խորամանկ․․․ լոյսին եկու, անհաւատ մարդ․․․․ քրիստոնեայ մը կ՚ուզէ հետդ խօսիլ․․․

ՖԼԷՄԻՆԿ, դուրս ելլելով․ Ի՞նչ կը հրամայէք, տէր իմ․

ԷԹԷԼՎՈՒՏ․ Թագաւորին քովէն կու գամ։

ՖԼԷՄԻՆԿ․ Աստուած պահէ զան․․

ԷԹԷԼՎՈՒՏ, իր գծխարկը հանելով․ Այո՛, ամեն բարի Անգղիացիին իղձը այդ է։

ՖԼԷՄԻՆԿ․ Ես ալ ամեն անգամ որ աչքս ու խորհրդածութիւններս երկինքէն երկրի վրայ կը դարձընեմ՝ այս ուխտը կ՚ընեմ Աստուծոյ։

ԷԹԷԼՎՈՒՏ․ Շատ աղէկ, վարպետ․․․։ Բայց Նորին Վեհափառութիւնը կ՚ըսէ թէ ոչ միայն իրեն համար ուխտեր կ՚ընես, այլ իր ուխտերն ալ կատարելու համար անձնանուիրութիւններ ընելու կը փորձես։

ՖԼԷՄԻՆԿ․ Ասամբ ստացած տըկար գիտութիւնս Նորին Վեհափառութեան հրամանին յանձնած եմ․ ըստ իւր թագաւորական կամացը կըրնայ կարգի դնել զայն։

ԷԹԷԼՎՈՒՏ․ Միայն թէ իւր թագաւորական կամքն ալ փոխադարձաբար քու կարգադրութեանդ յանձնէ, այնպէս չէ՞, որպէս զի սկսած գործդ լըմնցընելու համար քու անիծեալ ձեռացդ հարկաւոր եղած ոսկին մատակարարէ քեզ․

ՖԼԷՄԻՆԿ․ Իրաւունք ունիս․ լուծելով միայն մարդ կարող է բաղադրութիւնը գտնալ․․․։ Մարդս երբ Աստուծոյ գաղտնիքը իմանայ, անոր պէս հզօր կ՚ըլլայ․․․։ Դուքս, շատ չանցնիր՝ մեծ գիւտ մը պիտի հանեմ․

ԷԹԷԼՎՈՒՏ․ Եւ այդ գիւտին համար ոսկւոյ աղբիւրներ պէտք են, այնպէս չէ՞․․․․ ինչպէս որ գետերու գետակներ պէտք են, և ովկիանոսին ալ գետեր։

ՖԼԷՄԻՆԿ․ Այո՛, մեծ քանակութեամբ պէտք է, տէր իմ․

ԷԹԷԼՎՈՒՏ․ Եւ կարծես թէ երիտասարդ, գեղեցիկ, և առաքինի կին մը գտնելուդ համար՝ Հէնրին քեզ բաւական եղած ոսկին պիտի տայ․․․

ՖԼԷՄԻՆԿ․ Այո՛, վասն զի ամեն անգամ որ զաւազանովս անոր զահին զարնեմ, ինչպէս որ Մովսէս ժայռին վրայ, մէկին տեղը երկու աղբիւր պիտի բղխեցընեմ։

ԷԹԷԼՎՈՒՏ․ Բայց քու ոսկւոյ ծարաւդ արգելք կ՚ըլլայ քեզ որ գլուխդ բերելու ձախորդութեանց հաշիւը չես ըներ, ու Հէնրիի պէս թագաւորի մը ամուսնութեան այնպիսի վտանգաւոր միջնորդութեան մը մէջ մտնելու կը համարձակիս, որ իւր առած չորս կանանց երկուքը արձակեց ու մէկը գլխատել տուած է։

ՖԼԷՄԻՆԿ․ Ես իմ անձնասիրութեանս ձայնին հնազանդեցայ, որ կ՚ըսէր ինծ թէ "Ըրէ աս բանը"։

ԷԹԷԼՎՈՒՏ․ Եւ արդեօք խոհեմութեանդ ձայնը չյիշեցուց քեզ Վօլսէյի և Նորիսի դժբաղդութիւնը․

ՓԼԷՄԻՆԿ. Տէ՛ր իմ, այս անգամ գործերը այն աստիճան դժընդակ վերջ մը պիտի չունենան ։

ԷԹԷԼՎՈՒՏ. Նու ո՞վ ըսաւ քեզ այդ բանը ։

ՓԼԷՄԻՆԿ. Գիտութիւնը ։

ԷԹԷԼՎՈՒՏ. Աղէկ գիտցիր, գիտո՛ւն Ֆլէմինկ, որ գիտութիւնը ըզքեզ խաբեր է ։

ՓԼԷՄԻՆԿ. Ի՞նչպէս ։

ԷԹԷԼՎՈՒՏ. Այն ամուսնութիւնը չպիտի ըլլայ...

ՓԼԷՄԻՆԿ. Ինչո՞ւ ։

ԷԹԷԼՎՈՒՏ. Վասն զի քու հաշիւներուդ իբր հիմն որոշած անձդ... Քաթէրինը...

ՓԼԷՄԻՆԿ. Ի՞նչ ըսել կ'ուզէք ։

ԷԹԷԼՎՈՒՏ. Քաթէրին Հօուարտ անունով երիտասարդ աղջիկը թագաւորին հետ ամուսնացընել կ'ուզես, այնպէս չէ՞ ։

ՓԼԷՄԻՆԿ. Այո՛ ։

ԷԹԷԼՎՈՒՏ. Ան իմ կինս է ։

ՓԼԷՄԻՆԿ. Կորսուեցա՛յ.... գըթացէք ինձ, տէր իմ ։

ԷԹԷԼՎՈՒՏ. Այո՛, Ֆլէմինկ, կորսուած ես... Ան' տը Պուլէնի մահուանէ ետև Հէնրիին տուած օրէնքը գիտե՞ս...

ՓԼԷՄԻՆԿ. Այո՛,

ԷԹԷԼՎՈՒՏ. Այն օրէնքը նոյն գլխատութեան արժանի կ'ընէ թէ՛ այն թագուհին, որ թագաւորին անարժան ըլլալը չխոստովանիր, և թէ ո՛ր և իցէ անձը, որ այս ամուսնութեան միջնորդ եղած է.... Ուրեմն երիտասարդ, գեղեցիկ, և առաքինի նշանած մը խոստացար անոր, այնպէս չէ՞.... Քաթէրին ալ երիտասարդ, գեղեցիկ, և առաքինի է. բայց կը կարծես թէ Քաթէրին տ'Արակոնի դատաւորը և Ան' տը Պուլէնի դահիճը այդ առաքինութեամբ գոհ կ'ըլլա՞ն ։

ՓԼԷՄԻՆԿ. Ամենբան խոստովանեցէք անոր, տէր իմ, և ան ձեզ կը ների ։

ԷԹԷԼՎՈՒՏ. Այո՛, և իբր 'ի գրաւ իր ներողութեանը, Տայրհէմի դքսուհին Մարգարիտ իշխանուհւոյն շքադիր տիկինը կ'ընէ, և դուքսը Հայլէնտ կը ղրկէ որ հոն պատերազմ ընէ.... Ո՛չ, Ֆլէմինկ, այդ բանը չպիտի ըլլայ ։

ՓԼԷՄԻՆԿ. Տէր իմ, տէր իմ, ներեցէ՛ք ինձ ։

ԷԹԷԼՎՈՒՏ. Ներե՛մ քեզ, թշուառական... քեզ, որ քու անխոհեմութեամբդ բոլոր կենացս յոյսը կտրեցիր... քե՛զ գթամ, որ իմ ոսկեգոյն օրերուս վրայ սև քօղ մը քաշելու աշխատեցար.... Նու ո՞վ պիտի գթայ ինձ, ո՛վ Աստուած ։

ՓԼԷՄԻՆԿ. Աշխատինք, տէր իմ, փնտռե՛նք, գուցէ այնպիսի հնարք մը կը գտնենք, որ թէ՛ քու երջանկութիւնդ և թէ՛ իմ կեանքս պահէ ։

ԷԹԷԼՎՈՒՏ. Մէկ հնարք մը միայն կայ ։

ՓԼԷՄԻՆԿ. Ի՞նչպէս ։

ԷԹԷԼՎՈՒՏ. Բայց խիստ վտանգաւոր է ։

ՓԼԷՄԻՆԿ. Հոգ չէ ։

ԷԹԷԼՎՈՒՏ. Յուսահատական հընարք մի է ։

ՖԼԷՄԻՆԿ. Ըսէ՛ք, տէր իմ:

ԷԹԷԼՎՈՒՏ. Թագաւորը ինծի յանձնեց որ երթամ Քաթէրինը իր պալատը բերեմ:

ՖԼԷՄԻՆԿ. Ե՞րբ։

ԷԹԷԼՎՈՒՏ. Վաղը։

ՖԼԷՄԻՆԿ. Ո՛վ Տէր Աստուած։

ԷԹԷԼՎՈՒՏ. Թագաւորը պէտք չէ որ միւսանգամ տեսնէ զան....

ՖԼԷՄԻՆԿ. Ո՛չ, քանզի կը սիրէ զան... և մենք կորսուած ենք ան ատեն....

ԷԹԷԼՎՈՒՏ. Ուրեմն..... աս գիշեր պէտք է որ Քաթէրին մեռնի։

ՖԼԷՄԻՆԿ. Տէր իմ, խիստ ազդու թոյներ ունիմ....

ԷԹԷԼՎՈՒՏ, անոր թեւէն բռնելով. Ընկերա՛....

ՖԼԷՄԻՆԿ. Ներեցէք, տէր իմ..

ԷԹԷԼՎՈՒՏ. Միայն թագաւորին և ժողովրդեան համար թող մեռնի... բայց ինծի համար, կ'իմանա՞ս, ինծի համար պէտք է որ ապրի, այո՛, պէտք է որ ապրի..... և դուն անոր կենացը երաշխաւոր պիտի ըլլաս....

ՖԼԷՄԻՆԿ. Մարդկային գիտութեան կարելի եղածը կ'ընեմ, տէր իմ:

ԷԹԷԼՎՈՒՏ. Թո՞յն ունիս ըսիր...

ՖԼԷՄԻՆԿ. Այո՛։

ԷԹԷԼՎՈՒՏ. Մահացու ըմպելիքին տեղը քնաբեր հեղուկ մը չե՞ս կրնար տալ ինծի....: Այնպիսի տունկեր չկա՞ն, որոնց հիւթը արեան շրջագայութիւնը երակներուն մէջ կասեցընէ, սիրտը պաղեցընէ, ու կենդանութեան ընթացքը ժամանակ մը կասեցընէ.....: Ըսէ՛ ինծի, չե՞ս կրնար քունը մահուան այնպէս նմանի, որ ամենէն փորձառու աչքը անգամ խաբուի: Մտածէ՛, խորհէ՛ անգամ մը։

ՖԼԷՄԻՆԿ. Կարելի է, տէր իմ. ժամանակագրութեան մը մէջ կարդացեր եմ թէ Մօնթէկիւ դերդաստանէն երիտասարդ աղջիկ մը այսպիսի միջոցաւ....

ԷԹԷԼՎՈՒՏ. Ատոնք ինծի հոգ չեն. դուն պիտի կրնա՞ս այսպիսի հեղուկ մը բաղադրել։

ՖԼԷՄԻՆԿ. Կատարեալ կերպով, տէր իմ:

ԷԹԷԼՎՈՒՏ. Անոր հետեւութեանը երաշխաւոր կ'ըլլա՞ս.

ՖԼԷՄԻՆԿ. Կեանքս երաշխաւոր կը դնեմ:

ԷԹԷԼՎՈՒՏ. Թէ որ այս խոստացածդ կատարես, Ֆլէմինկ....

ՖԼԷՄԻՆԿ. Այո՛, կը կատարեմ:

ԷԹԷԼՎՈՒՏ. Քիչ մը առաջ կ'ըսէիր թէ ոսկիի հարկաւորութիւն ունիս, վստահ եղիր, որ այն հեղուկին փոխարէն՝ տարուան մը միջոցին փուռերուդ մէջ ձուլել կրցածէդ աւելի ոսկի կու տամ քեզ:

ՖԼԷՄԻՆԿ. Եկէ՛ք, տէր իմ, գործատունս իջնանք:

ԷԹԷԼՎՈՒՏ. Բայց մէկ ժամէն պէտք է որ պատրաստ ըլլայ:

ՖԼԷՄԻՆԿ. Մէկ ժամէն ըմպելիքը առած կը մեկնիք ասկէ:

ԷԹԷԼՎՈՒՏ, դատիկոնին վերջին ոտքին վրայ կենալով. Կեցի՛ր, Ֆլէմինկ.. ըսածս հասկըցա՞ր... աս գործիդ մէջ կամ կեանքդ պիտի շահիս և կամ մահդ....

ՓԼԷՄԻՆԿ. Կեանքս ձեր ձեռքն է, տէր իմ:

ԷԹԷԼՎՈՒԴ. Բաւէ հիմա:

Մէկ կողմ կ'երթան:

## ԵՐԿՐՈՐԴ ՊԱՐԿԵՐ

*Կողմնակի դառնալով Քաթէրինի սենեակը. Ներքին կողմը ուրիշ դուռ մը, ուրկից դաշտը կ'երևի: — Մէկ կողմը պատուհանով զարդարուած փոքրիկ սեղան մը. անոր դիմացի կողմը զարդասեղան մը՝ վրան Վենետկեան հայելիով մը:*

### ՏԵՍԱՐԱՆ Ե.

ՔԱԹԷՐԻՆ, ՔԷՆԷՏԻ.

*Քաթէրին իր սնուցչին թևին վրայ կռթնած ներս կը մտնէ:*

ՔԷՆԷՏԻ. Այսպէս շուտով տո՞ւն պիտի դառնանք, զաւակս.

ՔԱԹԷՐԻՆ. Այո՛, սնուցիչս, վասն զի ժամանակը անցած է:

ՔԷՆԷՏԻ. Արևը հազիւ մայրը կը մտնէ, և այս ժամուս հորիզոնը շքեղ կ'երևի, ու լերան տեսքը զուարճալի:

ՔԱԹԷՐԻՆ, *ժպտելով*. Այո՛, շքեղ է... բայց մի և նոյն արևը և մի և նոյն հորիզոնն է որ ես երէկ տեսայ:

*Կը նստի:*

ՔԷՆԷՏԻ. Դարձեալ տրտմութիւնը պատեց քեզ...

ՔԱԹԷՐԻՆ. Ո՛չ, Քէնէտի, բայց ձանձրութիւն մը եկաւ վրաս:

ՔԷՆԷՏԻ. Այո՛, խեղճ զաւակ, այդ ձանձրութիւնն է որ քու այտերդ կը գունատէ, աչքերդ կը թառամցընէ, և ոյժդ կը կտրէ...: Բայց ըսէ ինձ՝ ինչպէս այս գեղեցիկ, կանաչագեղ, և շքեղազարդ դաշտին մէջ կարելի է որ ձանձրանաս:

ՔԱԹԷՐԻՆ. Երթէ այսօր առաջին անգամ տեսած ըլլայի զան, անշուշտ գեղեցիկ պիտի երևար ինձ... բայց տասն և ութը տարիէ 'ի վեր ամեն օր կը տեսնեմ զան:

ՔԷՆԷՏԻ. Երկու այդչափ միջոցէն աւելի է որ ես հոս եմ, բայց տակաւին ձանձրացած չեմ. պատճառը՝ վասն զի անփառասէր ողորմելի կին մը ըլլալուս՝ ստանալ չկրցած երջանկութիւն մը գտնելու եռանդ եղած չեմ:

ՔԱԹԷՐԻՆ. Այսու ամենայնիւ, սնուցիչ իմ, մեր ստանալ չկրցածէն անդին եղածը աւելի պայծառ ըլլալ պէտք է....: Ո՛հ, Լոնտոն.... խիստ շքեղ քաղաք մի է կ'ըսեն: Ե՞րբ պիտի երթամ արդեօք Լոնտոն բնակելու, ո՛վ Աստուած իմ....

ՔԷՆԷՏԻ. Օր մը պիտի ամուսնանաս, զաւակս, գեղեցիկ և առաքինի ըլլալովդ անշուշտ հարուստ և ազնուական ամուսին մը պիտի գտնես.

ՔԱԹԷՐԻՆ, *աշխուժիւ*. Այո՛, իրաւունք ունիս.... և անատեն Լոնտոնի մէջ պալատներ պիտի ունենանք.. Թամիզի վրայ նաւակներ, ձեռքս բաղէ բռնած որսորդութեան երթալու

համար անտառներ.... ծառաներ և մանկլաւիկներ ունենէս պիտի գան..: Դուն ալ հետս պիտի ըլլաս... մէկ տեղ երկիրներս պիտի պտըտինք... մեր հպատակները դէմդ պիտի պատուեն.... և անատեն ամենէն պիտի չձանձրանամ, անատեն գեղեցիկ, հարուստ, և զօրաւոր պիտի ըլլամ, ու 'կ'ուզեմ' ըսելուս պէս՝ ամեն մարդ պիտի հնազանդի:

ՔԷՆԷՏԻ. Շատ զարմանալի աղջիկ մ'ես....

ՔԱԹԷՐԻՆ. Եթէ գիտնայի, Քէնէտի, որ ես այս փոքրիկ առանձնակեաց տան մէջ.... այս հեղձուցիչ պատերուն մէջ.... այս զգեստներով ու այսպէս պարզ կարասիներով պիտի մնամ միշտ.... աւելի աղէկ կ'ուզէի մեռնիլ, միայն թէ մարմարաշէն դամբանի մը մէջ դնէին զիս....

ՔԷՆԷՏԻ. Այնպիսի օրեր ունիս, զաւակս, որ երևակայական ցնորքներովդ զիս կը սոսկացնես....: Հաւատա ինձ, աղէկ չես ըներ այդպէս մտմըտուքներու տալ ինքզինքդ:

ՔԱԹԷՐԻՆ. Սիրելիդ իմ Քէնէտի, իմ միակ երջանկութիւնս մտմտուքներս են, և ցնորքներս՝ իմ միակ հաճըտութիւնս... ուրեմն աղւոր թող զիս...

ՔԷՆԷՏԻ. Այո, կ'իմանամ, մինակ մնալ կ'ուզես, որպէս զի ինքզինքդ քու այլանդակ մտատանջութեանցդ մէջ ընկղմես....: Տարի մը կայ՝ կը նայիմ որ իմ ներկայութիւնս դքեզ կը նեղէ, ու կը ձանձրացընէ:

ՔԱԹԷՐԻՆ. Կը սխալիս, սիրելի մայրս, և իրաւունք չունիս այդ խօսքը ըսելու.... բայց ինչ ընեմ. մինակ մնալուս պէս՝ ականջներուս տարօրինակ ձայներ կու գան... աչացս այլանդակ երևոյթներ կ'երևին....: Ան ատեն՝ ամեն բան առջևս պայծառ կ'երևի, ու կենդանութիւն մը կ'առնու... անատեն երևակայութիւններըս կ'արթննան ու բարձր խորհուրդներ կ'ըստեղծեն մտացս մէջ.....: Այնպիսի լուսաւոր սանդուղ մը կը նկատեմ առջևս, որուն մէկ ծայրը երկրի վրայ կը հանգչի, ու միւսը երկինքին կը դպչի, և անոնց իւրաքանչիւր աստիճաններուն վրայ նայուածքս կը շրջեցընեմ....: Արծարծուած կրակին մէջ հրային ոգիներ կ'երևին ինձ, որոնք իրարու հետ խաղալու ատեն անթիւ կայծեր կը հանեն...: Մեր այս պատուհաններուն տակը հոսած ջուրին մէջ ջրային ոգի մը կայ, որ ամեն անգամ երևնալուս՝ իբր քոյր կը բարևէ ինձ....: Իրիկուան քաղցրաշունչ զեփիւռը օդային ոգիներ կը տարածէ առջևս, որոնք հերացս մէջ կը մտնեն....: Նաև այս հրային, ջրային, ու օդային ոգիները ականջիս կը մրմնջեն... ո՛հ, այնպիսի խօսքեր կը խօսին, որ զիս խենթընեն....

ՔԷՆԷՏԻ. Ի՛նչ երջանիկ է այն տարիքը, որ մարդ իր աչքը գոցելուն պէս՝ այդպիսի հրաշքներ կը տեսնէ.. և ցնորքներով ճշմարտութեան վրայ կը մխիթարուի...: Քնացիր ուրեմն, զաւակս, գիշերը ցորեկէն աղէկ է...: Բայց զգուշացիր. երիտասարդ աղջ-

կանց երազին կամ քունին մէջ այցելութիւն ընող դևերուն մէջ ամենէն վտանգաւորը և ամենէն դժուարավանելին փառասիրութիւնն է ։

ՔԱԹԵՐԻՆ. Քենէտի, իմ տեսածս դև չէ, այլ հրեշտակ մը... և խիստ գեղեցիկ ու յանկուցիչ հրեշտակ մը....։ Ան ինձ երկնից թագաւորը կ'երևի.... քանզի ոսկեղէն թևեր ունի ու գլուխը պսակ մը ։

ՔԵՆԷՏԻ. Աննաս բարեաւ, ազնիւ օրիորդս ։

ՔԱԹԵՐԻՆ. Երթաս բարեաւ, Քենէտի ։

ՔԵՆԷՏԻ. Աննաս բարեաւ, ո՛վ երազող աղջիկ. քեզ ոգիներու, երևոյթներու, և ճիւաղներու մէջ կը թողում ։

## ՏԵՍԱՐԱՆ Զ.

*ՔԱԹԵՐԻՆ՝ առանձին կը մնայ. ու Քենէտիին ետևէն դուռը գոցելով. կ'երթայ ուրիշ մը կը բանայ ։*

Գնա՛, ազնիւ սնուցիչս, գնա՛, ու թող զիս որ բանամ այս դուռը, ուրկէց իմ ամեն ցնորքներս կը մըտնեն ու կ'ելլեն ։ Էթէլվուտ աս իրիկուն պիտի գա՞յ արդեօք ։ Այս առտու 'Գուցէ' ըսաւ.... գուցէն միշտ այս ըսել է ։ Ո՜րչափ շատ կը սիրէ զիս....։ Սակայն՝ թէոր կը սիրէ, ինչո՞ւ ինձմէ գաղտնիք կը պահէ. ինչո՞ւ իր անունը, իր արիւնը, ու տիտղոսը ինձմէ կը պահէ ։ Երբ սիրոս անոր տուի, բոլոր անձս ալ մէկտեղ տուի, ոչ գիշերներս ցորեկներէս զատեցի, և ոչ անոր համար ժամեր որոշեցի, այլ ըսի անոր. 'Ահա՛ բոլոր անձս քուկդ է', Ո՛հ, աս ինչ տանջանք է որ մարդ իւր սիրած անձը իր բաղկացը մէջ առնու, և անոր՝ ո՛վ ըլլալը չգիտնայ, յուսայգուցէ յիմար ցնորքներով իր խելքը կորսնցընէ, իւր երիտասարդուե գեղեցիկ և ուրախ տարիքը տառապանաց և առանձնակեցուե մէջ մաշեցընէ, այս ճըգնաժամին սահմանել վախճանը չգիտնայ, ու միայն աս խօսքէն զատ ուրիշ պատասխան մը չլսէ. 'Քիչ ժամանակէն, քիչ ժամանակէն'։ Ամեն բան այս բառիս մէջ կը կորսուի, որն որ իմ կենացս առջև անդադար անդունդ մը կը փորէ ։ Առտու կ'ըլլայ, և կը յուսամ թէ ամեն բան պիտի իմանամ, բայց առանց բան մը հասկընալու իրիկուն կ'ըլլայ ։ Ողորմելի գերիի ու բանտարկեալի մը պէս զիս հոս պահելով, միայն քանի մը ժամ կ'անցընէ իմ քովս. բայց թէ այս քանի մը ժամերը ուրիշ սիրահարէ՞ մը կը գողնայ, ինձ յայտնի չէ ։ Ու ահա այս վայրկենիս, որ բոլոր քաղաքաց զուարճութիւնները կ'ըսկսին, ես տխուր և առանձին մնալով՝ իմ սիրականիս կը սպասեմ, որ գուցէ չգայ, սիրական մը, որ բարձր աստիճաններ և տիտղոսներ ունի, ո՛հ, ստոյգ գիտեմ... բայց ինձ չիտար նոյն աստիճաններէն և տիտղոսներէն....։ Այսու ամենայնիւ եթէ հիմա անոր հետ Լոնտոն գտնուէի, փոխանակ տակաւին քունս չեկած բռնի քնանալու համար այս նուաստ, պարզ, և չնչին

Գգեստներս հանելու, զարդասեղանիս առջեւը կը նստէի.... ։ (Հայելիին մը առջեւ կը նստի ։) Այս գոհարանոցայ մէջէն անոր տուած ինձ համար անպիտան գոհարներէն ամենէն ծանրն կ՚որոշէի ։ (Գոհարանոցները կը բանայ ։) Այս մարգարտեայ մանեակը պարանոցս կը դնէի, այս ադամանդ օղերը՝ ականջս, և այս ապարանջանները՝ ձեռքս ։ Մազերս զարդարող այս պարզ ծաղիկներուն մէջ այս ադամանդեայ հասկերը կը տեղաւորէի, և այս ականակուռ գօտին մէջքս կապելով, խիստ վայելուչ պիտի երևէի ։ Ո՛ւր որ երթայի՝ մանկլաւիկ մը առջևէս պիտի վազէր, լուսաւոր սրահներու դռները պիտի բանար, և երբ մարդոց երևէի.... ո՛հ, ստուգիւ, եթէ հայելիս չխաբեր զիս, ամեն մարդ պիտի վկայէր թէ թագուհի մը ինձմէ աւելի գեղեցիկ և աւելի աղէկ զարդարուած չէ ։ (Գլուխը դէպ 'ի դուրս դարձընելով, Էթէլվուտը կանգնած կը տեսնէ, որ իր առանձնախօսութեան վերջը մտիկ ըրեր էր ։) Ո՛հ.... Էթէլվուտ, դո՛ւն ես, ո՛վ իմ սիրելիս, զքեզ չտեսայ ։

## ՏԵՍԱՐԱՆ Է.

ՔԸԹԸՐԻՆ, ԷԹԸԼՎՈՒՏ.

ԷԹԸԼՎՈՒՏ. Կը հաւատամ, քանզի աւելի հարկաւոր զբաղմունքներ ունենալուդ չկրցար զիս տեսնել....

ՔԸԹԸՐԻՆ. Այսպէս զարդարուած գեղեցիկ չե՞մ, Էթէլվուտ....

ԷԹԸԼՎՈՒՏ. Եթէ սուտակներով և զմրուխտներով շրջապատեալ պատկերս այդ մանեակին վրայ կախէիր, կամ այդ ապարանջանին վրայ տեղաւորէիր.... ո՛հ, այո՛, զուցէ անտես սիրոյս վայրկենական յիշատակ մը բերէիր մտացդ մէջ ։

ՔԸԹԸՐԻՆ. Գեղեցիկ չե՞մ այսպէս ։

ԷԹԸԼՎՈՒՏ. Ո՛հ, թշուառութեանս արժանի եղածէն ալ աւելի, տիկին ։

ՔԸԹԸՐԻՆ. Ուրեմն շնորհակալ եղիր Աստուծոյ, որ զիս այսպէս արժանի ըրեր է քեզի, տէր իմ ։ (Էթէլվուտ իր գրկացը մէջ կառնու զան բայց առանց համբուրելու ։) Ճշմարիտ, Էթէլվուտ, ես առանց դիտման և բնական աղդմամբ այսպէս զարդարուեցայ, և գեղեցկացայ ։ (Ձեռքը սրտին վրայ դնելով ։) Քանզի հոս կ՚զգայի որ պիտի գաս.... ։ Բայց թո՛ղ կ՚աղաչեմ այդ տխուր կերպարանքը. եկո՛ւ նստէ սա տեղ, ու ես ալ քու ոտիցդ քովը պիտի նստիմ, ո՛վ իմ ազնիւ ասպետս, գեղեցիկ սեպուհս, և կամ ազնուական կոմսս.... ։ Ես տիտղոսներուն ո՛րը տալ պէտք եմ քեզ արդեօք ։

(Կ՚երթայ աթոռակ մը կը բերէ և կը նստի ։)

ԷԹԸԼՎՈՒՏ. Ոչ ո՛չ մէկը. քանզի այդ տիտղոսները իմս չեն ։

ՔԸԹԸՐԻՆ. Ինչպէս եկար որ քու Ուալֆ սքանչելի ձիուդ ոտնաձայնը անգամ չլսեցի, որ եկած ատենը այնչափ շուտ կը քալէ, և գացած ատենը կամաց ։

ԷԹԸԼՎՈՒՏ. Թամիզի վրայէն ձըկնորսի մը նաւակովը եկայ, վասնզի ամեն օրուանէ աւելի այսօր կը վախնայի որ չըլլայ թէ զիս ճանչնան ։

ՔԸԹԸՐԻՆ. Քու գործերդ միշտ

գաղտնի են.... բայց ի՛նչ զօրաւոր պատճառներ ունիս այդպէս ընելու։

ԷԹԷԼՎՈԼՖ. Գիտէ՛ ուրեմն թէ ի՛նչ պատճառն է իմ սէրս, որ զանոնք քեզմէ կը պահեմ, քեզմէ որ իմ կեանքս ես։

ՔԱԹԷՐԻՆ. Ո՛հ, երանի թէ զիս սիրէիր։

ԷԹԷԼՎՈԼՖ. Կը տարակուսիս իմ սիրոյս վրայ, Քաթէրին. հաւատա ինձ՝ տարակուսէ՛ քու դոյութեանդ, Հոգւոյդ, Աստուծոյ, և արևուն վրայ՝ իր ամենապայծառ ճառագայթները սփռած խօլ ատեն, բայց մի տարակուսիր իմ վրաս.... որովհետև աշխարհիս վրայ մէկը կին մը այնչափ սիրած չէ, որչափ որ ես քեզի....

ՔԱԹԷՐԻՆ. Ուրե՛մն ուրեմն, սիրելիս։

ԷԹԷԼՎՈԼՖ, երկու ձեռօք անոր փչուխը բռնելով. Ո՛հ, բայց երեսս նայէ, սիրելիս.... ես գրեթէ չսիրեմ.... սրտիս մինչև վերջին բաբախումը, կեանքս մինչև վերջին շունչը, արեանս մինչև վերջին կաթիլը ես քուկդ եմ, ո Քաթէրին.... Եւ դուն կ'ըսես թէ գրեթէ չեմ սիրեր, ո՛հ, այո՛, ո՛վ Տէր Աստուած, քու բերնովդ ըսիր։

ՔԱԹԷՐԻՆ. Ո՛չ, տէր իմ, ո՛չ, մէկ մ'ալ չեմ ըսեր այդ խօսքը։

ԷԹԷԼՎՈԼՖ. Բայց եթէ գրեթէ կորսընցընեմ, ըսէ կ'աղաչեմ, ո՛հ, եթէ ուրիշ մէկը... ո՛վ Տէր... ո՛վ Տէր իմ... դու օգնէ ինձ....

ՔԱԹԷՐԻՆ. Բայց ի՛նչ ունիս։

ԷԹԷԼՎՈԼՖ. Անհանգիստ եմ։

ՔԱԹԷՐԻՆ. Ո՞ւր տեղդ կը ցաւի։

ԷԹԷԼՎՈԼՖ. Խանձիչած ըլլալուս գլուխս կրակի պէս է..... Քիչ մը ջուր կրնա՞ս տալ ինձ...

ՔԱԹԷՐԻՆ. Նորթամ շուտով բերեմ։

Քաթէրին ջերմայ ու գովալի պահարան մը բանալով առէն՝ Էթէլվոլֆ իր [illegible] [illegible] մը կը հանէ. և մէջի [illegible] մէջ [illegible] [illegible] [illegible] [illegible] բանալով [illegible] մէջ կը դնէ։

ԷԹԷԼՎՈԼՖ. Ո՛վ Տէր, ներէ ինձ... արդեօք քու զօրութիւնդ իմ վրա՞ս փորձել կ'ուզես։

ՔԱԹԷՐԻՆ. Մանկլաւիկ մը չըլլալուն՝ կ'ուզե՞ս որ բաժակդ ես լեցընեմ։

Էթէլվոլֆ բաժակը [illegible] և [illegible] կը [illegible]։

ԷԹԷԼՎՈԼՖ. Շնորհակալ եմ, սիկկին։

ՔԱԹԷՐԻՆ. Բայց ինչո՞ւ ձեռքերդ այդպէս կը դողդղան։

ԷԹԷԼՎՈԼՖ, միշտ նստած և ցան իր գրկացը մէջ առած. Ո՛հ, երբեք, երբեք, ո՛վ Քաթէրին, սիրելի Քաթէրին....

ՔԱԹԷՐԻՆ. Ո՛հ, ինչպէս տրտում ես այսօր. ըսէ ինձ՝ ի՞նչ կ'ուզես որ ընեմ գրեթէ զբօսցընելու համար...։ Կ'ուզե՞ս Լսակար Անգղիոյ հին թագաւորին վրայ շինուած երգը երգեմ, որ Լըֆրիտա անունով դեղեցիկ աղախինի մը հետ կարգուած էր։

ԷԹԷԼՎՈԼՖ. Անոր ամեն մէկ խօսքը սրտիս մէկ մէկ նոր վէրք է։

ՔԱԹԷՐԻՆ. Մա՛նկ պիտի ընե՞մ։

ԷԹԷԼՎՈԼՖ. Այո՛։

ՔԱԹԷՐԻՆ.

[illegible]
[illegible]

Թագաւորը երբ կը տեսնէ
Նըշանածն Րիքարտոսի
Կ'ինկնայ շուտով մօտ կը հանի.
«Ե՛կ. տո՛ւր, կ'ըսէ. թերթ ինծի.
Ըզքեզ տանիմ մինչև քու տունդ։

Ամէնք. — Ո՛չ։

Թագաւորը. — Մօտիկ բեր ինձ, ո՛վ աղջիկ,
Դու աղախին անգերդաստան,
Չցանկա՞ս ըլլալ հետս երջանիկ.
Ըր եմ տանեմ ամբըռնակին.
Տիկին ըլլաս միշտ յարգելի,
Բազէ բռնած՝ հեծնաս ՚ի ձի՝
Շքեղ հագուած ձեռքդ ձեռնոց։

Ամէ. — Ո՛չ։

Թագ. — Գոգ ակապահեայ թէ փափաքիս
Գառայն հանրիլ անդորդական,
Եւ քեզ պըսակ տկանահեա
Ըլ նուիրեմ յօժարակամ,
Եւ զննշանք պալատ փահան
Գաւառապարեն յերկաց կողմանց
Զոյգ մը հուժկու ձիհ տալիծայց։

Ամէ. — Ո՛չ։

Թագ. — Եթէ տիկին դու ինձ ըլլաս,
Սիրոս սիրաւոր ըզքեզ փարէ.
Եւ առաջին համբոյրն որ տաս
Քեզ կամանհեայ պատիւն շնորհէ։
Այս պատիւն կից է պըսակին,
Որուն ամեն գիծն կախուին
Մարգարտաշար զարդ մի ծաղկոց։

Ամէ. — Ո՛չ։

Թագ. — Եթէ ուզես վաղը անգամ,
Դըբրական պերճ կարկեհաններ
Հերացըդ մէջ պիտի շողան.
Կանանց ըլլաս նախանձարեր.
Եւ հոյակապ պսակիդ վրայ
Պիտի փայլին շքեղ ծաղկեայ
Ոսկեայ փունջեր նման ոլթայց։

Ամէ. — Ո՛չ։

Թագ. — Մէկ խօսքով կ'ըլլաս թագուհի.
Ըստ օրումես թագաւոր եմ.
Եւ շաքարեդր իմ արքունի
Առջիդ պիտի միշտ խոնարհին։
Արքայական շըքեղ պսակը
Աղախինի մը աչքերը
Կրնայ խաբել, հաւատա դու։

Ամէ. — Այո՛։

ԷԹԷԼՎՈՒՑ. Եւ ա՞ս է գեղեցիկ Ելֆրիտային սիրոյն վերջը։

ՔԱԹԷՐԻՆ. Իր պատմութեան վերջը գեղեցիկ չէ՛, թագուհի մը կ'ըլլայ։

ԷԹԷԼՎՈՒՑ. Բայց Րիքարտոս ի՞նչ կ'ըլլայ։

ՔԱԹԷՐԻՆ. Ո՞ր Րիքարտոսը։

ԷԹԷԼՎՈՒՑ. Ա՛նոր սիրահարը։

ՔԱԹԷՐԻՆ. Երգին մէջ ասկէ աւելի բան չկայ։

ԷԹԷԼՎՈՒՑ. Ա՛յսպէս ուրեմն այն խեղճ սիրահարին վրայ յիշատակութիւն մը չկայ ո՛չ իր սիրուհւոյն սրտին մէջ և ո՛չ պետին բանաստեղծութեան մէջ։ Ես անոնց պէս ապերախտ չեմ ուզեր ըլլալ, այլ անոր յիշատակին համար պիտի խմեմ։

Բաժակը կ'առնու բայց բերանին չմօտեցըներ։

ՔԱԹԷՐԻՆ. Ինչո՞ւ մնացիր։

ԷԹԷԼՎՈՒՑ. Ինչո՞ւ մնացի. ինչպէս մոռցկոտ ես եղեր, չե՞ս գիտեր մեր սիրոյն սովորութիւնը։ Բաժակ մը շրթանցդ մօտեցընելէդ և որ կողմէն խմելդ գիտնալէս առաջ՝ երբեք բերանիս մօտեցուցած եմ....։ Խմէ՛ ուրեմն, սիրելի Ելֆրիտա, ո՛չ, սըխալեցայ, սիրելի Քաթէրին.... Րիքարտոսին յիշատակին համար խըմէ....։ (Քաթէրին կը խմէ, Էթէլվուտ դժուարաւ շունչ առնելով աչքը անոր վրայ կը տնկէ, եւ ձեռքը երկնցուցած կը կենայ բաժակը անոր շրթունքներէն յափշտակելու, զոր առնելով գետինը կը զարնէ դառաչով։) Ո՛հ, Քաթէրին, Քաթէրին, ներէ՛ ինծի։

ՔԱԹԷՐԻՆ. Ի՞նչ կայ։

ԷԹԷԼՎՈՒՏ. Ի՞նչ ընեմ. ստիպուած էի այսպէս ընել, և ասկէ ուրիշ միջոց և ուրիշ հնարք մը չկար....

ՔԱԹԷՐԻՆ. Բայց ի՛նչ ըսել կ'ուզես....

ԷԹԷԼՎՈՒՏ. Եթէ աս բանս չընէի՝ երկուքնիս ալ կորսուած էինք... այո՛, երկուքնիս ալ յաւիտեանս իբարմէ պիտի բաժնուէինք...։ Ո՛հ, գոյնդ կը փոխուի, Քաթէրին...։

ՔԱԹԷՐԻՆ. Այո՛, այո՛, չեմ գիտեր ինչ կ'ըզգամ....։ Գլուխս կը դառնայ... մարելիքս կու գայ։

ԷԹԷԼՎՈՒՏ. Ո՛վ Աստուած...

ՔԱԹԷՐԻՆ. Սիրտս կ'այրի, ճակատըս հրատապ կը տոչորի.... ո՛հ, բայց աս քրտինքը չըլլայ թէ մահկանացու ըլլայ....

ԷԹԷԼՎՈՒՏ. Ափսո՛ս ինծի, ափսո՛ս... ինչպէս համբերեմ անոր այսպիսի տանջուիլը տեսնելով.... աւելի աղէկ չէ՞ր որ...

ՔԱԹԷՐԻՆ. Թո՛ղ զիս... կ'աղաչեմ... Թող զիս... քիչ մը ջուր, քիչ մը ջուր... կը խեղդուիմ... ո՛հ, շնո՛րհք ըրէ... շուտով, սիրելի Էթէլ....։ Բայց ինչ կ'ըլլամ, հասէք ինծի... կը մեռնիմ... հասէք...

ԷԹԷԼՎՈՒՏ, իր գրկացը մէջ առնելով զան. Ո՛չ. ո՛չ, ձայն մի հաներ...

ՔԱԹԷՐԻՆ, ձեռքերը գլուխը տանելով. Ի՞նչ ընեմ այս ծաղիկները, այս գոհարները....։ (Զանոնք գլուխէն հանելով ։) Յուսահատութի՜ւն... ո՛հ, կեանքս, ինչ եղայ ես, Աստուած իմ։

ԷԹԷԼՎՈՒՏ. Պիտի չմեռնիս, սիրելիս...

ՔԱԹԷՐԻՆ. Ա՛յսպէս առոյգ, ա՛յսպէս շուտով մեռնիմ... ո՛հ, Տէր Աստուած, գթա՛ յիս. Հասիր, Քէնէտի, հասիր, ո՛վ սիրելի Քէնէտի, օգնութիւն հասցուր ինծ... ալ աչքերս չեն տեսներ... կը մեռնիմ։

Էթէլվուտի գրկաց մէջ կը տապալի. և զան հոգեւոր գետինը կ'իյնայ։

ԷԹԷԼՎՈՒՏ, անոր վրայ կ'իյնայ եւ զան իր գրկաց մէջ առնելով. Քաթէրին, Քաթէրին. գոնէ հիմա հաւատի եմ որ միատեղ կա՛մ պիտի ապրինք, և կա՛մ պիտի մեռնինք...

Անգամ մը ևս կը համբուրէ զան. ու Քէնէտին եկած դրան մօտենալով՝ կը բանայ զան, անգամ մը կ'աղաղակէ. և ապարին կը հեռանայ. էթէլ Քաթէրինի վերը կը դառնայ, ապա անգամ մ'ալ կը համբուրէ զան, և իր մահուան դրանէն աներևոյթ կ'ըլլայ։ Քէնէտի իսկոյն ներքին դրանէն ներս կը մտնէ։

ՔԷՆՆԷՏԻ. Քաթէրին, զաւակս... ինչ եղար, ո՛հ... մարեր է... և այս ինչ գունատութիւն է...։ (Ձեռքը անոր սրտին վրայ դնելով ։) Բաբախումը դադրեր է....։ (Անոր բերնին մօտենալով ։) Շունչը սպառեր է... ո՛հ, մեռե՛ր է... մեռե՛ր...

# ԵՐԱՐՈՒԱԾ ՆԵՐԿԱՅՈՒՄ

## ԵՐՐՈՐԴ ՊԱՏԿԵՐ

*Ընդարձակ կէս քառորդ մըն է, հեռու՝ Տօրչէսթրի բնութեանց գերեզմանատունը. Ներքին կողմը դաշտին վրայ մէկ դուռ մը, առջեւը քանի մը ձանձանուրով. տապանները և ասպետաց գերեզմանները վրանին իրենց արձաններովը կը տեսնուին, մարդոց ոտքը քով առած. իսկ կանանցը որսական չունի. Տեսարանին առջեւը և ձախ կողմը գոց գերեզման մը, որուն մէջն է Քաթէրին Հօուարդ. անոր եռեւը՝ տարօրինակէն հրեշտակով օրհնութեան անօթ մը.*

### ՏԵՍԱՐԱՆ ԱՌԱՋԻՆ

ԷԹԷԼՎՈՒԴ՝ գերեզմանին քովընոց. ՔԱՀԱՆԱՅ ՄԸ՝ հաղորդութեան բաժակ ձեռքին. ուրուրուրները կը կարդայ. ՔԷՆԷՏԻ, ԵՐԻՏԱՍԱՐԴ ԱՂՋԻԿՆԵՐ.

ՔԱՀԱՆԱՆ. Երանի՛ անոնց որ երիտասարդութեան մէջ կը մեռնին և իրենց անմեղութեան զգեստովը գերեզման կը մտնեն, վասն զի երկրի վրայ կը ննջեն, և երկինքը կ'արթըննան: Եւ հիմա դուն մեզի համար աղօթք պիտի ընես, ո՛վ քաղցր և սպիտակ աղաւնի, և ոչ մենք քեզի. այո՛, դո՛ւն մեզի համար աղօթք ըրէ, ու գքեզ երկինքը Աստուծոյ շնորհաց մէջ պահէ, ինչպէս որ աս աշխարհիս մէջ պահեցիր.

Ոտք կ'ելլէ, օրհնութեան ջուր կը բերէ և անոր վրայ կը սրսկէ.

ՔԷՆԷՏԻ, գերեզմանին վրայ իյնալով. Ո՛վ զաւակս, իմ խեղճ զաւակս, ո՛վ կ'ըսէր թէ ես քու աչքերդ պիտի գոցեմ, և գքեզ գերեզմանին մէջ պիտի տեղաւորեմ: Ո՛հ, այս ինչ դժընդակ փորձութիւն մ'է, զոր Աստուած ինծ տուաւ... Քաթէրին, Քաթէրին....: Բայց ինծ անկարելի կ'երեւի որ այսպէս առոյգ հասակին մէջ Աստուած զան ինծմէ յափշտակէ. ո՜հ, զաւակս, սիրելի զաւակս.... Տէ՛ր Աստուած իմ.

Երեսն ի խոնարհ կեցած կու լայ.

ԱՌՈՅԳ ԱՂՋԻԿ ՄԸ. Քնացիր խաղաղութեամբ, ո՛վ մեր սիրելի քոյրը. խիստ գեղեցիկ ըլլալուդ՝ Աստուած աս աշխարհիս արժան չսեպեց գքեզ, այլ նայելով որ իր հրեշտակներէն մէկը պակաս է. գքեզ իր քովը կանչեց, և անշուշտ հիմա այս վայրկենիս քու սպիտակ թեւերովդ և ոսկի պսակովդ մեր գլխին վրայ կը թռչիս, վայելէ՛ ուրեմն քու յաւիտենական փառքդ, և ինչպէս որ զմեզ երկրի վրայ կը սիրէիր, նոյնպէս երկինքէն պաշտպանէ զմեզ.

Երիտասարդ աղջիկները հերթով օրհնեալ ջուր կը սրսկեն անոր վրայ.

ԷԹԷԼՎՈՒԴ, իր տեղէն ելլելով եւ գերեզմանին աջկան ձեռքէն բռնը առնելով. Կարգը իմս է, ո՛վ Քաթէրին, այո՛ կարգը իմս է քու պաղած մարմնոյդ վրայ սուրբ ջուրէն սրսկելու: (Ամենքն ալ գերեզմանատունէն դուրս կ'ելլեն, եւ Էթէլվուդ առանձին կը մնայ:) Այո՛, Փլէմինկ ճշդիւ իր խոստումը կատարեց. Այս քունը ստուգիւ մահուան է

կուորեակ եղբայրն է, և եթէ աս գործը իմ ձեռքովս ես չընէի, աչքերս այս եղած նմանութեան չպիտի հաւատային..... Ո՛րչափ դիւրեղծական է մարդկային գոյութիւնը, տունկերէ քաղուած քանի մը կաթիլ հեղուկը բաւական է զան դադրեցընելու, և եթէ քանի մը կաթիլ եւս աւելի տրուէր անոր, անշուշտ պիտի մեռնէր, ու այն հոգին, որ հիմա գոցուած այս աչաց մէջ կը փայլէր, համրացած այն ձայնին մէջ կ՚երերար, ու հիմա անշարժ ու պաղած մնացած աս մարմնոյն կենդանութիւնը և խոհականութիւնը կու տար, անատեն յաւիտեանս պիտի աներևութանար և իրաց աղբիւրին քովը պիտի համբառնար։ Արդեօք ինչ եղաւ անոր հոգին այս մահատիպ թմրութեան մէջ, որ քունէն աւելի է և մահուանէ նուազ։ Արդեօք երազոց դաշտին մէջ կը թռչտի, արդեօք իբր սուրբ կանդեղ մը խորանին մէ՛ջ կը ննջէ, թէ՛ այն անծանօթ աշխարհին դուռը զարնելու գացած է, որ յաւիտենականութիւն կը կոչուի.... և երբ արիւնը վերստին սկսի իր երակներուն մէջ շրջագայիլ, երբ խոհականութիւնը անոր միտքը վերստին կենդանացնէ, և երբ անոր հոգին, որ ժամանակ մը բացակայ կը գտնուի, այս մարմնոյ մէջ մտնէ, իբր թագուհի մը իր պալատին մէջ, արդեօք աս աշխարհի մէջ եղած և կամ այս երկու օրուան մէջ երկինքը տեսածները պիտի կրնա՞յ յիշել։ Իրաւունք ունին երբ կ՚ըսեն թէ մարդապանը իր զոհը տեսնելով ամենեին խղճի տագնապ մը չըզգար. վասն զի եթէ այս անշնչացեալ մարմինը երջանիկ չէ, գոնէ խիստ հանգիստ է։ Ո՛հ, Քաթէրին, Քաթէրին, աւելի աղէկ չէ՞ր որ ես ալ այս գերեզմանին մէջ քովդ պառկէի, կափարիչը վրանիս կնքել տայի, և այսպէս զիրար գրկած մինչև յաւիտենական զարթման օրը քնանայինք, քան թէ օրերնիս աշխարհի գիպուածոց և բաղդին խաղարկութեանց յանձնէինք։ Ո՛վ գիտէ թէ Աստուած մեզի համար իր ձեռաց մէջ ինչ պահած է, երջանկութիւն թէ տառապանք. ո՞վ գիտէ թէ այս արթըննալուդ համար օր մը զիս պիտի օրհնե՞ս թէ անիծես.... վասն զի գերեզմանէն աւելի ստոյգ ապաստան մը չկայ, և աս բանիս ինչո՞ւ սպասենք, քանի որ այնչափ դիւրութեամբ անոր առջևը կրնանք երթալ։ Ա՛հ, Քաթէրին. (Կը փճկուի և անոր ճակատը կը համբուրէ։) Աստուած... ո՛վ Տէր Աստուած... սոսկաց կարծեմ.... ձայնս մինչև իր քունին խորունկը անոր հոգւոյն գնաց հասաւ։ Ո՛հ, Քաթէրին, Քաթէրին, ինքզինքդ գըտիր, վերցուր մահուան խորհուրդները մտացդ մէջէն... և տուր՛.. տուր ինծի համար կամ երջանիկ և կամ դժբաղդ ըլլալու, ուրախութեան և կամ յուսահատութեան մէջ.... բայց, ո՛վ Տէր, պիտի տա՞ս արդեօք, կեա՛նք....։ (Գերեզմանատունին դուռը կը բացուի։) Այս ինչ դժբաղդութիւն է ինծ, ո՞վ է արդեօք... և ինչպէս անխոհեմ գտնուեցայ որ դուռս եղ-

լող վերջին անձէն եւս դուռը չի գոցեցի ։ (Քանի մը քայլ դէպ'ի դուռը յառաջանալով, ու յանկարծ երկիւղով ետ քաշուելով ։) Թագաւորն է . . . . եւ ինչ գործ ունի հոս ։ (Գերեզմանը դառնալով եւ անոր վրայ գծկուելով ։) Օրութիւնք խաւարայ, ծանրացուցէ՛ք ձեր երկաթեայ քունը անոր աչաց վրայ, եւ թող չբացուին անոնք երբէք, եթէ հիմա պիտի բացուին ։

## ՏԵՍԱՐԱՆ Բ.

### ՀԷՆՐԻ, ԷԹԷԼՎՈՒՏ.

ՀԷՆՐԻ, դուռը գոցելէն եւ քիչ մը ատեն խաւարին մէջ կենալէն ետեւ . Տայրհէմի դուքս, ո՞ւր ես ։

ԷԹԷԼՎՈՒՏ, Թագաւորին առաջը ելնելով . Հոս եմ, Վեհափառ տէր ։

ՀԷՆՐԻ, անոր վրայ կռթնելով . Ի՞նչ ընենք, Էթէլվուտ, համբերութիւն. դուն իմ մտերիմս ես, ըսէ ինձ՝ ո՞ւր է Քաթէրին ։

ԷԹԷԼՎՈՒՏ, ձեռքով գերեզմանը ցուցնելով . Հոս է ։

ՀԷՆՐԻ. Շնորհակալ եմ, դուքս, որ քու գերդաստանիդ գերեզմանատան մէջ ամփոփել տուիր զան . . . . իմ թագաւորական խօսքս կու տամ որ ութը օրէն Ուէսթմինիսթրի գերեզմանատունը պիտի փոխադրել տամ զան ։

ԷԹԷԼՎՈՒՏ. Տէր իմ, այն կինը, որուն կենդանութեան ժամանակ Ձեր Վեհափառութեան նայուածքը անոր վրայ դարձընելու հաճեցաք, իր մահուանէն ետքն ալ ինծի համար սրտաւոյ եւ յարգանաց առարկայ պիտի ըլլայ ։ Բայց ինչպէս Ձեր Վեհափառութիւնը մինակ հոս եկաւ ։

ՀԷՆՐԻ. Անոր վրայ գերեզմանը գոցուելէն առաջ ուզեցի որ անգամ մը ես տեսնեմ զան . . . ։ Քեզի հետ ընկերացող պալատականներս երբ եկան իմացուցին ինձ թէ դուն զան մեռած գտեր, եւ քու վերջին պարտքերդ կատարելու համար հոս մինակ մնացեր ես, ես դոյժին չհաւատացի . ուստի կ'իմանամ հիմա պատճառը, Էթէլվուտ . Ճշմարիտ կ'ըսեմ որ եթէ գահէս զիս վար առնէին, այնչափ հոգս պիտի չըլլար, որչափ այս աղջկան մահը լսելով սիրտս ուռեցաւ . . . ու աչքերս արտասուօք լեցուեցան . . . ։ Անգամ մը ես կ'ուզեմ տեսնել զան ։

ԷԹԷԼՎՈՒՏ, յուսահատական հառաչմամբ մը, մէկ ձեռքով իր սուրը կը քաշէ . ու միւսովը Քաթէրինի վրայ ծածկուած քօղը կը վերցընէ . եւ կանթեղը առնելով, անոր երեսին կը մօտեցնէ . Նայեցէ՛ք ուրեմն, Վեհափառ տէր . . .

ՀԷՆՐԻ, հաստատ նայուածքով մը նայելով . Մեռե՛ր է, ո՛հ, յաւիտեանս չարթննալու համար . . . ։ (Աչքերը դէպ 'ի երկինք վերցընելով ։) Ի՛նչ մեղք գործեցի ես արդեօք Աստուծոյ դէմ . . . ։ Այս կինը իմ եւ Անգղիոյ վրայ իբր աստղ մը կը ծագէր . . . մահը անոր վրայ փչեց եւ անցուց անոր լոյսը . . . . ։ Գուցէ անոր միջոցաւ աւելի բարի եւ արդար մէկը պիտի ըլլայի . . . քան զի, հոգիս ամպերու պէս պատող տրտմութիւնը փարատելով, զան պիտի լուսաւորէր ։ Ո՛վ

մարդկային թշուառ կարողութիւն, ո՛րչափ հզօր ես ջնջելու, բայց ո՛րչափ տկար կենդանացընելու ։

ԷԹԷԼՎՈՒՏ. Վեհափառ տէր, Աստուծոյ սիրոյն համար՝ մեկնինք ասկէ...

ՀԷՆՐԻ. Ո՛հ, ինչ թշուառ եմ ես, որ Հէնրի Ը. Անգղիոյ թագաւոր կոչուիմ, Ֆրանսուա Ա.էն աւելի մեծ, ու Շարլը-Քէնէն աւելի հարուստ ըլլամ, նաւատորմիղի մը վրայ փչելով միայն աշխարհիս մէկ կողմէն միւսը տանիմ, նետս վահանիս զարնելով միայն թանակներ յարուցանեմ, և հոս, այս գերեզմանին առջևը, այսպէս տկար ու յուսահատեալ արարածոց ամենէն յետինէն աւելի տկար մնամ.... ո՛հ, ինչ վատութիւն, որ իմ թագաւորական ձեռացս մէջ անոր ձեռքը սեղմեմ, ու չկրնամ զան տաքցընել։

ԷԹԷԼՎՈՒՏ, միւս ձեռքը բռնելով. Այս ձեռքն ալ սեղմէ, Հէնրի, քանզի այս ձեռքն ալ պաղ է....

ՀԷՆՐԻ. Քաթէրին, իմ սիրուն նշանածս, (անոր մատը մատանի մը դնելով։) գոնէ գերեզմանին մէջ կրէ այս մատանին, քանի որ չկրցար գահին վրայ կրել զան.... Ա՛հ, եթէ քու կեանքդ գնել կարենայի, թագաւորական անրաւ փրկանք մը կու տայի։— Ո՛վ Աստուած, ինչ կը պահանջես որ տամ այս հոգւոյն երկրորդ անգամ փչելու։

ԷԹԷԼՎՈՒՏ. Անիծեա՛լ բոպէ... սիրտը կ'ըսկսի բաբախել....

ՀԷՆՐԻ. Մարդկային բաղդը կշռելու համար չէ՞ որ երկու կշիռ ունիս դուն, ո՛վ Աստուած. միթէ ստո՞յգ է որ իշխանը և հպատակը հաւասար ըլլան քու աչացդ առջև, և մահը մի և նոյն անտարբերութեամբ պալատներու և խրճիթներու մէջ ալ մտնէ.... միթէ թագաւորի մը ծնրադրութիւնը և հառաչանքը աւելի ազդու չե՞ն քեզ, քան թէ թշուառ կրօնաւորի մը իր վանքին մէջ, կամ ողորմելի փայտահատի մը իր հիւղին մէջ ըրած աղաչանքը.... Դուն աղքատ կնոջ մը աղաչանքը ընդունեցիր, երբ ան իր մեռեալ աղջկան համար քեզ կ'աղաչէր, և աղջկան ձեռքէն բռնելով, "Ելլ", ըսիր անոր, և ան ելաւ կենդանեցաւ....

ԷԹԷԼՎՈՒՏ, ականջ դնելով. Շո՛ւնչ կ'առնէ... Վեհափա՛ռ տէր, չվայելեր ձեզ երկար ատեն հոս կենալ։ Այդ վշտակցութիւնները Աստուծոյ դէմ են, և Աստուծոյ կարողութիւնը փորձելու այդ հայհոյական խօսքերը.....

ՀԷՆՐԻ. Ի՛նչպէս մեկնիմ, ո՛հ, չեմ կրնար ինքզինքս այս գերեզմանէն դուրս հանել....

ԷԹԷԼՎՈՒՏ. Անիծեա՜լ ժամ.... Քաթէրին կ'արթննայ...։ Վեհափառ տէր.... թողունք մեռելները իրենց պատանքին մէջ, ու մեկնինք ասկէ որ չըլլայ թէ ելլեն առջևնիս կանգնին և այսպէս իրենց վերջին քունին մէջ գիրենք անհանգիստ ընելու համարձակելնուս համար զմեզ անիծեն։ (Թագաւորին ձեռքէն քաշելով։) Եկէ՛ք, Վեհափառ տէր, եկէ՛ք...

Էթէլվուտ Թագաւորին հետ դուրս կ'ելլէ. և Քէթէրին դուռը բանալով կ'ելլէ.

## ՏԵՍԱՐԱՆ Գ.

ՔԱԹԷՐԻՆ՝ առանձին, առ իր քով բաց գիրք մը վեր վերցուցած, որ Դուրսէն կ'ընթեռնու։

Ա՜հ... Տէր Աստուած իմ.. այս ինչ ծանր քուն է... կարծես թէ գլխս այս անկողնոյ վրայ կապեր կաշկանդեր են... և պիտի չկրնամ բնաւ ոտքի վրայ կանգնելու։ (Իւր ծնկաց վրայ կռթնելով կ'ելնէ.) Աչքերս չեմ կրնար բանալ... (Ձեռքը ճակատին տանելով։) Ի՞նչպէս ծանր է գլուխըս։ (Իւր սրտին պաղը ձեռքին դպչելով։) Նայէ՛ պաղկովս պաղեր եմ։ Քէնէթ... Քէնէթ... ո՜հ, տակաւին գիշեր է եղեր... ես կարծէի թէ լուսցած է։ Ի՞նչպէս պաղ է հոս.... Երկիւղ մը կը պատէ զիս. (Ոտքի վրայ կ'ելլէ. բայց քալելու տեն՝ գերեզմանին աստիճաններէն գրեթէ վար կ'իյնայ։) Ո՛հ, բոլոր մարմինս ջախջախեցաւ... Այս սանդուղը... այս կանդեղը ի՞նչ կը նշանակեն հոս.... (Գերեզմանին պատերը բռնելով.) Մարմարիոն է. (Երկիւղով մը նորէն ոտք ելլելով.) Այս ի՞նչ գերեզման է։ (Քալելով եւ իր պատանքը ձեռքը տանելով։) Աս պատանքը ի՞նչ կը նշանակէ...։ Ո՛վ Աստուած, ո՞ւր կը գտնուիմ ես, շիրիմի մը ու մեռելներու մէջ տեղը....։ (Սոսկումով։) Տէր Աստուած, ինչ պիտի ընեմ հոս առանձին ու այսպէս խորունկ երկրիս տակը պահուած տեղս, ուր Աստուծոյ աչքը անգամ չկրնար թափանցել, երբ աս մեռելները ինծի պէս արթննան, ու իրենց գերեզմանին քարը վերցնելով վար իջնան։ (Գերեզմանին ետեւը կեցած հրեշտակի արձանը տեսնելով. կը վազէ կը գրկէ զան, եւ իր ձեռքը օրհնեալ ջուրին մէջ կը խօթէ։) Ո՛վ հրեշտակ գերեզմանատանց, հրեշտակ պահապան մեռելոց, դո՛ւն պահպանէ զիս։ (Քիչ մը մնալէն ետեւ։) Բայց ի՞նչ եղայ ես... մտածեմ անգամ մը նայիմ։ Ամէն կողմ հանդարտ, ամէն կողմ խաղաղ է։ Ցիմար եմ ստուգիւ որ այսպէս կը վախնամ։ Էթէլվուտ իւր սովորութեան համեմատ երէկ կամ առջի օրը, շատ աղէկ չեմ յիշեր, քովս եկաւ, սոսկալի ցաւեր զգացի... մեռնելու պէս եղայ, ու մարեցայ... այո՛, կը յիշեմ... և անատեն....։ (Յուսահատութեամբ մը.) Անշուշտ զիս մեռած կարծած և հոս կենդանի թաղած են....։ Ամենեւին դուռ մ'ալ չկայ...։ Այս դուռը չի՞ բացուիր արդեօք...։ (Դէպ ի դուռը կը վազէ, ձեռքը կղպէին վըրայ կը դնէ. բայց բանալին չգտնելով, դուռը կը ցնցէ։) Ո՛չ, գոցուած է....։ Օգնէ՛ ինծի, ո՛վ Տէր։ (Վերստին սանդուղէն շուտով վար կ'իջնայ, եւ թատրոնին մէջ տեղը ծնկան վրայ կ'իյնայ։) Գթա՛ ինծի, ո՛վ ամենակալդ Տէր...

Կը խոնարհի և գրեթէ նուաղեալ կ'իյնայ։

## ՏԵՍԱՐԱՆ Դ.

ՔԱԹԷՐԻՆ, ԷԹԷԼՎՈՒՏ.

ԷԹԷԼՎՈՒՏ, ներքին դուռը բանալով՝ ներս կը մտնէ, դուռը կը գոցէ, ուղղակի գերեզմանը կ'երթայ եւ զան պարապ գտնելով, կը կանչէ. Քաթէրի՛ն։

ՔԱԹԷՐԻՆ, մէկ թեւին վրայ ելլելով. Ո՞վ է զիս կանչողը։

ԷԹԷԼՎՈՒՏ. Քաթէրի՛ն։

ՔԱԹԷՐԻՆ, յանկարծ ցատկելով. Հո՛ս եմ....

ԷԹԷԼՎՈՒՏ, անոր քովը վազելով. Ո՛հ, սիրելի Քաթէրին...

ՔԱԹԷՐԻՆ. Ազատեցայ, Էթէլվուտ... բայց ըսէ ինծի, սիրելիս, ի՞նչ եղայ ես։

ԷԹԷԼՎՈՒՏ. Նախ և առաջ ներէ ինծի որ համբուրեմ զքեզ...

ՔԱԹԷՐԻՆ. Ասկէ դուրս պիտի ելլե՞նք։

ԷԹԷԼՎՈՒՏ. Այո՛, այո՛, ու կեցիր որ զքեզ իմ գրկացս մէջ ու իմ սրտիս վրայ սեղմեմ, և ապահով ըլլամ որ դուն կենդանի ես, որ դուն կ'ապրիս ինծի համար, միայն ինծի համար..

ՔԱԹԷՐԻՆ. Այո՛, քեզի համար, միայն քեզի համար պիտի ապրիմ... բայց դուրս ելլենք ասկէ... վասն զի օդ առնելու հարկաւորութիւն ունիմ։

ԷԹԷԼՎՈՒՏ. Քաթէրին, քանի մը վայրկեան ևս սպասէ, կ'աղաչեմ, մեր սիրոյն համար ըլլայ... որ սոսկալի վտանգէ մը հազիւ ազատեցաւ քիչ մը առաջ....

ՔԱԹԷՐԻՆ. Շա՛տ աղէկ, բայց ըսէ ինծի՝ ինչպէս եղաւ որ ես հոս այս գերեզմանին մէջ առանձին և պառկած գտնուեցայ. և դուն ինչպէս եկար իբր բարի հրեշտակ մը հասնելով, որ զիս այս յաւարէն ազատես... խօսէ՛, կ'աղաչեմ, ինչպէս աս ամէն բան տեղի ունեցաւ...

ԷԹԷԼՎՈՒՏ. Այո՛, ամէն բան կը պատմեմ հիմա, քանզի ժամանակը եկաւ որ իմ ամենասիրելի հրեշտակէս գաղտնիք մը չպահեմ։

ՔԱԹԷՐԻՆ. Պատմէ՛ ուրեմն որ քու ո՛վ ըլլալդ իմանամ։

ԷԹԷԼՎՈՒՏ. Այո՛, և պարծանօք կրնամ քեզ խոստովանիլ թէ Անգղիոյ պատմութեան մէջ Տայրհէմի դուքսերուն պէս բարձր անուն կրող քիչ կը գտնուի.

ՔԱԹԷՐԻՆ. Ուրեմն դուն դո՞ւքս ես։

ԷԹԷԼՎՈՒՏ. Այո՛, Քաթէրին, Տայրհէմի դուքս, Տէրպիի մարքէզ, Անգղիոյ ատենակալ, և բարձրագոյն խորհրդարանի անդամ։

ՔԱԹԷՐԻՆ, իր գրկաց մէջ սեղմելով զան. Ուրեմն տէրութեան առաջին պաշտօնեաներէն մէկն ես։

ԷԹԷԼՎՈՒՏ. Թագաւորը միայն Անգղիոյ ատենակալներէն վեր է, ան ալ հրաման մը ըրած ատեն զանոնք իր բարեկամները կը կոչէ.

ՔԱԹԷՐԻՆ. Ուրեմն բոլոր այս պատիւներուն, աստիճաններուն և հարստութեան մասնակից պիտի ըլլամ։

ԷԹԷԼՎՈՒՏ. Սիրտս քեզ տուած ատենս միթէ աս ամէնն ալ չտուի՞, և հիմա ալ որ աս ամենուն տէրն ես, պատրաստ եմ իմ կեանքս ալ քեզ տալ։

ՔԱԹԷՐԻՆ. Օ՛խ պալատդ պիտի տանի՞ս։

ԷԹԷԼՎՈՒՏ. Մտիկ ըրէ։

ՔԱԹԷՐԻՆ. Ըսէ՛, կ'աղաչեմ։

ԷԹԷԼՎՈՒՏ. Հէնրի թագաւորին արիւնաթաթախ զեղծ սիրահարութիւնները լսա՞ծ ես։

ՔԱԹԷՐԻՆ. Այո՛։

ԷԹԷԼՎՈՒՏ. Օ՛քեզ սիրած օրէս կասկած մը մտած էր սիրտս, ու Հէնրիին

մտածելով, կը վախնայի զքեզ պալատըս տանելու. քանզի ան նուիրական ինչ ըսել է չգիտեր, իր արքայական բերանովը կնոջ մը պատուոյն վրայ փչելուն պէս՝ պէտք է որ զան աղարտէ ։ Աս պատճառաւ իմ ով ըլլալս քեզմէ կը պահէի, քանզի կը վախնայի որ չըլլայ թէ անզգուշութեամբ մը ջնջեմ իմ երջանկութիւնս. որ բոլորովին քու վրադ կը կայանայ ։ Այսպէս տարի մը անցաւ, բարօրութեան տարի մը, որ ամեն զքեզ ամեն գիշեր կը տեսնէի, բայց ցորեկը պաշտօնէս ստիպեալ Թագաւորին քովը երթալու պարտաւորած ըլլալուս գաղտնի զգացումներս չյայտնելու մեծ հոգ ունէի, և այնպէս կը ձևացընէի թէ Մարգարիտ իշխանուհւոյն վրայ սէր ունիմ....

ՔԱԹԷՐԻՆ. Թագաւորին քովը ։

ԷԹԷԼՎՈՒՏ. Այո, բայց իմ բոլոր սիրտս և միտքս դուն գրաւած էիր. վայրկեան մը զքեզ մտքէս չէի կրնար հանել....

ՔԱԹԷՐԻՆ. Անծանօթ չեն ինծի ատոնք, սիրելիս, բայց ինչո՞ւ ինծմէ գաղտնիք կը պահես ։

ԷԹԷԼՎՈՒՏ. Ահա վախցածս պատահեցաւ. չորս օր առաջ Թագաւորը զքեզ տեսեր է....

ՔԱԹԷՐԻՆ. Թագաւորը զիս տեսե՛ր է ։

ԷԹԷԼՎՈՒՏ. Այո ։

ՔԱԹԷՐԻՆ. Ե՞տքը....

ԷԹԷԼՎՈՒՏ. Նա ալ զքեզ կը սիրէ ։

ՔԱԹԷՐԻՆ. Օ՜հ....

ԷԹԷԼՎՈՒՏ. Գոնէ անանկ կը կարծէ, և կը բաղձայ.... կը հասկնամ հիմա թէ ինչու համար ես այն միջոցը բանեցուցի, եթէ ոչ՝ երկուքս ալ կորսուած էինք.... Վարպետ ալքիմիագէտ մը ոսկւոյ զօրութեամբը այնպիսի քնաբեր ըմպելիք մը շինեց ինծի, որուն թմրեցուցիչ զօրութիւնը անմիջական և խորունկ ներգործութիւն մը կը պարունակէ.... Անցեալ օր այս ըմպելիքը քու բաժակիդ մէջ դրի, և երէկ երբ Թագաւորին ղրկած մարդիկը եկան որ զքեզ Մարգարիտ իշխանուհւոյն քովը տանին, որպէս զի անոր շքադիր տիկնանց կարգը անցնիս...... զքեզ մեռեալ կարծեցին, ու Քէնէտի իմ գեղեցիկ Քաթէրինիս վրայ կու լար, քանի որ ան քնացած էր միայն ։

ՔԱԹԷՐԻՆ. Թագաւո՞րն ալ անանկ կարծեց ։

ԷԹԷԼՎՈՒՏ. Այո, և անոր խաբուիլը միայն մեզ հարկաւոր էր ։

ՔԱԹԷՐԻՆ. Արդեօք ամենևին չտարակուսեցա՞ւ....

ԷԹԷԼՎՈՒՏ. Ամենևին. եթէ ոչ՝ մենք կորսուած էինք ։

ՔԱԹԷՐԻՆ. Ի՞նչպէս ։

ԷԹԷԼՎՈՒՏ. Քու առաջին շունչդ, առաջին հառաչանքդ, և առաջին նայուածքդ տեսնելու համար երբ գերեզմանիդ առջևը կանգնած կ՚ըսպասէի... Թագաւորը անշուշտ կասկածելով այս դուռը երևցաւ ։

ՔԱԹԷՐԻՆ. Թագաւորը, ի՞նքը ։

ԷԹԷԼՎՈՒՏ. Այո, այն սանդուղէն վար իջաւ, ու դէպ'ի այս գերեզմանը յառաջացաւ, ուր ես ձեռքս դա-

շուն մը բռնած իրեն կ'ըսպասէի. վասն զի, Ճշմարիտ կ'ըսեմ, Քաթէրին, որ եթէ փոքր կասկած մը ցուցընէր, հոն գետինը պիտի փռէի զան։

ՔԱԹԷՐԻՆ. Թագաւո՞րը պիտի ըսպաննէիր, տէր իմ....

ԷԹԷԼՎՈՒՏ. Օ՜ քեզ կորսնցընելէս աւելի անոր մահը կ'ուզէի, ամենեւին պիտի չմտածէի, կ'ըսեմ. բայց ամեն բան մեզ օգնեց, թէև իր ձեռօքը այդ մատնին մատդ անցուց....

ՔԱԹԷՐԻՆ, մատնին դիտելով, եւ ինքնիրեն. Հարսնախօսութեան մատնին է անշուշտ....

ԷԹԷԼՎՈՒՏ. Պաղած ձեռքդ բռնելով, պարապ տեղը քու անունդ կու տար, բայց դուն ամենեւին չզգացիր որ այս աղէտալի կոչման պատասխան տայիր... Ո՜ւր տեղը իր պիղծ շրթունքը համբոյր մը դնելէին Ճակատիդ վրայ, բայց քու Ճակատդ գունատեալ մնաց և անբիծ։ Ըստի հիմա ո՛չ տարակոյս մնաց և ո՛չ կասկած, և դուն նորէն կենդանանալով իմս պիտի ըլլաս, որուն համար շնորհակալ եմ իմ ալքիմիադէտիս ։

ՔԱԹԷՐԻՆ. Զմտածեցի՞ր ամենևին թէ աս ըմպելիքը կրնար մահցու ըլլալ, և եթէ աս քնաբեր հեղուկին տեղ՝ այն մարդը քեզ թոյն մը տըւած ըլլար....

ԷԹԷԼՎՈՒՏ. Այդ բանէն վախնալով սրուակին կէսը միայն դրի բաժակիդ մէջ։

ՔԱԹԷՐԻՆ. Բայց ինչ սոսկալի բան է այրիլ, և ամենէ մեռած կարծուիլ։

ԷԹԷԼՎՈՒՏ. Բայց դուն քու ամենաքաղցր և արագընթաց սիրոյ ժամերուդ մէջ քանի անգամ չըսի՞ր ինձ, ամենասիրելի հրեշտակս, որ այնպիսի աշխարհ՞ք մը կ'ուզես որ միայն երկուքնուս ըլլար, որպէս զի ուրիշ բան մը չկրնայ մեր միտքը զբաղեցնել ու զմեզ իրարմէ զատել.... արդ՝ այս աշխարհը ահա պատրաստ է քեզի համար...։ Կենդանիներուն աշխարհը քեզի համար պիտի գոցուի, և ուրիշ աշխարհ մը պիտի բացուի, որ է սիրոյ աշխարհը։ Ուրեմն մոռցիր առջինը, ինչպէս որ ան զքեզ մոռցաւ....։ Ո՛րչափ շուտ որ կարենամ, Անգլիայէն պիտի մեկնիմ..... ու զքեզ Գաղղիա պիտի տանիմ. և ըստ որում զուարձութիւնները և թագաւորական տօնախմբութիւնները կը սիրես, քան զի երիտասարդ և գեղեցիկ ես, Հենրիի պալատէն աւելի շքեղ և աւելի ուրախ պալատ մը պիտի գտնես հոն։ Իմ հարստութիւնս և տիտղոսս, որոնք քուկդ ալ են, զքեզ անզուգական փառաց պիտի հասցընեն.....։ Ըսէ ուրեմն որ ես աղէկ ըրի, և դուն ուրախ ես այսպէս ընելուս ։

ՔԱԹԷՐԻՆ. Այո՛... բայց մինչև Գաղղիա երթալնիս ո՞ւր պիտի բնակինք ։

ԷԹԷԼՎՈՒՏ. Տայրհէմի պալատին մէջ, որուն գերեզմանատունը աս է ։

ՔԱԹԷՐԻՆ. Լոնտոնէն հեռո՞ւ է ։

ԷԹԷԼՎՈՒՏ. Գրեթէ տասը վայրկեան ։

ՔԱԹԷՐԻՆ. Բայց պիտի չկրնամ մարդու երևիլ։

ԷԹԷԼՎՈՒՏ. Ամենեւին մէկու պիտի չերեւիս, սիրելիս ։

ՔԱԹԵՐԻՆ. Ուրեմն գերեզմանս պիտի փոխեմ միայն. . . . .

ԷԹԷԼՎՈՒՏ. Քաթէրին, հիմա որ ամեն բան գիտես, հիմա որ Թագաւորը եւ ուղեկիցները մեկնեցան, եկու հեռանանք այս գերեզմանատունէն ։

ՔԱԹԵՐԻՆ. Հիմա. . . .

ԷԹԷԼՎՈՒՏ. Այո՛, եկո՛ւ ։

ՔԱԹԵՐԻՆ. Բայց առաջ նայէ որ դուրսը մէկը չըլլայ որ զմեզ տեսնէ. . . . ամեն կողմ հանդարտ, ու գիշերը մութ ըլլայ ։

ԷԹԷԼՎՈՒՏ. Դուն ո՞ւր պիտի կենաս ։

ՔԱԹԵՐԻՆ. Հոգ չէ, վայրկեան մը հոս կ՚սպասեմ. ու չեմ վախնար ։

ԷԹԷԼՎՈՒՏ. Շատ աղէկ, կ՚երթամ ։

Դուրս կ՚ելլէ ։

## ՏԵՍԱՐԱՆ Ե.

ՔԱԹԵՐԻՆ՝ առանձին.

Այս ինչ տարօրինակ բան է. . . . Էթէլվուտ այս եղածը ինձ պատմելէն 'ի վեր ամեն բան փոխուած կ՚ե- [illegible] ն Թագաւորը զիս սի-րէ ։ Անգղիոյ Թագաւորը այս գերեզմանատունը իջնայ որ անգամ մը եւս խեղճ Քաթէրին Հօուարտը տեսնէ . . . . ։ Ի՞նչպէս արդեօք անոր ոտից ձայնէն կամ խօսելու ատենը ընդոստ չարթնցայ. . . . Այս կեցած տեղս կեցեր ու քալած տեղս քալեր է ։ Հոս իր պսակեալ ճակատը խոնարհեցուցեր է դէպ 'ի ինձ. ու իր արքայական ձեռքերը իմ ձեռացս դպեր են ։ Ահա իւր մատնին, այս հարսնախօսութեան մատնին է, զոր իր ձեռօքը իմ մատս դրեր է. . . . ։ Ուրեմն Թագաւորը եռանդեամբ կը սիրէ զիս. . . ։ Ճշմարիտ անխելք եմ ես. . . . . Բայց ան զիս մեռեալ կը կարծէ. . . .

Գալով Քերեմանին կը խորհրդածէ ։

## ՏԵՍԱՐԱՆ Զ.

ՔԱԹԵՐԻՆ, ԷԹԷԼՎՈՒՏ.

ԷԹԷԼՎՈՒՏ, դրան առջեւ կենալով. Քաթէրին, ո՞ւր ես ։

ՔԱԹԵՐԻՆ, ոտք ելլելով. Հո՛ս եմ ։

ԷԹԷԼՎՈՒՏ. Քաթէրին, եկու. ամեն կողմ հանդարտ է, ելիր այս տխրագին գերեզմանատունէն ։

ՔԱԹԵՐԻՆ, անոր մօտենալով. Էթէլվո՛ւտ, աշխատէ որ պալատդ գեղեցիկ երեւի ինձ ։

## ՉՈՐՐՈՐԴ ՊԱՏԿԵՐ

*Տարհէմի պալատին մէկ սենեակը՝*

### ՏԵՍԱՐԱՆ Ա.

ԷԹԷԼՎՈՒՏ, բաց պատուհանի մը առջև՝ գիրքը իր ձեռքը մէջ բռնած. ՔԱԹԷՐԻՆ, ներս մտնելով.

ՔԱԹԷՐԻՆ. Էթէլվուտի քովը երթալով եւ ձեռքը անոր երկնցնելով. *Տէր իմ...*

ԷԹԷԼՎՈՒՏ. *Դո՞ւն ես, սիրելիս.. բարի եկար. ըսէ ինծի ինչպէս անցուցիր աս իրիկուն այս նոր բնակութեան մէջ։*

ՔԱԹԷՐԻՆ. *Կայրկեան մը անգամ չկրցայ քնանալ։*

ԷԹԷԼՎՈՒՏ. *Այսու ամենայնիւ աչքերդ փայլուն կ'երեւին, և այտերդ վարդագոյն, կարծես թէ քունը գիշերուան բոլոր ծաղիկները վրադ թափեր է։*

ՔԱԹԷՐԻՆ. *Երբեմն արթնութեան երազները աւելի քաղցր են քնոյ երազներէն. և երջանկութիւնը ու յոյսը մարդուս աչքերը կը շողշողեն և այտերը կը կարմրցնեն։*

ԷԹԷԼՎՈՒՏ. *Ուրեմն երջանիկ ես։*

ՔԱԹԷՐԻՆ. *Ոհ, այո. Անգղիայէն չմեկնելու համար ինծի ըրած խոստումդ 'ի վեր։*

ԷԹԷԼՎՈՒՏ. *Բայց եթէ Անգղիայէն չմեկնինք, սիրելի դքսուհիս, ո՛չ այս տիտղոսը պիտի ունենաս, ո՛չ Գաղղիոյ արքունեաց զուարճութիւնները, և ոչ օրը քսան անգամ ամենուն բերնէն գեղեցիկ ես խօսքը լսելու երջանկութիւնը։*

ՔԱԹԷՐԻՆ. *Բաւական է որ դուն ինծի ըսես։*

ԷԹԷԼՎՈՒՏ. *Բայց միշտ մի և նոյն բերանէն այդ խօսքը լսելով պիտի չձանձրանա՞ս։*

ՔԱԹԷՐԻՆ. *Ամենեւին։*

ԷԹԷԼՎՈՒՏ. *Սիրելի հրեշտակս։*

ՔԱԹԷՐԻՆ. *Բայց ըսէ ինծի՝ ինչու այս պալատին ամենէն առանձին սենեակը սահմանեցիր ինծի. կարծեմ թէ այս սենեակը իմինէս աւելի գեղեցիկ տեսարան մը ունի, և քու բացակայութեանդ միջոցին, քանզի ինչպէս որ ըսիր՝ երբեմն պալատը երթալու ստիպուած ես, այս սենեակին տեսարանովը կրնամ զբօսնուլ։*

ԷԹԷԼՎՈՒՏ. *Քաթէ՛րին, աս սենեակը միշտ ես կը նստիմ, սովորութեանցս մէջ փոքրիկ փոփոխութիւն մը ընեմ՝ կասկածներ պիտի տամ. օրուան մէջ ամեն ժամանակ մանկլաւիկներս և ծառաներս սենեակս կու գան հրամաններս ընդունելու համար. եթէ օտարական մը պալատս մտնալ ուզէ, աս սենեակը կու տացուի անոր. կը տեսնես, ամեն բանի հաշիւը ըրած եմ ես, ու աս բանս անկարելի է։*

ՔԱԹԷՐԻՆ. *Աս սենեակէն փողոցը կ'երեւի, արդեօք չեմ կրնար երբեմն հոս գալ որ քու դառնալուդ սպասեմ, թաշկինակովս հեռուէն քեզ բարեւեմ, և քանի որ ձայնով չեմ*

կրնար, նշանով մը ըսեմ. Շուտ եկու, սիրելիս, քանզի կը սիրեմ զքեզ, քեզ կը մտածեմ, ու քեզ կ'ըսպասեմ։

ԷԹԷԼՎՈՒՏ. Բոլոր պալատը քուկդ է, սիրելիս. այո, կրնաս դալ, բայց միշտ մեծ զգուշութիւն պիտի ընես, ու այս դուռը պիտի գոցես, ինչպէս որ հիմա ես պիտի գոցեմ։

ՔԱԹԵՐԻՆ. Ըսէ ինձ, այս տեսնուածը Լոնտոն քաղա՞քն է։

ԷԹԷԼՎՈՒՏ. Այո։

ՔԱԹԵՐԻՆ. Ուայթ-Հօլի պալատը ասկէ կ'երևի՞։

ԷԹԷԼՎՈՒՏ. Ահա՛ սա է։

ՔԱԹԵՐԻՆ. Թագաւորը հոն կը նստի, այնպէս չէ՞։

ԷԹԷԼՎՈՒՏ. Ձմեռը հոն կը բնակի. բայց ամառը Կրինուիչ կ'երթայ։

ՔԱԹԵՐԻՆ. Ա՛ն որ Պուլէն դահը ելլելու ատեն ա՛ս պալատը բերուեցաւ։

ԷԹԷԼՎՈՒՏ. Այո։

ՔԱԹԵՐԻՆ. Ա՛ն որ Պուլէն ազնըւական չէր կարծեմ և թագաւորը զան Փեմպրուքի մարքէզուհի ըրաւ, երբ ան տակաւին Քաթէրին տ'Արարակոնի շքադիր տիկինն էր։

ԷԹԷԼՎՈՒՏ. Ի՞նչ պատճառաւ այս հարցումները կ'ընես։

ՔԱԹԵՐԻՆ. Վասն զի մէկը պատմեց ինձ թէ ան Կրինուիչի պալատէն Լոնտոն եկած ատեն հետը թագաւորական ուղեկիցներ ունէր. ինքը Անգղիոյ զինանշաններով զարդարուած մակոյկի մը մէջ էր, ու ետևէն հարիւր ուրիշ նաւակներ կ'երթային, ոմանք թագաւորին տան պաշտօնատարներով, և ուրիշները ազնուական տիկիններով և երաժիշտներով լցուած. ըսէ ինձ, ստո՞յգ է որ ան՝ ոտքը ծովեզրը կոխածին պէս՝ թագուհիի վերարկու մը ձգեր են անոր ուսերուն վրայ, և ամեն կողմէ ճերմակ կամ կանաչ սնդուսով պատած գահաւորակ մը հծեր է, որպէս զի ժողովուրդը դիւրութեամբ կարենայ իրենց թագուհին դիտել։ Վէնէտին է ինձ աս ամեն բանը պատմողը։

ԷԹԷԼՎՈՒՏ. Սուտ չէ ըսեր։

ՔԱԹԵՐԻՆ Ստո՞յգ է որ իր գահաւորակին երկու կողմէն սպարապետը և մեծ մարաջախտը կը քալէին, ետևէն Անգղիոյ ազնուական տիկինները. Գաղղիոյ և Վենետիկի դեսպանները կու գային. անոնցմէ ետև՝ երեք հարիւր ազնուականներ գեղեցիկ ձիերու վրայ հեծած էին։ (Էթէլվուտի հաստատ և արուշ նայուածքը դիտելով։) Այնպէս չէ՞, այսպիսի շքեղ հագուստով և փառաւոր շքադիրներով Ա՛ն որ Պուլէն Ուայթ-Հօլի պալատին դուռը հասաւ, ուր թագաւորը իրեն կ'ըսպասէր։

ԷԹԷԼՎՈՒՏ. Երեք տարի ետքն ալ սևեր հագած և միայն մէկ քահանայի հետ նոյն դոնէն դուրս ելաւ Լոնտոնի աշտարակը երթալու, ուր դահիճը իրեն կ'ըսպասէր։

ՔԱԹԵՐԻՆ. Թագաւորը խաբելուն համար այն պատիժին արժանի եղեր էր. վասն զի Կրինուիչի նիզակախաղութեան մէջ բոլոր աւագանեաց առջև ասպետի մը ծաղկեայ փունջ մը նետեր էր։

ԷԹԷԼՎՈՒՏ. Զարմանալի կերպով աս ամեն պատմութիւնը իմացեր ես, սիրելի գիտունս, և քու այդ արժանիքդ չէի ճանչցեր.

Անոր յետոյ համբուրելու ատեն՝ Քաթերին անոր մատը դրած մատնին իր շրթանց դպչելուն կը խորշի.

ՔԱԹԷՐԻՆ. Ի՞նչ եղար...

ԷԹԷԼՎՈՒՏ. Ոչինչ.

ՔԱԹԷՐԻՆ. Այո՛, ըսէ՛ ինչ ունիս.

ԷԹԷԼՎՈՒՏ. Չեմ համարձակիր.

ՔԱԹԷՐԻՆ. Ըսէ՝ կ'աղաչեմ.

ԷԹԷԼՎՈՒՏ. Թէ որ քեզմէ գոհողութիւն մը խնդրեմ՝ պիտի կատարես.

ՔԱԹԷՐԻՆ. Ըսէ՛ նայիմ... անատեն յայտնի պիտի ըլլայ որ արդեօք զիրար կը սիրե՞նք եղեր.

ԷԹԷԼՎՈՒՏ. Այդ մատնին ձեռքդ ի՞նչ բան ունի.

ՔԱԹԷՐԻՆ. Ի՞նչ կայ.

ԷԹԷԼՎՈՒՏ. Հիմա ձեռքդ համբուրած ատենս՝ մատնիդ շրթանցս դպաւ, այդ մատնին ուրիշ մէկուն տուածն է, պիտի կրե՞ս զան ձեռքդ.

ՔԱԹԷՐԻՆ. Ըսէ՝ ձեռացս աղէկ չի՞ վայելեր և աւելի սպիտակ չինցուցըներ զան.

ԷԹԷԼՎՈՒՏ. Առանց անոր քու ձեռքըդ գեղեցիկ և սպիտակ է. ինձ տուր զան.

ՔԱԹԷՐԻՆ. Թագաւորի մը ձեռքէ ելած մատնի մը հաղուագիւտ և հետաքրքրական բան մը ըլլալով պահուելու արժանի է....

ԷԹԷԼՎՈՒՏ. Այո՛, բայց երբ թագաւորը իբր սիրոյ գրաւ տուած է զան...

ՔԱԹԷՐԻՆ. Ուրեմն նախանձոտ ես.

ԷԹԷԼՎՈՒՏ. Այո՛, կը խոստովանիմ, Քաթէրին, ... ես նախանձոտ եմ, ու շատ բաղդաւոր եմ եղեր որ այսպէս աշխարհէս բաժնուած պիտի ապրինք, վասն զի խիստ անհանգիստ պիտի ըլլայի երբ տեսնէի ըզքեզ որ ուրիշներուն բաղձանացը և սիրոյն առարկան եղած ես. ո՛չ, ասոր չեմ կրնար համբերել։ Ամեն բանի համար պիտի նախանձէի, քու զգեստիդ դպչելով անցնողին վրայ անգամ ոխ պիտի ունենայի. ո՜հ, Քաթէրին, Քաթէրին, (անոր ոտքերուն իյնալով.) Գիտեմ որ յիմարութիւն է աս, ու ես տարօրինակ և անմիտ մ'եմ, բայց ի՞նչ ընեմ. պէտք է որ ցաւիս ու գութ ունենաս վրաս, և այս մատնին պահելով սիրտս պիտի չվիրաւորես....

ՔԱԹԷՐԻՆ, ոտք ելլելով. Էթէլվուտ... Լոնտոնի փողոցին վրայ նայէ..... տե՛ս ձիաւորներու բազմութիւն մը դէպ 'ի աս կողմը կու գան, և քու պալատիդ ճամբան զարկին.

ԷԹԷԼՎՈՒՏ. Իրօք... ո՞վ են աս մարդիկը, և ի՞նչ բանի համար կու գան արդեօք.

Պատուհանէն դուրս կը դիտէ.

ՔԱԹԷՐԻՆ, ինքնիրեն. Հիմա մատնին պիտի մոռնայ....

ԷԹԷԼՎՈՒՏ. Ոչ, սխալած չեմ... Տէր Աստուած... նոյն ինքն է... Տակաւին ինչ կ'ուզէ ինձմէ....

ՔԱԹԷՐԻՆ. Ո՞վ է ան.

ԷԹԷԼՎՈՒՏ. Անգղիոյ Հէնրի թագաւորը.

ՔԱԹԷՐԻՆ. դէպ 'ի դատաւորաց երիտասարդ համար շարժում մը ընելով. Թագաւո֊րը....

ԷԹԷԼՎՈՒՏ, ցած մէկդի հանելով. Այո՛, այո՛, Թագաւորն է. (Հետը տանելով.) փախիր շուտով, Քաթէրին, սենեակդ դարձիր, կ'աղաչեմ. և Աստուծոյ սիրոյն, մեր սիրոյն, ու իմ կենացս սիրոյն համար ըլլայ... գնա պահուէ. (Սենեակին մէջ տեսնելով.) փողին ձայնը կը լսե՞ս... աչա եկաւ... հասաւ... վեր կ'ելլէ... ու հիմա ներս պիտի մտնէ.... (Քաթէրինը դուրս հանելով.) Թագաւորը հոս կու գայ.

Քաթերին աներեւոյթ կ'ըլլայ, Էթելվուտ անոր ետեւ դուռ մը գաղտնի կը փակէ.

ԷԹԷԼՎՈՒՏ, առանձին. Ի՞նչ ընելու կու գայ հոս.... Արդեօք գինքը խաբելս իմացա՞ւ.... Ո՛հ, չեմ կարծեր, վասն զի անատեն մեծ սենեկապետը պէտք էր գալ, և ոչ ինքը անձամբ.

ՄԱՆԿԼԱՒԻԿ ՄԸ, ներս մտնելով. Վեհափառ Թագաւորը կու գայ.

## ՏԵՍԱՐԱՆ Ը.

ՀԷՆՐԻ, ԷԹԷԼՎՈՒՏ

ԷԹԷԼՎՈՒՏ, խոնարհելով. Վեհափառ տէր...

ՀԷՆՐԻ. Բարի լոյս, պարոն.

ԷԹԷԼՎՈՒՏ. Ձեր Վեհափառութիւնը ինծ մեծ պատիւ կ'ընէ իր այցելութեամբը....

ՀԷՆՐԻ. Ինչ որովհետեւ Ուայթ-Հօլի պալատը չես գար զիս տեսնելու, ես Տայրհէմի պալատը գամ որ զքեզ տեսնեմ.

ԷԹԷԼՎՈՒՏ. Ձեր Վեհափառութիւնը երբ որ կը կամի՝ թող հրամայէ, ու ես պատրաստ եմ անմիջապէս հնազանդելու....

ՀԷՆՐԻ. Այո՛, բայց քանի մը կարեւոր և գաղտնի խօսքեր ունիմ քեզի. պալատիս մէջ պատերը այնչափ ականջ ունին բերանիս բոլորտիքը, որ ես աւելի աղէկ կ'ուզեմ հոս գալ ու քու հին սրահակներուդ առջեւը քեզի հետ խօսիլ.

Քաթերին վարագոյրը կը վերցնէ և մը֊տին կ'ընէ.

ԷԹԷԼՎՈՒՏ, Թագաւորին աթոռ մը ներկայացնելով. Ձեր Վեհափառութիւնը թող բարեհաճի նստիլ.

Թագաւորը կը նստի. Էթելվուտ անոր քովը ոտքի վրայ կը կենայ.

ՀԷՆՐԻ. Շնորհակալ եմ.

ԷԹԷԼՎՈՒՏ. Երկու օր առաջ պատահած դժբաղդութեան վրայ ինչպէս կը գանուիք, Վեհափառ տէր.

ՀԷՆՐԻ. Գիտես, Թագաւորաց վիճակը այն է որ բան մը իրենցը չէ, և ոչ իսկ աշխարհիս վիշտը. Այո՛, այն դժբաղդութիւնը սրտիս մէջ խորին և արիւնալի վէրք մը բացած է, բայց Անգղիա ալ իր խորին վէրքը ինծ կը ցուցընէ, ու ես ինձմէ առաջ պէտք է անոր մտածեմ.

ԷԹԷԼՎՈՒՏ. Ինչպէս, Վեհափառ տէր.

ՀԷՆՐԻ. Այո՛, Օլիվըր Սէյնքլէր և Մաքսուէլ տասն և հինգ հազար հոգւով Անգղիացւոց երկիրը մտեր են. Արեւմտեան կողմը կուսյ մէջ

են, ու մենք անոնց դիմագրաւելու համար Թովմաս Տէյքրէն և Ճօն Մըսկրէյվէն զատ ուրիշ մէկը չունինք այն կողմերը, որոնք միայն հինգ հարիւր զինուոր ունին։

ԷԹԷԼՎՈՒՏ. Վեհափառ տէր, Անգլիոյ բոլոր ազնուականները պիտի զինուորին, ու հասարակաց թշնամւոյն վրայ պիտի քալեն։

ՀԷՆՐԻ. Այո՛, սիրելիս, ու ես անձամբ բանակը պիտի վարեմ. բայց Սկովտիոյ այս պատերազմը, որն որ ջնջելով կ'ուզեմ վերջացընել, մէկ քանի օրուան գործ չէ, և իմ բացակայութեանս միջոցին Անգլիան իր թագաւորէն որբ մնալով, Կարոլոս Եին և Պօղոս Գին թշնամութեանց ենթակայ պիտի ըլլայ։ Հռովմէական կրօնից դէմ ունեցած խստութիւնս, որուն պտուղը ապառնիին մէջ պիտի տեսնուի, կղերականաց մէջ դժգոհութիւն և ատելութիւն սերմանած է. ուստի մինչև որ իմ թագաւորական իշխանութիւնս զօրաւոր ու հուժկու ձեռաց չյանձնեմ, Լոնտոնէն չպիտի մեկնիմ։

ԷԹԷԼՎՈՒՏ. Վեհափառ տէր, Նօրֆօք դուքսը ունիք։

ՀԷՆՐԻ. Պատերազմի համար քաջ անձ մ'է այն, բայց ոչ ուրիշ բան. միայն բազուկ մը ունի, բայց ոչ գլուխ։

ԷԹԷԼՎՈՒՏ. Սըր Թօմաս Քրանմէրը ձեր տեղը կրնաք թողուլ։

ՀԷՆՐԻ. Ան ալ սրտէն Հռովմէական կղերը կը պաշտպանէ, ու միայն Նօրֆօքի եպիսկոպոսութիւնը և Քանթօրպէրիի արքեպիսկոպոսութիւնը չկորսնցունելու համար բողոքականութիւնը ընդունած է։

ԷԹԷԼՎՈՒՏ. Սուսէքսի կոմսը ինչպէս է։

ՀԷՆՐԻ. Ճիշդ գտար խենդը, որ տէրութեան գիւանագրքերը պճնասիրութեան ծախքերով պիտի լեցնէ։ Ոչ, դուքս.... իմ թագաւորութեանս այնպիսի տեղակալ մը պէտք է, որ քաջասիրտ միանգամայն խոհեմ ըլլայ. ասկէ զատ՝ պէտք է որ այդ անձը զիս և ինձմէ աւելի Անգլիան սիրէ....։ Մտածենք ուրեմն.... Այս յատկութիւնները ունեցող մէկը չեմ ճանչնար։

ԷԹԷԼՎՈՒՏ. Ո՛չ, Վեհափառ տէր։

ՀԷՆՐԻ. Շատ խոնարհ ես եղեր, և կամ կոյր....

ԷԹԷԼՎՈՒՏ. Ինչո՞ւ համար. արդեօք Ձեր Վեհափառութիւնը ինձ համար կը մտածէ....

ՀԷՆՐԻ. Ո՛հ, գտար վերջապէս. այո՛, դուքս, դուն ես ինձ պէտք եղած այն անձը, որ ժողովուրդին սիրելի ըլլալով, ուրախութեամբ այն աստիճանին հասնելդ պիտի տեսնեն անոնք, ու ազնուականները աննախանձ սրտիւ զքեզ պիտի յարգեն։ Ասկէ զատ քեզ ուրիշ խօսք մը ունիմ, այնպիսի խնդիր մը, որ խիստ յանդուգն բերաններուն տրտունջը անդամ կը կասեցընէ։

ԷԹԷԼՎՈՒՏ. Խօսեցէք, Վեհափառ տէր։

ՀԷՆՐԻ. Քեզ շնորհած պատիւէս աւելի մեծ պատուոյ արժանացած ես տարիէ մը 'ի վեր։

ԷԹԷԼՎՈՒՏ. Ե՞ս։

ՀԷՆՐԻ. Այո՛, դուն. թէև բերանըդ սրտիդ գաղտնիքը յայտնած չէ, բայց մէկը քու աչացդ մէջ զան իմանալու կարող եղած է... Դուքս, դուն իմ քոյրս կը սիրես....

ԷԹԷԼՎՈՒՏ. Վեհափառ տէր....

ՀԷՆՐԻ. Երէկ քու վրայօքդ Մարգարիտ իշխանուհւոյն հարցուցի։

ԷԹԷԼՎՈՒՏ. Ան զիս չսիրեր, Վեհափառ տէր....

ՀԷՆՐԻ. Իշխանուհին զքեզ կը սիրէ։

ԷԹԷԼՎՈՒՏ. Ո՛վ Տէր Աստուած։

ՀԷՆՐԻ. Գոնէ այս անգամ սիրտս և քաղաքականութիւնս իրարու համաձայն պիտի ըլլան։ (Ձեռքը Էթէլվուտին երկնցընելով։) Էթէլվուտ, դուն երջանիկ պիտի ըլլաս, ու քու երջանկութիւնդ իմ հանգստութիւնս պիտի ապահովցընէ. անատեն զքեզ իմ տեղս ոչ միայն իբր բարեկամ, այլ իբր եղբայր, և թագաւորութեանս տեղակալ թողլով, աներկիւղ պիտի մեկնիմ. վասն զի եթէ ինծ դժբաղդութիւն մը հասնի, ինչպէս որ Մարիամ և Եղիսաբեթ իշխանուհի աղջիկներս ըստ օրինի չեն կրնար ինծ յաջորդել, և Էտուար իշխան զաւակս իր վատառողջութեամբը անկարող է աս բանին, և ես իշխանութիւն ունիմ ինծ յաջորդ մը ընտրել, (Ոտք ելլելով։) ուստի, եղբայր, քու ձեռքդ կտակ մը պիտի թողում, որուն օրինակը մեծ-սենեկապետին քովը պիտի մնայ։

ԷԹԷԼՎՈՒՏ. Վեհափառ տէր...

ՀԷՆՐԻ. Ի՞նչ պիտի ըսես։

ԷԹԷԼՎՈՒՏ. Անարժան եմ ես այդ բարեացդ։

ՀԷՆՐԻ. Ի՞նչպէս։

ԷԹԷԼՎՈՒՏ. Ձեր Վեհափառութեան առաջարկութեանց մէկն ալ չեմ կրնար ընդունիլ։

ՀԷՆՐԻ. Ի՞նչ ըսել կ'ուզես, Դուքս... խենդեցա՞ր։

ԷԹԷԼՎՈՒՏ. Վեհափառ Տէր, գիտեմ թէ որչափ ապերախտ և յիմար պիտի երևիմ ձեր առջև.... բայց ինչ ընեմ, անկարելի է, տէր իմ, չեմ կրնար ընդունիլ զանոնք։

ՀԷՆՐԻ, սրտմտական ձայնիւ. Խորհէ անգամ մը։

ԷԹԷԼՎՈՒՏ, գլուխը վեր վերցընելով. Խորհած եմ ես, Վեհափառ տէր։

ՀԷՆՐԻ. Թագաւորութեանս խնամակալութիւնը կը մերժե՞ս։

ԷԹԷԼՎՈՒՏ. Երախտապարտ եմ Ձեր Վեհափառութեան ինծ ըրած պատւոյն համար, բայց ես չեմ կրնար ընդունիլ զան։

ՀԷՆՐԻ. Մարգարիտ իշխանուհւոյն ձեռքը կը մերժե՞ս։

ԷԹԷԼՎՈՒՏ. Այսպիսի խնամութեան երբէք չէի սպասեր ու ես իմ արժանիքս գիտելով, ինքզինքս անարժան կը խոստովանիմ։

ՀԷՆՐԻ. Չե՞ս մտածեր որ բարեկամէն ետև թագաւորը կու գայ, և աղաչանքէն ետև՝ օրէնքը։

ԷԹԷԼՎՈՒՏ. Ամենէն նուիրական բանիդ սիրոյն համար ըլլայ, գութ ունեցիք վրաս. Վեհափառ տէր... ազատեցէք զիս իմ ճակատագրէս։

Ձեր աղաչանաց վրայ ապերախտ սեպուհցայ, ու ձեր օրէնքը գլխ ապստամբ մը կրնայ ընել....

ՀԷՆՐԻ. Ես ալ շատ հետաքրքիր եմ զքեզ նոյն վիճակին մէջ տեսնել։

ԷԹԷԼՎՈՒՏ. յառաջանալով. ու Թագաւորին ձեռքը բռնել ուզելով. Կ՚աղաչեմ Ձեր Վեհափառութեան...

ՀԷՆՐԻ, ցած ձայնով. Ետ քաշուէ, դուքս։

ԷԹԷԼՎՈՒՏ, ձեռքը սուրին տանելով. Վեհափա՛ռ տէր....

ՀԷՆՐԻ. Օգո՛յշ կեցիր, դուքս. Թագաւորին առջև ձեռքդ սուրիդ դաստապանին տարիր, և այդ բանը քրէական յանցանք մ՚է։

ԷԹԷԼՎՈՒՏ. Բայց ով Աստուած, ինչպէս ընեմ արդեօք....

ՀԷՆՐԻ. Մեր գահին բոլորտիքը քու բախտէդ աւելի շքեղ բախտերու փայլը տեսանք, բայց անոնց վրայ անգամ մը փչելով, շիջուցինք։

ԷԹԷԼՎՈՒՏ. Գիտեմ, Վեհափառ տէր....

ՀԷՆՐԻ. Դուն Տէրպիի մարքէզ ես, այնպէս չէ՞. այո՛, և Տարհէմի դուքս, ասկէ զատ ատենակալ Անգղիոյ. երեք հարիւր գիւղ ունիս, որոնց մէջ տասը հազար հպատակներ կը բնակին. իշխանաց մէջ դուն հարուստ և զօրաւոր ես..... Հիմա կարող եմ ես այդ տիտղոսները և հարստութիւնները կորզել քեզմէ մի առ մի, ու զքեզ իմ պալատիս դուռը նստող մուրացկանէն աւելի մերկ և աւելի աղքատ ընելով, մրրկածուփ փորձութեանց մէջ գահավիժել։

ԷԹԷԼՎՈՒՏ. Կարող ես, Վեհափառ տէր։

ՀԷՆՐԻ. Կրնամ զքեզ ատենակալաց ժողովը դատաստանի կանչել, ուր տակաւին դուն քու աթոռդ ունիս, և զքեզ իբր տիրանենգ ամբաստանել, այո՛, դուքս, դուն քրէական յանցաւոր ես, ըստ որում ձեռքդ սուրիդ դաստապանին տարիր, ան ալ Թագաւորին առջև։

ԷԹԷԼՎՈՒՏ. Ըրածս չեմ կրնար ուրանալ։

ՀԷՆՐԻ. Եւ երբ մահուանդ դատապարտութիւնը տրուի, Տըռլիի, Նորֆոլքի, և Քրօմուէլի գլխատութեան բեմը մատովս պիտի ցուցընեմ քեզ։

ԷԹԷԼՎՈՒՏ. Ես ալ անոր վրայ պիտի ելլեմ։

ՀԷՆՐԻ. Ո՛հ, չափը անցուցիր, դուքս, և պիտի տեսնես թէ մեր երկուքնէս ով պիտի ընկճի։ (Քանի մը քայլ կը յառաջանայ դուրս ելլելու համար ու Էթէլվուտ անոր ետեւէն կ՚երթայ։) Կեցի՛ր։

ԷԹԷԼՎՈՒՏ. Վեհափառ տէր, ես տակաւին Տէրպիի մարքէզ, Տարհէմի դուքս, Անգղիոյ ատենակալ եմ, ու Ձեր Վեհափառութեան այս միջոցիս գտնուած պալատը տակաւին իմս է. ատենակալաց ժողովը դեռ իմ յանցաւոր ըլլալս չվճռեց.... Ուստի ես միշտ Ձեր հպատակը ու հաւատարիմն եմ. այս տիտղոսով իրաւունք ունիմ մինչև դուռը ձեզի հետ ընկերանալ, ուր ձեր ուղեկիցները ձեզ կ՚սպասեն, ու իմ պարտաւորութիւ-

նըս է ձի հեծնելու ատեններդ աս_պանդակը բռնել։

ՀԵՆՐԻ. Եկու ուրեմն, դուքս, բայց ճշմարիտ կ'ըսեմ որ այս վեր_ջին անգամը պիտի ըլլայ որ այդ պատիւը քեզ կը տրուի։

Դուրս կ'ելլեն։

## ՏԵՍԱՐԱՆ Թ.

ՔԱԹԵՐԻՆ, առանձին ու կամաց կամաց յառաջանալով։

Ո՛հ, ահա Թագաւորը որ զիս կը սիրէ, այն անձը որ իմ գերեզմանիս մէջ իջնելով, հարսնախօսութեան այս մատնին մատս դրած է, ու գը_լուխս ալ պսակ մը պիտի դնէր. Ի՛նչպէս իր բոլորտիքը եղողներէն մեծ և զօրաւոր է, և իր քովը Ան_գլիոյ արևուն փառաւոր շքադիրները կազմող այն կոմսերը, մարքէզները և դուքսերը տկար և փոքր կ'երե_ւին.... ո՛հ, ամէնքն ալ հոն են, (Պատուհանէն դուրս նայելով.) որոնք գլխաբաց և խոնարհութեամբ կանգնած են, ու ինքը բարձրագլուխ անոնց մէջէն կ'անցնի.... Բայց ինչ կը տեսնեմ, Էթէլվուտ ծունր դրած և անոր ասպանդակը բռնած է.... Էթէլվուտ, մարդ մը, ազնուական մը, իմ ամուսինս. ո՛հ, ինչ ա_մօթ.... Ահա հիմա կ'երթայ դէպ 'ի այն քաղաքը, որուն դռները պի_տի բացուին զան ընդունելու հա_մար, բազմաթիւ պալատականաց ըն_կերութեամբը, որոնցմէ մէկը ան_գամ չհամարձակիր Թագաւորին ձիուն իրենց մինչև գլուխը հանած փոշին թօթվելու..... Ո՛հ, Թագաւոր, Թագաւոր, կեանքդ վարէ, գքեզ շրջապատողներուն նուաստութենէն վեր բարձրացիր. որչափ մարդիկ ստոր հանես, այնչափ մեծ պիտի ըլլաս և այնչափ քովդ նստեցուցած տիկինդ մեծ պիտի երևի..... Ո՛հ, արդեօք այրի պիտի մնամ.....

## ՏԵՍԱՐԱՆ Ժ.

ՔԱԹԵՐԻՆ, ԷԹԵԼՎՈՒԴ՝ գունատեալ և խոնջած ներս մտնելով։

ԷԹԵԼՎՈՒԴ. Քաթէրին.

ՔԱԹԵՐԻ՛Ն, Թագաւորին ետեւէն նա_յելով. Հո՛ս եմ։

ԷԹԵԼՎՈՒԴ. Ամէն բան կատարեալ է. գրիչ մը և քիչ մը մագաղաթ տուր ինձ.

ՔԱԹԵՐԻ՛Ն. Ի՞նչ պիտի ընես։

Մէկէն գրասեղանին առջեւը կը նստի և կը գրէ։

ԷԹԵԼՎՈՒԴ, գրած ատենը. Թագա_ւորը հոս գտնուած ատենը ո՞ւր էիր։

ՔԱԹԵՐԻ՛Ն. Այս սրահակին ետին.

ԷԹԵԼՎՈՒԴ, մեղմ գրելով. Խօսե_ցածնիս լսեցի՞ր։

ՔԱԹԵՐԻ՛Ն. Ամէն բան.

ԷԹԵԼՎՈՒԴ. Գիտե՞ս որ բոլոր ստացուածքս յարքունիս գրաւուեցան.

ՔԱԹԵՐԻ՛Ն. Այո՛։

ԷԹԵԼՎՈՒԴ. Բոլոր տիտղոսներս կորսնցուցի.

ՔԱԹԵՐԻ՛Ն. Այո՛։

ԷԹԵԼՎՈՒԴ. Կեանքս ալ վտանգի մէջ է։

ՔԱԹԷՐԻՆ. Այո՛, բայց թագաւորը աս ամենը ընելէն առաջ՝ կը մտածէ անշուշտ....

ԷԹԷԼՎՈՒՏ, ոտք ելլելով, ու անոր նայելով. Գիտե՞ս արդեօք թէ որո՛ւ համար այս ամէնը կը կորսնցնեմ։

ՔԱԹԷՐԻՆ, անոր գրկացը մէջ նետուելով. Այո՛, գիտեմ։

ԷԹԷԼՎՈՒՏ. Ահա սպասած վայրկեանս հասաւ։

ՔԱԹԷՐԻՆ. Ի՞նչ ըսել կ'ուզես։

ԷԹԷԼՎՈՒՏ. Ի՛նչ որ դուն ինծի ըրիր, հիմա փոխարէնը ես քեզի պիտի ընեմ։

ՔԱԹԷՐԻՆ. Ի՞նչպէս։

ԷԹԷԼՎՈՒՏ. Այն թմբրեցուցիչ ըմպելիքին թոյն ըլլալուն վրայ վախցած ատենդ՝ սրուակին մէջ մնացածը քեզ ցուցուցեր էի.

ՔԱԹԷՐԻՆ. Ո՛հ, տէր իմ Աստուած։

ԷԹԷԼՎՈՒՏ. Հիմա, Քաթէրին, իմ սիրելիս, կարգը իմս է մեր երջանկութեան համար ընել ինչ որ դուն իմ երջանկութեանս համար ըրիր, կարգը իմս է տարիքէս առաջ գերեզմանը իջնալ, ինչպէս որ դուն իջար, կարգը իմս է մարդոց և աշխարհի համար մեռնիլ. ու քեզի համար նորէն ծնիլ։

ՔԱԹԷՐԻՆ. Ո՛հ, մի՛ ըներ այդ բանը։

ԷԹԷԼՎՈՒՏ, դարտակ սրուակը անոր ցուցունելով. Նայէ՛։

ՔԱԹԷՐԻՆ. Ո՛հ, պարպեցի՛ր.... Հասէք, երթամ օգնութեան կանչեմ....

ԷԹԷԼՎՈՒՏ. Լռէ՛, և մտածէ որ կորսնցընելու վայրկեան մը անգամ չունինք, վայրկեաններս համրուած են, և ես քեզի հազար ու մէկ խօսք ունիմ խօսելու։

ՔԱԹԷՐԻՆ. Էթէլվուտ.... Էթէլվուտ.... Աստուծոյ սիրոյն... ո՛հ, ինչպէս կը դեղնիս....

ԷԹԷԼՎՈՒՏ. Ո՛հ, մի՛ վախնար. Քաթէրին. գիտես աղէկ որ աս մահը կեղծ է։ Աս մագաղաթին վրայ գրած եմ, որ Հէնրիին բարկութենէն վախնալով, ու գլխատութեան բեմը ելլելու նշաւակութենէն ազատիլ ուզելով, ինքզինքս թունաւորած եմ....։ Աս կերպով մահս ամէն մարդու հաւանական պիտի երևի, և ամենևին մէկը տարակոյս մը պիտի չունենայ, քանզի յայտնի պատճառ մը կայ։

ՔԱԹԷՐԻՆ. Էթէլվուտ, Էթէլվուտ, զԱստուած փորձել է այդ։

ԷԹԷԼՎՈՒՏ. Ես արդէն անոր աւելի սիրելի գանձ մը վստահեցայ, ու ան ինծի ետ դարձուց զան։ Մտիկ ըրէ, տակաւին քանի մը խօսք ունիմ քեզ ըսելու, ո՛հ, ահա կ'ըզգամ, մահը գլխ կը պատէ։ Մտիկ ըրէ, ես իմ սերունդիս վերջինն եմ, ոչ ընտանիք ունիմ, ոչ ծնողք, և ոչ իսկ դուցէ բարեկամ։ Մեռնելէս ետև անունս պիտի կորսուի, և ստացուածքս թագաւորը պիտի գրաւէ. բայց անհոգ եղիր, ես ուրիշ բաւական ոսկի և գոհարեղէններ ունիմ, որոնցմով ուրիշ դքսութիւն մը գնելու կարող եմ։

ՔԱԹԷՐԻ՛Ն, ուրիշ բանի վրայ մտածելով · Ի՞նչ կ'ըսես ։

ԷԹԷԼՎՈՒՏ · Այն կ'ըսեմ որ գերեզմանիս դուռը վրաս գոցուած օրէն ետեւ՝ մէկը պիտի չյիշէ զիս, ու մէկը պիտի չգտնուի որ այն դրան առջեւը ծնկան վրայ գալով ու լալով այս խօսքը ըսէ · ՛Ո՛վ Աստուած, ինչպէս անգութ ես եղեր որ այս երիտասարդին կեանքը վերցուցիր՛ · · · ։ Միայն դուն աշխարհի մէջ իմ յիշատակս պիտի պահես, դուն միայն այս գերեզմանին մէջ ամփոփուած անձին վրայ պիտի մտածես, որուն դուռը երկու բանալիով պիտի բացուի ։

ՔԱԹԷՐԻՆ · Երկո՞ւ բանալիով ։

ԷԹԷԼՎՈՒՏ · Այո՛, որոնց մէկը թագաւորին պիտի յանձնուի իբր իմ ժառանգորդիս ։

ՔԱԹԷՐԻՆ · Եւ միւսը ·

ԷԹԷԼՎՈՒՏ, անոր բանալի մը տալով · Քեզի, իբր իմ կնոջս ·

ՔԱԹԷՐԻՆ · Ո՛չ, այդ բանալին դուն պահէ, քանզի երբ արթննաս, հարկաւորութիւն պիտի ունենաս անոր ·

ԷԹԷԼՎՈՒՏ · Քեզմէ զատ ուրիշ ո՞վ պիտի պահէ, սիրելիս · մոռցա՞ր որ յուղարկաւորութեանս հանդէսին պիտի չկրնաս գտնուիլ ։

ՔԱԹԷՐԻՆ, բանալին առնելով · Իրաւունք ունիս ։

ԷԹԷԼՎՈՒՏ · Հիմա, սիրելիդ իմ Քաթէրին, քաղցր գրկախառնութեամբդ և խանդակաթ խօսքերովդ շրջապատէ իմ վերջին վայրկեաններս · (Ծնկան վրայ գալով ·) որպէս զի որչափ որ աչքերս բաց են, կարող ըլլամ քու աչացդ մէջ սիրոյ և երջանկութեան զգացումները կարդալ · (Քաթէրին բազմոցի մը վրայ կ'իյնայ ·) որպէս զի որչափ որ կրնամ լսել, ըսես ինձ թէ կը սիրես զիս այն քաղցր և սիրալիր ձայնովդ, որ իմ քունիս մէջէն զիս պիտի արթնցընէ · վասն զի, դուն հոն գտնուելով, նայուածքդ աչացս հաստատած, ու ձեռքդ սրտիս վրայ դրած կենացս դարձը պիտի հսկես ։ (Մատնին միտքը գալով ·) Բայց այդ մատնին, ո՛հ, ինձ տուր զան ։

ՔԱԹԷՐԻՆ · Ահա՛ առ ։

ԷԹԷԼՎՈՒՏ · Ո՛րչափ կը սիրեմ ըզքեզ, և ո՛րչափ երջանիկ եմ զքեզ սիրելուս համար ։ Ո՛հ, խօսէ՛, կ'աղաչեմ, ըսէ՛ ինձ բերանովդ թէ զիս կը սիրես, թէ դուն իմս ես, և երջանիկ ես իմս ըլլալուդ համար · Ո՛հ, այդ շրթունքները, այդ սիրուն շրթունքները · · ·

ՔԱԹԷՐԻՆ · Էթէլվուտ, սիրելիս ։ — Ո՛հ, չեմ գիտեր թէ ինչ ըսեմ ·

Իր գրկացը մէջ կ'առնու զան և կը համբուրէ ։

ԷԹԷԼՎՈՒՏ · Ո՛հ, անկարելի է ինձ ժամ մը միայն քեզմէ բաժնուիլ ։ Դունչիդ հուրը արիւնս կ'այրէ · քիչ մը օդ, Քաթէրին, կը մարիմ (կ'իյնայ ·) Քաթէրի՛ն · · ·

ՔԱԹԷՐԻՆ, մէկ ծնկան վրայ գալով, եւ Էթէլվուտի գլուխը միւս ծնկան վրայ առնելով · Ո՛վ Տէր իմ Աստուած ։

ԷԹԷԼՎՈՒՏ · Աչքերս կը մարին, ականջներս չեն լսեր · · · · · Ձեռքդ ինձ տուր · · · (Ուժով սեղմելով զան ·)

...նէ, Քաթերին, իմ սէրս, հրեշտա-կըս, հոգիս... Մնաս բարեաւ. վաղը նորէն տեսնուինք....

Էրնեստօ [illegible] Քաթերինէ [illegible] վրայէն կը առնէ և [illegible]. Քաթերին իր առջևը [illegible]

[illegible] այս դէպքին վրայ [illegible] [illegible] իր [illegible] անոր [illegible] վրայ կը դնէ, և [illegible] որ անոր [illegible]. [illegible] անոր [illegible] կը [illegible] և իր [illegible] կը դնէ։

# ԱՐԱՐՈՒԱԾ ԵՐՐՈՐԴ

## ՀԻՆԳՆԵՐՈՐԴ ՊԱՏԿԵՐ

*Առաջին արարուածին տեսարանը։*

### ՏԵՍԱՐԱՆ ԱՌԱՋԻՆ

ՀԷՆՐԻ, ՄԱՐԳԱՐԻՏ ԻՇԽԱՆՈՒՀԻՆ.

ՄԱՐԳԱՐԻՏ, Թագաւորին ոտից ներքեւը նստած եւ գլուխը անոր ծնկացը կռթընցուցած. *Ներեցէք ինձ, տէր իմ, որ ձեր առջին քիչ մը լամ. վասն զի դուք միայն գիտէք իմ արտասուացս պատճառը... ոհ, ինչ ատրիճան և որչափ երկար ժամանակէ 'ի վեր կը սիրէի զան։*

ՀԷՆՐԻ. *Համբերութիւն, սիրելիս։*

ՄԱՐԳԱՐԻՏ. *Ընդհակառակ օր դուք յուսահատութեան մէջ եղած ատեններդ, ինչպէս որ այսօր ես եմ, միթէ ես ձեզի ըսի, եղբայր իմ, թէ Համբերութիւն ըրէք. — ոչ... այլ ըսի. Լացէ՛ք, եղբայր իմ, լացէ՛ք, վասն զի սրտերնիդ արտասուքով լցուած է։*

ՀԷՆՐԻ. *Բայց տես հիմա ես իմ բոլոր ցաւերս մոռցայ... այնպէս որ կարծես թէ ամենևին վիշտ մը չունեցայ։*

ՄԱՐԳԱՐԻՏ. *Կը հաւատամ, վասն զի ինծի պէս ձեր առաջին սէրը չէր ան, և ագահի մը իր գանձը պահածին պէս զան ձեր սրտին մէջ երկու տարիէ 'ի վեր չէիք պահեր.... ասկէ զատ՝ դուք մարդ էք և Թագաւոր. ձեր քաղաքականութեան և փառասիրութեան մէջ կին մը այնչափ յարգ չունի.... բայց ես ինչ կրնամ ընել, ես որ առանձնակեաց և յիմար երջանկութիւն մը կ'երազէի, և աւելի կը փափաքէի գահին աստիճաններէն վար իջնալ, որոնց վրայ գուցէ իմ տեղս ուրիշ մը կը վերամբառնալ ուզէ.... բայց ըսէք ինձ, Հէնրի, այդ ինչ հողմ է, որ փոխանակ*

երկինքէն գալու, երկրիս վրայէն ձեր պալատին բոլորտիքը կը փչէ... և այսպէս բոլոր առոյգները և գեղեցիկները կը չորցընէ։ Ո՛հ, Հէնրի, Հէնրի, այնչափ մահուան կը հրամայէք, որ մահն ալ ձեզ կը հնազանդի....

ՀԷՆՐԻ. Ճշմարիտ կ'ըսեմ, Մարգարիտ, տուած դատապարտութեանցս և ոչ մէկը խղճմտանքս անհանգիստ ըրած է, և քունիս մէջ ամենևին երբեք մը զիս չտագնապեր.... Եթէ Նմիթընի և Տըրալի մահուան համար զիս մեղադրել կ'ուզես, թագուոր հօրս իշխանութեան ժամանակ անոնց դէմ տրուած վճիռը միայն վաւերացուցի ես։ Թէ որ Վօլսէյի դատապարտութիւնը կը յիշես, ան օրինազանց, շուայտ, և արիւնըռուշտ մարդուն մէկն էր, որ իր կարդինալի զգեստը ոչ թէ ծիրանիով այլ արեամբ ներկած էր. Ֆիշէրի գլխատութեան պատճառը, անոր անէրուութեան դէմ յանցաւոր ըլլալն էր, որուն դարձեալ կրնայի ներել, թէ որ Պօղոս Գ՝ կարդինալի գլխարկը անոր բանտը ղրկելով, արքեպիսկոպոսին գլուխը ինծմէ չխնդրէր. Վստահիտ Քրօմուէլը սպաննել տալու համար իրաւացի պատճառներ ունէի, վասն զի ան իր տորին ստրճանէն բարձրանալով իր նախորդին մարմինը իրեն պատուանդան ըրեր էր, և վասն զի որբերուն ու այրիներուն լացերը մինչև գահս բարձրացեր էին.... Ան՝ որ Պուլէնի վրայօք չեմ ուզեր խօսիլ, քանզի ան ոչ ինծի այլ Անգլիոյ ատենակալներէ, զօրապետներէ և արքեպիսկոպոսներէ բաղկացեալ ժողովքէ մը դատապարտուեցաւ։ Դատավճիռը անոնք տուին և ոչ ես. միայն իմ ստորագրութիւնս անոր տակը դրի և ոչ ուրիշ բան.... ո՛հ, ոչ, քոյր իմ. աս ամեն եղածները աշխարհի բաղդին գործերն են, և ոչ Աստուծոյ պատիժը։

ՏԵՂԻՆ ՓՈԽԻ Ի ՊԱՐՏԷԶ։

ՄԱՐԳԱՐԻՏ. Ամենէն մեծ կորուստը ձերն է, եղբայր իմ, քանզի ձեր գահին բոլորտիքը շողքորթող պալատականներուն մէջ ան էր միայն Հէնրին սիրողը։

ՀԷՆՐԻ. Գիտեմ։

ՄԱՐԳԱՐԻՏ. Այս կորուստը գահին մեծ վնաս պիտի տայ։

ՀԷՆՐԻ. Գիտեմ։

ՄԱՐԳԱՐԻՏ. Ազնուականաց ամենէն ազնուականը և քաջաց քաջն ան էր։

ՀԷՆՐԻ. Գիտեմ։

ՄԱՐԳԱՐԻՏ. Սակայն, եղբայր իմ, դուք սպաննեցաք, դուք էք պատճառը որ անոր գլուխը այս դժբաղդութիւնը եկաւ. դուք պատճառ եղաք անոր...

ՀԷՆՐԻ. Չե՛ս գիտեր, քոյր իմ, որ իմ արքունի գաւազանս, թագս և գանձս աւելի սիրով այս պատուհանին տակը եղած անդունդին մէջ պիտի նետէի, քան թէ անոր ըրած ըսպաննալիքս ընէի...

ՄԱՐԳԱՐԻՏ. Այո՛, եղբայր իմ, այդ սպառնալիքը ընելնուդ համար ան ալ մեռաւ։

ՀԵՌՈՒԷՆ ԹՆԴԻՒՆ ԿԸ ԼՍՈՒԻ. Ի ՆՇԱՆԱԿ ՄԸ ՏԷՐԷՆ։

ՀԷՆՐԻ. Լաւ, Մարգարիտ. բարձր խորհրդարանի անդամները կու գան անոր սուգը կատարելու: Շուտով մենակդ գնա:

ՄԱՐԳԱՐԻՏ. Ո՛չ, կ'աղաչեմ, թողուցէք զիս որ անգամ մը ևս անոր վրայօք խօսելնին լսեմ. Ո՛հ, ինչպէս անոր անունը շուտով պիտի մոռցուի.... Ես ինքզինքս պիտի զսպեմ ու հանդարտ պիտի երևիմ. ամենևին մէկը պիտի չկրնայ իմանալ որ ես լացեր եմ. բնաւ մէկը պիտի չհասկընայ իմ սրտիս տագնապը.... Թողուցէք զիս որ տեսնեմ այն անձերը, որոնք անոր քովէն կու գան, և որոնք երէկ անոր վրայ այն դուռը գոցեցին, որ երբէք պիտի չբացուի.

ՆՈՒԻՐԱԿ ՄԸ. Վեհափառ Տէր, բարձր խորհրդարանի տէրերը ընդունելութիւն կը խնդրեն:

ԹԱԳԱՒՈՐԸ. Թո՛ղ ներս գան:

## ՏԵՍԱՐԱՆ Բ.

### ԱԹԱՋԻՆՆԵՐԸ, ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ԱՆԴԱՄՆԵՐԸ.

Անդամները ներս կը մտնեն, ու կարգաւ ներքին կողմը կը շարուին. Թագաւորը իր գահը կը նստի:

ՍՈՒՍԸՔՍ, Թաւիշէ բարձի մը վրայ բանալի մը բերելով, Թագաւորին առջևը ծընկան վրայ կու գայ. Վեհափառ տէր, երէկ, Տէրպիի մարքէզ, Տայրհէմի դուքս, և Անգղիոյ ատենակալ մը Նթէլըվուտ եղբօր մահկանացու մարմինը իր վերջին բնակարանին մէջ տեղաւորեցինք: Ազնուական և հին ազգատոհմի մը ամենէ վերջին և ամենէ ազնուականն էր ան. ըստ սովորութեան և ըստ օրինաց անոր գերեզմանին դուռը գոցելնէս ետև, ուր իր նախահարց մէջ կը ննջէ, ազնուականաց մէջ ամենէ երիտասարդը ես ըլլալուս՝ ինծ յանձնուեցաւ որ անոր բանալին ձեզի տամ, վասն զի Ձեր Վեհափառութիւնը Անգղիոյ Թագաւորը ըլլալով, բոլոր մեր սպառեալ գերդաստաններուն օրինաւոր ժառանգն է. Ահա այն բանալին, Վեհափառ տէր, որ յաւիտեանս բաժնեց կենդանեաց աշխարհէն Անգղիայի կուրծքի մը մէջ բաբախած ամենէ ազնիւ սիրտերէն մէկը:

ՀԷՆՐԻ. Շնորհակալ եմ, Սուսէքսի կոմս. դիր այդ բանալին և բարձը այս սեղանին վրայ: (Նուիրակ մը բարձը անոր ձեռքէն կ'առնու. սեղանին վրայ կը դնէ.) Շնորհակալ եմ ձեզի ալ, ով պարոններ, դուք պաշտօնակից մը կորսնցուցիք, ու ես բարեկամ մը. և կարծեմ թէ, ինչպէս անտարակոյս դուք ալ կարծել պէտք էք, այս կորուստը թէ ձեզի և թէ ինծ համար անդարմանելի է. Անոր ինչքը և տիտղոսները կ'ընդունիմ ոչ իբր ժառանգութիւն մը, այլ իբր աւանդ մը....: Եթէ այնպիսի մէկը գտնուի որ իւր հաւատարմութեամբը և քաջութեամբը անոնց արժանանայ, ան պիտի ըլլայ անոր օրինաւոր ժառանգը... Գացէք հիմա, պարոններ, դարձեալ շնորհակալ եմ ձեզ, և կ'աղաչեմ Աստուծոյ որ իւր սուրբ և նախախնամող շնորհաց մէջ պահէ զձեզ: (Անդամները կը խոնարհին եւ կամաց կամաց

կը մեկնին ։ Մարգարիտին ․ ) Այս մարգիկը տեսա՞ր, Մարգարիտ, ասոնք Անգղիոյ ազնուականութեան ամենէ ընտիր, ամենէ քաջ և ամենէ զօրաւոր անդամներն են. ասոնց մէջէն ո՛րն որ ընտրես, ճշմարիտ կ'ըսեմ որ իր տիտղոսներուն վրայ Տէրպիի մարքէզին և Տայրհէմի դուքսին տիտղոսները աւելցնելէս ետև՝ Անգղիոյ Հէնրի Թագաւորին քեռայրը ըլլալու պատիւն ալ պիտի շնորհեմ անոր ։

ՄԱՐԳԱՐԻՏ. Շնորհակալ եմ, Հէնրի. ժողովուրդը զձեզ աղէկ չէ ճանչցեր, շատ բարեսիրտ էք եղեր դուք ։ Ո՜հ, Եթէլվուտը սիրող սիրտը Աստուծմէ զատ ուրիշ մէկը չպիտի սիրէ.... և այս աշխարհիս հարստութիւններէն և փառքերէն բան մը չեմ պահանջեր, այո՛, բանի մը չեմ փափաքիր. (Առանձին, եւ բանաչին առնելով.) Եթէլվուտի գերեզմանին բանալիէն զատ ։ (Բարձր.) Մնաք բարեաւ, Հէնրի, ամենասիրելի եղբայր իմ, մնաք բարեաւ....

Դուրս կ'ելլէ։

## ՏԵՍԱՐԱՆ Գ.

ՀԷՆՐԻ՝ առանձին

Փակէ՛ քու դուռդ ալ, ո՛վ սիրտ իմ, գերեզմանի մը դրան փակուելուն պէս, վասն զի քու մէջդ պահուած սէրը անզգայացած է ալ. Ո՜հ, Քաթէրին, Քաթէրին ։

ՆՈՒԻՐԱԿ ՄԸ, ներս մտնելով. Վեհափառ տէր, երիտասարդ աղջիկ մը ժամէ մը 'ի վեր այս դրան առջևը սպասելով Ձեր Վեհափառութեան ունկնդրութիւնը կը խնդրէ ։

ՀԷՆՐԻ. Երիտասարդ աղջիկ մը, ի՞նչ պիտի ընէ զիս ։ Այսօր հասարակաց ունկնդրութեանս օրը չէ, թո՛ղ մեծ սենեկապետին երթայ ։

ՆՈՒԻՐԱԿԸ. Ձեր Վեհափառութեան հետ միայն կ'ուզէ խօսիլ։

ՀԷՆՐԻ. Ո՞ւր տեղացի է այդ աղջիկը ։

ՆՈՒԻՐԱԿԸ. Րիչմոնտ գիւղէն է եղեր ։

ՀԷՆՐԻ. Քաթէրին աս գիւղին մօտ կը բնակէր. ներս մտցուր այդ աղջիկը ։ (Նուիրակը դուրս կ'ելլէ.) Անշուշտ Քաթէրինի մէկ բարեկամը պիտի ըլլայ, որ իր սիրահարին համար օժիտ մը կը խնդրէ ։

ՆՈՒԻՐԱԿԸ. Ներս հրամայէ ։

Թագաւորը նշան մը կ'ընէ, Նուիրակը դուրս կ'ելլէ։

## ՏԵՍԱՐԱՆ Դ.

ԹԱԳԱՒՈՐԸ, ՔԱԹԷՐԻՆ՝ ծօղարկեալ դրան առջևը կը կենայ։

ՀԷՆՐԻ. Ի՞նչ կը խնդրես, աղջիկս ։ (Քաթէրին կամաց մը Թագաւորին քովը կը յառաջանայ, մէկ ծնկան վրայ կու գայ, եւ անոր տուած մատանին կը ներկայացընէ ։) Աս իմ մատնիս է.... Ո՞վ ես դուն ։ (Աշխուժիւ Քաթէրինի երեսի քօղը մէկ դի կ'առնու, ու Քաթէրին ծնկան վրայ գունատեալ եւ ակնկոր կը մնայ ։) Քաթէրին Հօուարտ..... Ինչպէս հոս գտնուեցար, ո՛վ Տէր Աստուած, արդեօք անոր ստուերն

է, թէ ստուգիւ ինքն է... (Ջոն ձեռք ձեռցընելով ու իր գրկացը մէջ առնելով։) Կենդանի՞ ես դուն, ո՛վ Քաթերին.... բայց ես զքեզ գերեզմանիդ մէջ պատանքուած, տժգոյն և մարմարեայ արձանի մը պէս սառած պառկած տեսայ.... ինչպէս Աստուած թողուց որ այն մահուան անկողինէն դուրս ելլես.... ո՛հ, խօսէ՛, խօսէ՛.... ձայնդ հանէ որ իմանամ թէ դուն ուրուական մը չես։

ՔԱԹԷՐԻՆ. Մեծափառ տէր, ինծի պէս որչափ երիտասարդ աղջիկներ մեռած կարծուած են, որոնք մարած ըլլալով իրենց գագաղին մէջ արթընցած են։

ՀԷՆՐԻ. Ո՛հ, եթէ այս բանս ըստոյգ է, ուրիշ ձայնով մը խօսէ ինծի հետ. Թող կեանքը վերադառնայ աչացդ մէջ և կարմրութիւնը այտերուդ վրայ. եթէ ոչ՝ անկարելի է ինծի հաւատալ։ — Ո՛հ, գիտե՞ս որ զքեզ կը սիրէի, Քաթերին։

ՔԱԹԷՐԻՆ. Այո՛, իմացայ։

ՀԷՆՐԻ. Գիտե՞ս որ յուսահատեալ գերեզմանիդ մէջ իջայ։

ՔԱԹԷՐԻՆ. Այո՛, իմացայ։

ՀԷՆՐԻ. Գիտես վերջապէս որ այս մատնին մատդ դնողը ես էի։

ՔԱԹԷՐԻՆ. Ատ ալ իմացայ, և ես հիմա զան ձեզ կը դարձընեմ, Մեծափառ տէր։

ՀԷՆՐԻ. Ո՞րչափ խորունկ քունի մէջ ընկղմած էիր որ քնացած ատենդ եղածներէն բան մը չես յիշեր։

ՔԱԹԷՐԻՆ. Բան մը չեմ յիշեր։

ՀԷՆՐԻ. Բայց անցեա՞լը։

ՔԱԹԷՐԻՆ. Անցեալը մոռցած եմ։

ՀԷՆՐԻ. Բոլորովի՞ն մոռցար։

ՔԱԹԷՐԻՆ. Այո՛, իմ կեանքս գերեզմանէս դուրս ելած ժամէս կ'ըսկըսի, և յիշողութիւնս անկէ անդին չերթար։ Իմ գոյութիւնս երկու մասի կրնայ բաժնուիլ, մէկը գիշերուան մէջ կորսուած, միւսը լուսոյ մէջ ընկղմած.....

ՀԷՆՐԻ. Բայց ինչպէս գերեզմանէդ դուրս ելար, սիրելիդ իմ Քաթէրին։

ՔԱԹԷՐԻՆ, իր ձեռքին մէջ սեղմած բանալին դիտելով. Ամէն գերեզման իր բանալին ունի, որ կը կղպէ և կը բանայ զան։

ՀԷՆՐԻ. Ո՛վ Աստուած իմ։

ՔԱԹԷՐԻՆ. Ի՞նչ ունիք։

ՀԷՆՐԻ. Կը սոսկամ երբ միտքս կը բերեմ որ դուն ինչպէս այն մեռելներուն մէջ կենդանի պիտի մնայիր, թէ որ մէկը չիմանար։

ՔԱԹԷՐԻՆ, ուրիշ բան մը յիշելով. ո՛հ, ինչպէս սոսկալի պիտի ըլլար անատեն։

ՀԷՆՐԻ. Բայց երևակայէ՛ անգամ մը. ինչ ահռելի դիպուած պիտի ըլլայ երբ գերեզմանին մէջ արթննայ մարդ, առանձին մնայ, զուր տեղը օգնութեան սպասէ, վայրկեաններուն, ժամերուն անցնիլը տեսնէ, ու անօթի ըլլայ։

ՔԱԹԷՐԻՆ, հաստատ նայուածքով ու ձեռքը գլուխը տանելով. Անագորո՛յն դիպուած....

ՀԷՆՐԻ. Եթէ օր մը իմանայի.... թէ ես հոս իմ պալատիս շքեղ փառաց մէջ եղած ատենս, սիրուն էակ

մը, սրտիս կէսը այնպիսի տանջանաց մէջ տագնապեր, գերեզմանին խաւարին մէջ գլորեր, ու գլուխը մարմարիոնին զարնելով Աստուծոյ անէծք կարդացեր է....

ՔԱԹԷՐԻՆ. Շնորհք ըրէք, տէր իմ։

Քաթէրին նուաղելու կ'իյնայ։

ՀԷՆՐԻ. Ո՛հ, նուաղեցաւ, ո՛վ Աստուած. այնպիսի յիշատակի մը չկրցաւ դիմանալ։ Քիչ մը օդ. օդի հարկաւորութիւն ունի։ (կը գրկէ եւ պատուհանին առջին կը բերէ զան.) Քաթէրին, Քաթէրին, ինքզինքիդ եկուր, ալ վախնալու տեղ չունիս։ Աստուած չուզեց որ դուն այդպէս գեղեցիկ եւ երիտասարդ հասակիդ մէջ զքեզ աշխարհէս քաշէ։ Քաթէրին, բաց նորէն քու գեղեցիկ աչքերդ. այս անգամ ձայնս առաջին անգամէն աւելի զօրաւոր թող ըլլայ։ Քաթէրին, Քաթէրին։ (Քաթէրին աչքերը կը բանայ եւ առանց շարժում մը ընելու հաստատ նայուածքով կը նայի։) Ո՛հ, ինքզինքդ գըտա՞ր.... Կը տեսնե՞ս զիս, ձայնս կը լսե՞ս, ո՛վ Քաթէրին։

ՔԱԹԷՐԻՆ. Այո՛։

ՀԷՆՐԻ. Յիշողութիւնդ եկա՞ւ։

ՔԱԹԷՐԻՆ. Այո՛, Ուայթ-Հօլի պալատին մէջ կը գտնուիմ. ահա՛, արքունական գահը. դուք թագաւորն էք, ու իմ ձեռացս մատնի մը կը պակսի։

ՀԷՆՐԻ. Ահա՛ առ աս մատնին, պահէ զան հիմա ու մէկ մ'ալ ձեռքէդ մի հաներ։

ՔԱԹԷՐԻՆ. Ուրեմն մեռեալ Քաթէրինին ըրած խոստմունքնիդ կենդանի Քաթէրինին ալ կը նորոգէք։

ՀԷՆՐԻ. Այո՛, ամէն ըրած խոստումներս։

ՔԱԹԷՐԻՆ. (բանալիին նայելով.) Բայց նորէն կրկնեցէք զանոնք, վասն զի ես չլսեցի, եւ կ'ուզեմ որ ականջովս լսեմ։ Խօսեցէք, Վեհափառ տէր, ըսէք ինծի այն դիւթական խօսքերը, որոնք յիշատակները կը մոռցընեն, միտքը կը զուարճացընեն, եւ սիրտը կը յափշտակեն.... Խօսեցէք, ահա մտիկ կ'ընեմ ձեզ։

ՀԷՆՐԻ. Երիտասարդ եւ գեղեցիկ կնոջ մը իր ամէնաքաղցր երազներուն մէջ երազել կրցած ամէն բանը պիտի ունենաս, եւ զօրութիւնս մինչեւ ուր որ կրնայ տարածուիլ, 'Կ'ուզեմ' ըսածիդ պէս՝ բաղձանքդ պիտի կատարուի.... Ըսէ՛ հիմա, գեղեցիկ Քաթէրինս, գո՞հ ես։

ՔԱԹԷՐԻՆ. Խօսեցէք, Վեհափառ տէր, խօսեցէք, մի կենաք։

ՀԷՆՐԻ. Այս պալատը, այս գահը երկուքնուս է. պերճութեանց եւ փառաց մէջ պիտի յղփանաս. ամէն օր պարահանդէսները, առնախմբութիւնները, նիզակախաղութիւնները, որոնց մէջ դուն երկու անգամ թագուհի պիտի ըլլաս, պիտի նորադուին քեզի համար, որպէս զի սիրտդ վայրկեան մը չձանձրանայ, եւ դուն երջանիկ պիտի ըլլաս, այնպէս չէ՞։

ՔԱԹԷՐԻՆ. Կը կարծէ՞ք որ երջանիկ ըլլամ, Վեհափառ տէր։

ՀԷՆՐԻ. Ո՞վ պիտի կրնայ քու երջանկութիւնդ խանգարել, դուն որ

երկինքէն ընտրուած ... երիտասարդ, գեղեցիկ, և սիրելի ես ...

ՔԱԹԷՐԻՆ, ոտք ելլելով. Եւ միանգամայն թագուհի ալ եմ։

ՀԷՆՐԻ. Այո, աս իրիկուն իսկ. Քանթօրպէրիի արքեպիսկոպոսը զմեզ պիտի միացընէ, ու վաղը քունէդ արթնցածիդ պէս՝ թագաւորական թիկնոցը վրադ առած ու պսակը գլուխդ դրած պիտի երևիս, ու ես իմ պալատականացս, Անգղիոյ, Եւրոպիոյ, և ժողովրդեան առջև պիտի հրատարակեմ թէ Քաթէրին Հօուարտ Հէնրի Ըին կինն է. և անատեն, պալատականներս, Եւրոպան և ժողովուրդը առջևդ խոնարհելով պիտի պատասխանեն. Կեցցէ Անգղիոյ և Գաղղիոյ թագուհին։

ՔԱԹԷՐԻՆ. աչքուժիւ մը պատուհանէն դուրս նայելով. Վեհափառ տէր, այս պատուհանին տակէն անցնող ջուրը խիստ խորո՞ւնկ է։

ՀԷՆՐԻ. Անդունդ մ'է այն։ (Տեսնելով որ Քաթէրին բանալին բռնած ձեռքը դուրս կ'երկնցընէ։) Ի՞նչ կ'ընես։

ՔԱԹԷՐԻՆ, բանալին նետելով. Ոչինչ։ (Առանձին) Թագուհի կ'ըլլամ։ (բարձր ձայնիւ.) Վեհափառ տէր, նշանածնիդ պատրաստ է...

ՀԷՆՐԻ, իր գրկացը մէջ առնելով. Ուրեմն սպասէ ինծի, Քաթէրին, սպասէ, հիմա կու գամ։

## ՏԵՍԱՐԱՆ Ե.

ՔԱԹԷՐԻՆ՝ առանձին.

Գնա՛, Հէնրի, գնա՛, վասն զի ալ այսուհետև քուկդ եմ.... ո՜վ Աստուած, արդեօք ստուգիւ արթո՞ւն եմ, թէ բոլոր տեսածներս երազ են.... ո՞վ այսուհետև պիտի դայ իմ յանցանացս կամ առաքինութեանս վրայօք ինծի խօսելու, հիմա որ սիրտս տենդով կը տոչորի, ու ես երկրիս աւազին և երկինքի ամպին պէս անհետևոյթ հողմէ մը մղուած կ'երթամ ուր որ մրրիկը զիս կը տանի, ուր որ Աստուած կ'ուզէ որ երթամ... բայց անցեալը, ո՜հ.... անցեալը ոչինչ է, ներկան է ինչ, ապառնին ամեն բան.. Այո, ես կ'ապրիմ, ու բոլոր տեսածներս ստոյգ են. ասկէ անդին ինչ հոգս է.... Ահա՛ իմ պալատս, ահա՛ իմ գահս.... ոտքս անոր առաջին աստիճանին վրայ դրած եմ. անոր վրայ պիտի ելլեմ, ու պիտի նստիմ.. ո՜հ, վաղը ես իմ Րիչմոնտի միայնակ տանս մէջ կամ Տայրհէմի գերեզմանատան մէջ պիտի արթննայի... բայց եթէ ստոյգ են աս տեսածներս, թող գան ուրեմն իմ իշխանութիւնս ճանչնան, առջևս խոնարհին, և զիս թագուհի կոչեն։

## ՏԵՍԱՐԱՆ Զ.

ԷԹԷԼՎՈՒԴ, ՔԱԹԷՐԻՆ.

ԷԹԷԼՎՈՒԴ, գունատեալ եւ ոգեւորեալ, Ցֆչէմինկի գործարանին դրան առջեւ երեւնալով, կամաց կամաց կը յառաջանայ մինչեւ գահին առաջին աստիճանին կը մօտենայ եւ խոնարհելով. Կեցցէ Քաթէրին Հօուարտ, թագուհի Անգղիոյ։

ՔԱԹԷՐԻՆ, դէպ 'ի ետին գրեթէ գե-

տինը իյնալով. Ո՛հ, սոսկում . . . աս ինչ աղետալի դիպուած է ։

ԷԹԷԼՎՈՒՏ. Վայրկեան մ'է տակաւին որ դուն Թագուհի եղար, Քաթէրին, և ահա բաղձանքներդ շուտով կատարուեցան ։

ՔԱԹԷՐԻՆ. Էթէլվուտ . . .

ԷԹԷԼՎՈՒՏ. Ո՛հ, ճանչցա՛ր զիս . . . գերեզմանը խիստ անհաւատարիմ տեղ մ'է, այնպէս չէ՞ . . . բայց դուն խիստ ապահով և խիստ խորունկ տեղ մը կը կարծէիր զան ։

ՔԱԹԷՐԻՆ. Գթա՛ ինձ, ո՛վ Տէր, արթնցուր զիս այս քունէն և մի՛ թողուր որ երկար ատեն այս դժոխային երազին մէջ մնամ ։

ԷԹԷԼՎՈՒՏ. Աս տեսածդ կ'ուզէիր որ երազ ըլլար, այնպէս չէ՞. բայց ո՛չ, Քաթէրին, դուն արթուն ես, ու քունի մէջ չես . . . .

ՔԱԹԷՐԻՆ. Ուրեմն ուրուական մը, ոգի մը կամ ստուեր մ'ես դուն . . . .

ԷԹԷԼՎՈՒՏ. Այո՛, ամենուն համար, բայց ոչ քեզի . . . . Քեզի համար, Քաթէրին, ես կ'ապրիմ . . . . Քեզի համար, ես քու ամուսինդ եմ . . . բայց ամենուն համար դուն այրի ես . . . .

ՔԱԹԷՐԻՆ. Ո՞ր դևը զքեզ գերեզմանէն դուրս հանեց ։

ԷԹԷԼՎՈՒՏ. Մոռցա՞ր, Քաթէրին, որ մի և նոյն դուռը երկու բանալիով կը բացուի և կը գոցուի, որոնց մէկը ես քեզի յանձնեցի ու միւսը Թագաւորին պիտի յանձնուէր . . . Մոռցա՞ր, որ երկու կին կար, որոնց մէկը ես չէի սիրեր ու ան զիս կը սիրէր, և անոր անունն էր Մարգարիտ իշխանուհի. միւսը ես կը սիրէի ու ան զիս չէր սիրեր, և անոր անունն էր Քաթէրին Հօուարտ . . . . Այս կիները իրենց խաղը իրարու հետ փոխեցին. ան որ պէտք էր զիս յիշել՝ մոռցաւ, և ան որ մոռնալ պէտք էր՝ յիշեց . . . այնպէս որ աչքերս բացած ատեն՝ գերեզմանիս մէջ մէկին տեղը միւսը գտայ . . . . ահա եղածը ։

ՔԱԹԷՐԻՆ. Ո՛հ, ներէ՛ ինծի, Էթէլվուտ . . . . . (Անոր մօտենալով.) Ներէ՛ ինծի, ելլենք ասկէ ու միատեղ փախչինք, ինչպէս որ կ'ուզէիր . . . . ես քուկդ եմ, վերարկուիդ մէջ ծածկէ զիս . . . տար զիս ուր որ կ'ուզես . . . և աշխարհիս առանձին և անապատ անկեան մը մէջ պահէ զիս . . Շուտ ըրէ, փախչինք ասկէ ։

ԷԹԷԼՎՈՒՏ, զան մէկդի հրելով. Ո՛չ, տիկին, ամեն ճակատագիր պէտք է որ կատարուի այս աշխարհիս մէջ . . . երկուքնուս ճակատագիրն ալ . . .

ՔԱԹԷՐԻՆ. Էթէլվուտ, շնորհք ըրէ . . . .

ԷԹԷԼՎՈՒՏ. Դուն պարզ աղախին մ'էիր, բաւական չէ՞ր քեզի Տէրպիի մարքէզուհի, Տայրհէմի դքսուհի, և Անգլիոյ ատենակալի կին ըլլալ . . . աս ամենը դուն ոտքի տակ առիր, և Թագուհի ըլլալ ուզեցիր . . . . և ահա դուն քու փառքիդ հասար . . . . Հէնրի Ըին սէրէն չվախցար ամենեւին . . . բայց մեղք որ այն սէրը ըզքեզ պիտի փճացընէ ։

ՔԱԹԷՐԻՆ. Կ'աղաչեմ, գութ ունեցիր քիչ մը ։

ԷԹԷԼՎՈՒՏ. Ուզեցիր որ դլուխդ թագ դնես, բայց այդ գլուխդ դըրած թագդ քու մազերդ պիտի ճերմկցընէ.... Արքունի դաւազան բըռնել ուզեցիր, այդ դաւազանը քու ձեռքդ պիտի չորցընէ.... Գահը ելլել ուզեցիր.... պիտի ելլես անոր վրայ.... բայց անկէ իջնալու ատենդ՝ ոտքդ Ան՚ տը Պուլէնի գլխատութեան սեղանին պիտի զարնես ։

ՔԱԹԸՐԻՆ, երկու ձեռքերովը անոր դուռբանոցը փաթթուելով. Ով Աստուած իմ, գթա ինձ ։

ԷԹԷԼՎՈՒՏ. Նչ. որպէս զի, տիկին, այդ քունիդ մէջ քաղցր երազներ տեսնես, այնպիսի անկողին մը պէտք է քեզ, ուր արդէն չորս թագուհի պառկած են ։ Գոցէ՛ ուրեմն աներկիւղ քու աչքերդ, Քաթէրին, և ութը օրէն՝ պիտի ըսես ինձ ինչ որ այն թագուհիները քու գերեզմանիդ մէջ կամաց մը քեզ խօսեցան, ու ես պիտի գամ քեզի հարցընելու ։

ՔԱԹԸՐԻՆ. Օ՚քեզ նորէն պիտի տեսնե՞մ ուրեմն ։

ԷԹԷԼՎՈՒՏ. Կը տարակուսիս տոոր վրայ, Քաթէրին... մենք եկեղեցիի մէջ իրարու հետ միացած չե՛նք, և չէ՞ որ եկեղեցիին միացուցածը միայն մահը կրնայ բաժնել... Այո՛, նորէն պիտի տեսնես զիս, այս պալատիս ամենէն գաղտնի ճամբաները ինձ ծանօթ են. վասն զի Վիլէմինկ և Մարգարիտ իշխանուհին պիտի օգնեն ինձ աս բանիս մէջ լաւութեամբ.... Քաթէրին Հօուարտ Անգղիոյ թագուհի ըլլալով՝ Տէրպիի մարքէզուհի ալ չէ՛ կրնար ըլլալ.... ես Հէնրիէն աւելի իրաւունք ունիմ քու վրադ, և թէպէտ անոր հաւատարիմ հպատակն եմ, սակայն միայն ձեր կէսը անոր թողելու կը հաւանիմ ։

ՔԱԹԸՐԻՆ. Ըսէ՛ ինձ, Էթէլվուտ, ի՞նչ պիտի ընես ։

ԷԹԷԼՎՈՒՏ. Ուշ և դժուարութեամբ գահը բարձրացար, Քաթէրին. անոր երջանկութիւնը վայելելու մի՛ ուշանար, վասն զի շուտով և սահելով պիտի իջնաս անկէ ։

ՔԱԹԸՐԻՆ. Օ՚խս կորսնցընելով ինքըզինքդ ալ մէկտեղ պիտի կորսընցընես ։

ԷԹԷԼՎՈՒՏ. Նչս արդէն քեզի ըսի, Քաթէրին, երկուքնուս ճակատագիրն ալ նոյնը պիտի ըլլայ թէ կենաց և թէ մահուան մէջ.... Մենք մի և նոյն անկողնոյն մէջ պառկեցանք, գլխատութեան մի և նոյն բեմին վրայ պիտի ելլենք, ու մի և նոյն գերեզմանին մէջ պիտի հանգչինք ։

## ՏԵՍԱՐԱՆ Է.

### ԱՌԱՋԻՆՆԵՐԸ, ԹԱԳԱՒՈՐԸ.

Ներքին դուռը կը բացուի. Ճանկլաւէններ և իշխաններ կը մտնեն ։

ՔԱԹԸՐԻՆ. Թագաւորը կու գայ. փախի՛ր, տէր իմ, փախի՛ր...

Ինկնելով՝ Մարշալը իշխանազնոյն ոտքերին առջևը փռնուած սենին էթին կը քաշուի ։

ՀԷՆՐԻ. Պարոններ, աՀա՛ ձեր թագուհին.... ողջունեցէք զան ։ (Ա-

մեծերն ալ խոնարհեցէն նաեւ՝ կեցցէ՛ Թագուհին. կեցցէ՛ Քաթերին Հօուարտ, կը գոռան.) Իմ խոստմունքս կատարեցի, Քաթէրին, ու արքեպիսկոպոսին ալ իմացուցի:

ԷԹԷԼՎՈՒՏ. Կարգը իմս է խոստմունքը կատարելու, Քաթէրին, եւ ալ երթամ դահիճին իմացընեմ:

Իշխանուհւոյն ձեռքէն կը պագնէ.

# ԱՐԱՐՈՒԱԾ ՉՈՐՐՈՐԴ

## ՎԵՑԵՐՈՐԴ ՊԱՏԿԵՐ

Թագուհւոյն սենեակը:

### ՏԵՍԱՐԱՆ ԱՌԱՋԻՆ

ՔԱԹԷՐԻՆ՝ բազմոցի մը վրայ պառկած. ՀԷՆՐԻ՝ անոր քովը աթոռակին նստած:

ՀԷՆՐԻ, անոր երեսը նայելով. Ութը օրէ 'ի վեր աս երկրորդ անգամն է որ իւր քունին մէջ չեմ գիտեր ինչ յանցանք մը կամ իր խղճի խայթը կը յայտնէ. Իւր զգայութեանց նընջած ատեն անոր տագնապեալ միտքը այսպէս արթուն մնալու համար խիստ զօրաւոր պատճառ մը ըլլալ պէտք է:

ՔԱԹԷՐԻՆ, երազելով. Թագաւորը կը սիրէ զիս.... ո՛հ... ինչ դժբաղդութիւն.... Քնանալ եւ մէկ մ'ալ չարթննալ.... Այս բանալին.... (Ձեռքը երկնցընելով.) Այս ջուրը.... (Ձեռքը բանալով.) ո՛հ...

ՀԷՆՐԻ. Կ'ըսեն թէ երբեմն այսպէս երազած ատեն երբ հետերնին խօսիս, կը լսեն եւ կը պատասխանեն.... Քաթէրին:

ՔԱԹԷՐԻՆ. Ո՞վ է զիս կանչողը... այս գերեզմանին մէջ ո՞վ իջաւ.... Տես այս մատնին.... Թագուհի ըլլալ կ'ուզեմ....

ՀԷՆՐԻ. Թագուհի եղար դուն, Քաթէրին, ուրիշ ինչ բանի կը բաղձաս:

ՔԱԹԷՐԻՆ. Թագը, թագը, սպիտակ մազեր.... Այո՛.... գլխատութեան սեղանը, Ա՛հ՝ տը Պուլէնի գլխատութեան սեղանը.... Ծնկան վրայ եկու..... Ներեցէք..... Ո՛հ... (Հաստատ նայուածքով նայելով եւ երկու ձեռքով Հէնրիին դարանոցը փաթթուելով:) Ո՛վ Աստուած: (Հէնրին տեսնելով եւ անոր առջեւը ծնկան վրայ գալով:) Սպաննել մի՛ տաք զիս, ո՛հ, ներեցէք, ներեցէք ինծի:

ՀԷՆՐԻ. Բայց խեցա՞ր, Քաթէրին, ոտք ելիր. եւ ինծմէ ներողութիւ-ն

խնդրելէդ առաջ՝ ըսէ ինձ թէ ինչ քանի համար ներեմ։

ՔԱԹԷՐԻՆ. Ո՛հ, դուք գիտէք, վասն զի դուք հրաման ըրիք..... (Իր բոլորտիքը նայելով.) Բայց ոչ, եղած էր ան.... Ո՛հ.... ինչ սոսկալի երազ, և դուք հո՞ս էիք, Վեհափառ տէր։

ՀԷՆՐԻ. Այո՛։

ՔԱԹԷՐԻՆ. Ինչե՛ր ըսի արդեօք. բայց երազի մէջ ըսուածին հաւատալ պէտք չէ, Հէնրի, երազը Քունին և Գիշերին զաւակը, և Յիմարութեան եղբայրն է.... և երբեմն երազին մէջ մարդ տարօրինակ խօսքեր կը խօսի։

ՀԷՆՐԻ, տրտմութեամբ. Անհոգ եղիր, Քաթէրին, առանց հետևութեան քանի մը խօսքերէն զատ ուրիշ բան չլսեցի։

ՔԱԹԷՐԻՆ, քաջալերուելով. Ի՛նչ կրնայի ըսել, եթէ ոչ քանի մը յիմարական խօսքեր, որոնք սիրտը կը խորհի և իրեն համար կը պահէ, բայց չհամարձակիր ձայնով յայտնելու... որովհետև, տէր իմ, տարօրինակ բան է ինծի պէս առանձնութեան մէջ մեծցող ողորմելի աղջկան մը յանկարծ պալատին մէջ գտնել ինքզինքը, և արքունեաց շքեղութենէ շրջապատեալ ըլլալով բոլոր պալատականաց հրամայել, որոնք պատրաստ են իրեն հընազանդելու։ Թագաւորէ մը սիրուիլ, (Թևերը անոր պարանոցին վրայ տանելով.) և ո՞ր թագաւորէն, Հէնրի թագաւորէն, Անգղիոյ առիւծէն....

ՀԷՆՐԻ. Քու երկու թևերդ այնպիսի քաղցր շղթայ մը կը կազմեն պարանոցիս վրայ, որ ամենեին ուժ պիտի չունենամ զան խորտակելու։ Սակայն քանի մը վայրկեանի համար զան քակելու պարտաւորած եմ. ժողովքին մէջ ինձ կ'ըսպասեն։

ՔԱԹԷՐԻՆ. Վայրկեան մը ևս կեցիք, տէր իմ. ժողովը թող բարեհաճի Ձեր վեհափառութեան սպասելու. Այնպիսի հակառակորդ մը ունիմ, որմէ սաստիկ կը նախանձիմ, Հէնրի, քան զի ինձմէ աւելի ձեր միտքը անով զբաղած է, վասն զի քովս մնալու ժամերնիդ կը գողնայ ինձմէ, և այն հակառակորդն է Անգղիան։

ՀԷՆՐԻ. Սիրելիս։

ՔԱԹԷՐԻՆ. Ձեզ այնչափ կը սիրեմ, Հէնրի, որ չեմ կրնար վայրկեան մը զձեզ մաքէս հանել։ Սակայն ինչպէս որ ես թագուհի մ'եմ, քանզի դուք թագաւոր էք, ես ալ կը պարտաւորէի Անգղիոյ գործոց, իմ գահիս, թագաւորութեանս, և հպատակացս շահույը զբաղիլ. խիստ անպիտան թագուհի մ'եմ, այնպէս չէ՞, Հէնրի, որ այնչափ զբաղմունք ունենամ, ու միայն քեզմով զբաղիմ։

ՀԷՆՐԻ. Անպիտան կամ օգտակար թագուհի ըլլալդ չեմ գիտեր ես, Քաթէրին. բայց ան գիտեմ որ թագաւորի մը հոգին կորսնցընող ամենէն վտանգաւոր դիւթիչն ես. վասն զի, այս ժամուս ես պէտք չէ՞ի ըՍկովտիա գտնուիլ, և Անգղիոյ առիւծ կոչած թագաւորիդ արժան կը սեպես թողուլ այն Տէյքըր և Մընկրէյլ ա-

պըստամբները որ մեր անմիտ Օլիվըր Սէյնքլերը զարնեն ։ Ո՛հ, այնպիսի զմայլելի աչքեր ունիս, որ երբ անոնք բան մը կը խնդրեն՝ պէտք է կատարել, երբ կը հրամայեն՝ պէտք է հնազանդիլ։ Թող ուրեմն որ շըրթունքներովս գոցեմ զանոնք, որպէս զի կարենամ մեկնիլ ասկէ ։ (Անոր աչքերը կը համբուրէ ։) Մնաս բարեաւ, գեղեցիկ Թագուհիս, Անգղիոյ բոլոր ատենակալաց ժողովը կ՚ըսպասէ որ մտացդ հաճոյքը ըլլայ որ ես երթամ. զըկէ ուրեմն զիս որ մեկնիմ.

ՔԱԹԷՐԻՆ, սէր ներշնչող. Ոչ, զիս ալ հետերնիդ պիտի տանիք.

ՀԵՆՐԻ. Խնդրեմ, սիրելիս ։

ՔԱԹԷՐԻՆ. Ինչո՞ւ համար. միթէ ես Թագուհի չեմ և իշխանութիւն չունի՞մ նախագահ ըլլալ. . . . Համարձակ ըսէք, կը կարծէք որ Սոմերսի չափ խելք չունի՞մ ։

ՀԵՆՐԻ. Ո՛հ, այն խենդը քու կէսիդ չափ խելք չունի ։ Քաթէրին, նորէն տեսնուինք. թէոր վայրկեան մը ազատութիւն գտնեմ, իսկոյն ժողովքէն պիտի փախչիմ ու քովդ գամ.

ՔԱԹԷՐԻՆ. Շատ աղէկ ; գացէք ուրեմն ։

Հէնրի Դուր Մէլլէ ։

# ՏԵՍԱՐԱՆ Բ.

ՔԱԹԷՐԻՆ՝ առանձին.

Իր բեւէրը և գաւազանը հանելով, ձեռնոցը և տխուր կերպարանք մը կ՚առնու, և բազմոցին կը նստի ։

Ո՛հ, ինչպէս խանձեցեր եմ, ո՛վ Աստուած, (Բազմոցին վրայ կ՚իյնայ ։) Երբ սիրտս այսպէս տխուր է, ինչպէս երեսս կրնայ ուրախութեան դիմակ մը կրել։ Կարծեցի թէ Թագաւոր ըլլալուն պիտի կրնամ սիրել զան. . ո՛հ, ինչպէս սիրեմ. . . . Կը սոսկամ անկէ. . . Իր Թագաւորական անկողնոյն մէջ աչքերս գոցել չկրնալով, վայրկեան մը աս բազմոցին վրայ քընացեր եմ. ո՛հ, ինչ սոսկալի երազ, անկալ իմ քովս է եղեր. գուցէ ամեն բան պիտի լսէր, ամեն բան պիտի իմանար, միայն անոր անունը եթէ տուած ըլլայի՝ անշուշտ պիտի կորսուէի ։ Այն անունը արթնութեանս և քունիս մէջ կը տանջէ զիս, ո՛հ, դժոխքին բոլոր դևերը բոլորտիքս պարելով կը կրկնեն զան ինծի, (Աս միջոցին էթիէշվու Մարգարիտ իշխանուհւոյն սենեակին վրայ նայող դուռը կը բանայ՝ առանց Քաթէրին զինքը տեսնելու. սրահակը կը վերցընէ եւ կամաց կամաց կը յառաջանայ ։) այն անունը կանուխ կամ ուշ ես ալ պիտի կրկնեմ. . . թէ որ անոր տէրը շարունակէ այսպէս եռևէս լինալու, որ ամենուն անտեսանելի և անծանօթ է, բաց 'ի ինձմէ, որ իր մէկ շարժուածքէն, մէկ նայուածքէն անմիջապէս կը ճանչնամ։ Զորս օր առաջ որսորդութեան մէջ իր Րալֆ ձին, զոր ես աղէկ կը ճանչնամ, իմ ձիուս ընթացքը կտրեց, և եթէ անցնելու ատեն կարծես թէ զիս ճանչնալուն համար չվրնջէր, ձին և վրան եղողը երկու ուրուական պիտի կարծէի. . . Անցեալ օր՝ Թամիզի վրայ իր մակոյկը իմ մակուկիս զարկաւ ։ Երէկ՝ պալատին նեղ բակերուն մէկին մէջ իր

վերարկուն իմ շրջազգեստիս դպաւ · ուրուականի պէս ամէն տեղ կը գըտնուի , և ամէն տեղ կը մտնէ ։ Ըրդեօք գլխակալն քա՞րը գտած է , զոր ունեցողը անտեսանելի կ'ըլլայ · · · · Բայց որ ութը օրէն նորէն պիտի գայ իմ երազներս ինծի պատմել տալու · այսօր ութը օր է որ աս խօսքը ինձ ըսաւ · · · Ո՛հ , չեմ համարձակիր գըլուխս անգամ դարձընել , վախնալով որ չըլլայ թէ զան տխուր և սպառնալից կերպարանքով ետիս կանգնած տեսնեմ , ու իր սոսւար և ա՛խուր ձայնը լսեմ թէ՝ Քաթէրին , ահա եկայ · · · բայց ինչ կ'ընեն իմ շքադիր տիկիններս , ինչո՞ւ զիս այսպէս մինակ կը թողուն · · · · ( Ձեռքը ցանգակի մը վրայ կ'երկնցընէ , բայց էջինչձուացած կը բանէ ։ ) Ո՛հ ·

## ՏԵՍԱՐԱՆ Գ ·

ՔԱԹԷՐԻՆ , ԷԹԷԼՎՈՒՏ ·

ԷԹԷԼՎՈՒՏ · Կեցիր , Քաթէրին ։

ՔԱԹԷՐԻՆ · Ո՛վ Աստուած , ո՛հ , ուրկէ՞ց ներս մտար ։

ԷԹԷԼՎՈՒՏ · Ընկողնայդ սնարքին ետևի դռնէն , ուրկէց Մարգարիտ իշխանուհւոյն սենեակին հետ կը հաղորդուի ·

ՔԱԹԷՐԻՆ · Բայց դուն ինչ ես , մո՞գ մ'ես արդեօք որ այս դուռն ալ առջևդ կը բացուի , ( Անոր բանալի մը ցուցընելով · ) երբ ես իմ ձեռօքս զան կղպած էի ։

ԷԹԷԼՎՈՒՏ · Քա՛թէրին , միշտ կը մտնաս որ դռները երկու բանալիով կը բացուին և կը գոցուին ։

ՔԱԹԷՐԻՆ , ներքին դրան մօտենալով եւ զան գոցելով · Ըս ալ չպիտի կարենան բանալ զոնէ ։

Փութէով հեռանալ կ'ուզէ ·

ԷԹԷԼՎՈՒՏ · Ողորմելի Քաթէրին , դուն հիմա Ուայթ-Հօլի պալատին մէջ կը գտնուիս իմ Տայրհէմի պալատին մէջ եղածիս պէս , և ինչպէս ես գքեզ Թագաւորին ցուցընելէն կ'ըզգուշանայի անատեն , հիմա ալ դուն նոյնպէս հոգ կը տանիս զիս զաղտնի պահելու ·

ՔԱԹԷՐԻՆ · Վասն զի եթէ Թագաւորը զիս հոս տեսնէ , երկուքնիս ալ պիտի կորսուինք ·

ԷԹԷԼՎՈՒՏ · Ես ալ նոյն խօսքը քեզի կ'ըսէի հոն ։

ՔԱԹԷՐԻՆ · Հիմա ինչ կ'ուզես ինձմէ , ըսէ՛ կ'աղաչեմ ։

ԷԹԷԼՎՈՒՏ · Կ'ուզեմ գքեզ տեսնել , ու իմանալ քեզմէ թէ երջանի՞կ ես քու նոր բաղդիդ մէջ , կ'ուզեմ հարցընել քեզ թէ ինչ կ'ընես ցորեկը , և ինչ երազ կը տեսնես գիշերը ·

ՔԱԹԷՐԻՆ · Ես երջանիկ ըլլամ , Էթէլվուտ , մայրս պանդողին անգամ այսպիսի երջանկութիւն մը չեմ ցանկար ։ Կը հարցընես թէ ի՞նչ կ'ընեմ ցորեկը , դեռքն եղէգներուն , պարտէզին ծառերուն և պալատին սրահակներուն ամէնատկար ձայնէն անգամ կը սոսկամ · կ'ուզես գիտնալ թէ ինչ երազ կը տեսնեմ գիշերը , դուն ինձմէ աղէկ չե՞ս գիտեր ալ-

թանը, քանզի իմ երազներս դուն գուշակեցիր, այնպէս որ կը մտածեմ թէ արդեօք դուն ես զանոնք ինծի ղրկող դեր: Ո՛հ, գոհ եղիր, Էթէլվուտ, դուն քու վրէժդ աղէկ լուծեցիր. ես խիստ դժբաղդ եմ, ու ժամանակ է ալ որ գթաս ինծի:

ԷԹԷԼՎՈՒՏ. Քեզի՛ գթամ, տիկին, ի՛նչ կ'ըսես, թագուհի մ'ես դուն, և ի՛նչ տարօրինակ զգացմունք մը կը յայտնես. քեզի՛ գթամ կ'ըսես, բայց ինչպէս որ կը բաղձայիր, միթէ դուն պատրաստ կեցող մանկլաւիկներ, բազմաթիւ պալատականներ, շքեղ զգեստներ, և փառաւոր բնակարաններ չունիս:

ՔԱԹԷՐԻՆ. Ո՛վ Քէնէտի, ո՞ւր ես, ո՞ւր է իմ սպիտակ շրջազգեստս, ո՞ւր է իմ Րիչմօնտի փոքրիկ սենեակըս, ուր Էթէլվուտ կը սիրէր զիս:

ԷԹԷԼՎՈՒՏ, բազմոցին մօտ սեղանի մը առջեւ նստած. Այո, անատեն ես տըխուր էի ու դուն ուրախ. անատեն դուն ինծի կը հարցընէիր. Ի՞նչ ունիս, Էթէլվուտս, ինչո՞ւ այդպէս տխուր ես. ու փանդիռ մը առնելով կ'ըսէիր. Կ'ուզե՞ս որ երգ մը երգեմ.

Փանդիռ մը կ'առնու. անոր ձայները կը յարմարցընէ ու առաջին արարուածին երգին եղանակը կը յիշեցընէ:

ՔԱԹԷՐԻՆ. Ո՛հ, Տէր Աստուած:

ԷԹԷԼՎՈՒՏ. Աս եղանակը կը ճանչնա՞ս:

ՔԱԹԷՐԻՆ. Այո՛.

ԷԹԷԼՎՈՒՏ. Հապա աս խօսքերը.

Երգելով:

Մէկ խօսքով կ'ըլլաս թագուհի.
Ըստ որում ես թագաւոր եմ
Եւ չը բաղխիր իմ սրտունի
Առջիդ պիտի միշտ խոնարհին.
Արքայական շքեղ պատիւը
Աղախինի մը աչքերը
Կրնայ խաբել. Հաւատա՛ դու:
—Այո՛:

Փանդիռը ուժով կը նետէ:

ՔԱԹԷՐԻՆ. Լռէ՛, լռէ՛, կ'աղաչեմ:

ԷԹԷԼՎՈՒՏ. Քու կենացդ անցեալ ժամանակին արձագանգն է աս, Քաթէրին. կրնա՞ս արգիլել զան որ քու խօսքերդ չկրկնէ: Ասկէ զատ՝ թագաւորը քու պատասխանդ լսեց, և աղախինը պսակ կը կրէ իր գլուխը:

ՔԱԹԷՐԻՆ. Ոհ, այո՛, իր դժբաղդութեանը համար:

ԷԹԷԼՎՈՒՏ, տեղէն ելլելով եւ Քաթէրինի ոտից քովը ոտնաթոռի մը վրայ նստելով. Րօպէրթ թագաւորին և իր գեղեցիկ Էլֆրիտային սիրոյն հետևութիւնը քեզ հարցուցած ատենս՝ ինծի պատասխանեցիր թէ չես գիտեր. կ'ուզե՞ս որ հիմա ես քեզի ըսեմ:

ՔԱԹԷՐԻՆ. Ի՞նչ օգուտ ունի մեզ ան:

ԷԹԷԼՎՈՒՏ. Վասն զի, Քաթէրին, այս դիպուածը մերինին նմանութիւն մը ունենալով, գուցէ օգուտ մը քաղես անկէ:

Իր գլուխը բազմոցին վրայ կը դնէ:

ՔԱԹԷՐԻՆ. Ի՛նչ որ կ'ուզես ըսէ և ըրէ, ազատ ես:

ԷԹԷԼՎՈՒՏ. Ուստի գեղեցիկ Էլֆրիտան այս պատասխանեց և թագուհի եղաւ:

ՔԱԹԷՐԻՆ. Ողորմելի՛ կինը:

ԷԹԷԼՎՈՒՏ. Բայց բան մը մոռցեր

էր ընելու. որ Րիքարտոսին հետ իր ունեցած սիրահարութիւնը իր Թագաւոր ամուսնոյն չխոստովաներ էր, և անատեն օրէնք մը կար, ինչ զարմանալի բան, Ճիշդ Անգղիոյ Հէնրիին հաստատածին պէս, որ 'ի մահ կը դատապարտէր այն երիտասարդ աղջիկը, որ այսպիսի սիրահարութենէ ետև Թագաւորին հետ ամուսնանար առանց անոր իմացընելու.

ՔԱԹԷՐԻՆ. Ի մա՛հ կը դատապարտուէր:

ԷԹԷԼՎՈՒՏ. Ստոյգ է որ այս գաղտնիքը Րիքարտոսէն զատ մէկը չէր գիտեր... և Րիքարտոս իր մեղսակիցն էր:

ՔԱԹԷՐԻՆ. Նոյն ատ օրէնքը թէ յանցաւորը և թէ յանցակիցը մի և նոյն մահուան կը դատապարտէր, այնպէս չէ՞:

ԷԹԷԼՎՈՒՏ. Այո՛, բայց նախանձոտ մարդու մը համար մահը ինչ է, մանաւանդ երբ այս մահը դժոխքին ամէն տառապանքները տուող կնոջ մը վրէժխնդրութիւնն է:

ՔԱԹԷՐԻՆ. Ո՛վ Աստուած:

ԷԹԷԼՎՈՒՏ. Րիքարտոս Թագաւորին աղեղնաւորն ըլլալուն կրնար պալատին մէջ բնակիլ, ամէնէն գաղտնի սենեակներուն մէջ մտնել, և մինչև Թագուհւոյն քովը Թափանցել այնպիսի դռնէ մը, որուն բանալին իր քովը ունէր: Րիքարտոս ամենևին մահուանէ չէր վախնար, վասն զի նախանձոտ էր, և վրէժ առնել կ'ուզէր:

ՔԱԹԷՐԻՆ, բազմոցին վրայ իյնալով. Ո՛հ....

ԷԹԷԼՎՈՒՏ. Իր ամուսնութենէ չորս օր ետքը Թագուհին որսորդութեան մէջ անոր կը հանդիպի, և անոր ձին իր առջևէն կ'անցնի. Հետևեալ օրը Թագուհին զան Թամիզի վրայ կը տեսնէ, և անոր մակոյկը իր մակոյկին կը զարնէ. միւս օրը բակի մը մէջ գրեթէ անոր հետ կը զարնուի և անոր վերարկուն իր շրջազգեստին կը դպչի: Այս երեք անգամն ալ Թագուհին զան ճանչցաւ, վասն զի իր գոյնը նետեց: Անտարակոյս երբ ան իր պալատը դարձաւ, այն մարդուն ձեռքէն ազատելու միջոցներ մտածեց:

ՔԱԹԷՐԻՆ, աշխուժիւ. Ո՛հ, մի կարծեր ընաւ:

ԷԹԷԼՎՈՒՏ. Ստոյգ է.... եթէ զան գերեզմանատան մը մէջ գոցած պահէր, որուն բանալին միայն իր քովը գտնուէր, գուցէ անատեն Թողուր զան որ անօթութենէ և ծարաւութենէ մեռնի, բայց դաշոյնի կամ սուրի հարուածներով զան սպաննել տալը....

ՔԱԹԷՐԻՆ. Ո՛հ, երբեք, երբեք..

ԷԹԷԼՎՈՒՏ. Ան ալ ըստ դիպաց իր զգեստներուն տակէն ասոր նման վերտ զրահ մը կը հագնէր: (Էթէլվուտ իր բաճկոնակը կը բանայ եւ վերտ ցրահ մը կը ցուցընէ անոր.) Վասն զի թէև Րիքարտոս մահուանէ երկիւղ չունէր, սակայն վրէժխնդրութենէ կը վախնար, իր Թագուհի տիկինը բակին մէջ հանդիպելուն հետևեալ օրը մինչև անոր պառկելու խուցը Թափանցեց: Թագաւորը դուրս ելեր էր, ու Թա-

գուհին մինակ մնացեր էր , անոր ոտից քովը նստաւ , ինչպէս որ ես քու ոտիցդ քովը նստած եմ . անատեն անոր ձեռքերը բռնեց , որոնցմով Թագուհին իր երեսը գոցել կ՚ուզէր , և ստիպելով որ իր երեսը նայի , ըսաւ անոր . Քաթէրին . . . . Ո՛չ , սխալեցայ , Էլֆրիտա . . . . Էլֆրիտա . . . աշխարհիս մէջ երբէք մարդ մը եղա՞ծ է որ կին մը այնչափ սիրած ըլլայ , որչափ որ ես քեզի , ըսէ ։

ՔԱԹԷՐԻ՛Ն . Երբէք ։

ԷԹԷԼՎՈՒՏ . Երբէք մարդ մը կնոջ մը համար այնչափ զոհողութիւն ըրա՞ծ է , որչափ որ ես քեզի , ըսէ ։

ՔԱԹԷՐԻ՛Ն . Երբէք ։

ԷԹԷԼՎՈՒՏ . Ու երբէք մարդ մը այնպիսի անարժան վարձատրութիւն մը ընդունա՞ծ է , որչափ որ ես քեզմէ , ըսէ ։ ( Ոտք ելլելով ։ ) Բայց ինչո՞ւ չես ըսեր . . . ըսէ . . . .

ՔԱԹԷՐԻ՛Ն . Կ՚աղաչեմ , շնորհք ըրէ ։

ԷԹԷԼՎՈՒՏ , յուսահատութեամբ . Ամեն բան կը ներէ այն կնոջ՝ իր մոռացութեանը , ապերախտութեանը , և իր մահուան իսկ , բայց մէկ բանի չի կրնար ներել , որ անոր ուրիշին գրկացը մէջ անցնիլը տեսնէ , և այն ձեռքերը և շրթունքը որ իրենն էին՝ ուրիշին գգուանացը և համբուրիցը յանձնէ . . . Ո՛հ , ահա աս բանիս անկարելի է իրեն ներել , և ամենևին պիտի չներէ , և ահա աս բանս երկուքնուն ալ մահուան պատճառ եղաւ ։

ՔԱԹԷՐԻ՛Ն . Երկուքնո՛ւն ալ մահուանը . . . .

փողերու ձայներ կը լսուին . որոնք Թագաւորին գալուստը կ՚իմացընեն ։

ԷԹԷԼՎՈՒՏ . Այո՛ , երկուքնուն ալ մահուանը . վասն զի Թագուհին և իր սիրահարը սենեակին մէջ գոցուած ատեննին , Թագաւորը ժողովքէն ետ դարձաւ ։

ՔԱԹԷՐԻ՛Ն , ոտք ելլելով . Տէր իմ , տէր իմ , այս փողերը Թագաւորին դարձը կ՚իմացընեն . փախի՛ր , փախի՛ր շուտով ։

ԷԹԷԼՎՈՒՏ , անշարժ կենալով . Եւ որովհետև չուզեց փախչիլ . . . .

ՔԱԹԷՐԻ՛Ն . Այս ինչ դժոխային գործ է . . . .

ԷԹԷԼՎՈՒՏ . Թագաւորը Թագուհւոյն սենեկին դրան առջևը եկաւ , (Հէնրիին ոտնաձայնը կը լսուի ։) եւ զան գոց գտաւ . . . .

ՀԷ՛ՆՐԻ , դրսէն . Ես եմ , Քաթէրին , բաց դուռը ։

ՔԱԹԷՐԻ՛Ն , աղաչելով . Կ՚աղաչեմ , տէր իմ , փախի՛ր ։

ԷԹԷԼՎՈՒՏ , ձայնը բարձրացընելով . Ներսը երկու մարդու ձայն լսեց որ իրարու հետ կը խօսէին . . . .

ՀԷ՛ՆՐԻ . Քաթէրին , ո՞վ կայ քովդ , բաց դուռը ։

ԷԹԷԼՎՈՒՏ , Քաթէրինեն հեռելով . Հէնրի , Հէնրի , նախանձելու կարգը քուկդ է . . . .

ՔԱԹԷՐԻ՛Ն , ծնկան վրայ . Մեռցո՛ւր զիս աս տեղ , տէր իմ ։

ՀԷ՛ՆՐԻ . Եկէք , պարոններ , կոտրեցէք աս դուռը , ինծի տուէք այդ դաւաճանը ։

ՔԱԹԷՐԻ՛Ն , դրան խորտակուիլը ցուցընելով . Տես , պարոն , տես . . .

ԷԹԷԼՎՈՒՏ . Այո՛ , ալ ատենն է որ

զքեզ թողում երթամ։ Նորէն տեսնուինք, Քաթէրին։

Դուրս կ'ելլէ.

ՔԱԹԸՐԻՆ. Ո՞ւր պահուիմ, ո՞ւր փախչիմ արդեօք, ո՜հ, Աստուած իմ, Տէր Աստուած իմ, դուն ես իմ միակ յոյս, գութ ունեցիր ինծի։

Դուռը կը բացուի, Հէնրի կը մտնէ։

## ՏԵՍԱՐԱՆ Դ.

ՀԷՆՐԻ՝ գաւազան մը բռնած. Քաթըրին՝ երկիւղէն դողալով՝ դրան առջև բազմոցին ծնրադրեր։

ՀԷՆՐԻ, ներս մտնելով և դուռը նորէն գոցելով. Ի՞նչ կը նշանակէ աս, տիկին, քեզի հետ աս սենեակին մէջ եղողը ո՞վ էր։ (Անոր մօտենալով.) Երեսս նայէ և պատասխան տուր։

ՔԱԹԸՐԻՆ. Մինակ եմ, Վեհափառ տէր... Ձե՞ք նայիր, մարդ չի կայ։

ՀԷՆՐԻ, ամեն կողմ նայելով և Էրինկ-թունի գլխարկը տեսնելով. Աս գլխարկը որո՞ւնն է։

ՔԱԹԸՐԻՆ. Ո՛վ Աստուած....

ՀԷՆՐԻ, դրան մօտենալով. Անշուշտ աս դուռէն դուրս ելաւ, այնպէս չէ՞։

ՔԱԹԸՐԻՆ, անոր քովը ծնրադրելով. Վեհափառ տէր....

ՀԷՆՐԻ. Գոցեր են։

ՔԱԹԸՐԻՆ, շունչ առնելով. Այո՛։

ՀԷՆՐԻ, ետ դառնալով. Բանալին ո՞ւր է։

ՔԱԹԸՐԻՆ. Ձեմ գիտեր ո՞ւր է, տէր իմ։

ՀԷՆՐԻ. Աղէկ փնտռէ և գտիր. փնտռէ կ'ըսեմ։

ՔԱԹԸՐԻՆ. Անկարելի է որ յիշեմ ուր դնելս....

ՀԷՆՐԻ. Աղէկ նայէ, և վրադ փնտռէ....

ՔԱԹԸՐԻՆ, իր ծոցէն բանալին հանելով. Ահա առ։

ՀԷՆՐԻ, դուռը բանալու ջանալով. Ո՛հ, դաշոյնի մը բերանը կղպակին մէջ կոտրեր են։ Տես մեղսակիցդ զարմանալի միջոց մը բանեցուցեր է ձեռք չինալու համար.... բայց մոռցեր է որ զքեզ իմ ձեռքս կը թողու... ըսէ հիմա, ո՞վ էր ասկէ դուրս ելլողը, տիկին։

ՔԱԹԸՐԻՆ. Վեհափառ տէր, կ'աղաչեմ...

ՀԷՆՐԻ. Անոր անունը ըսէ ինծի։

ՔԱԹԸՐԻՆ, աղաչելով. Մարդ չի կար...

ՀԷՆՐԻ. Անոր անունը ի՞նչ է։

ՔԱԹԸՐԻՆ. Ո՛հ, չեմ կրնար ըսել, տէր իմ, չեմ կրնար։

ՀԷՆՐԻ. Ձե՞ս կրնար. Ա՛ն որ Գուլէն աղ քեզի պէս չեմ կրնար կ'ըսէր. սակայն մենք այս լուսթեան յաղթելու միջոցը գտանք, այնպէս որ թէ և ան իր պիղծ շրթունքը սեղմեր էր, բայց ցաւով Նօրիսի անունը անկէ դուրս հանեց։ Վերջին անգամ մ'ալ կ'ըսեմ, Քաթէրին, այն մարդուն անունը ի՞նչ է։

ՔԱԹԸՐԻՆ. Ի՛նչ որ կ'ուզէք ըրէք ինծի, Վեհափառ տէր. ես ձեր ձեռքն եմ։

ՀԷՆՐԻ. Այսպէս ուրեմն մէկ խօսք մը չես խօսիր զքեզ պաշտպանելու համար, ամենևին բերանդ չե՞ս բանար զքեզ ար-

դարպասնելու , որ դուցէ ինձ տարակուսիլ տայ թէ ականջներս աղէկ չի լսեցին , և աչքերս չտեսան , թէ ականջիս այնպէս ձայն մը եկաւ , և աչքիս երևոյթ մը , և թէ սուտ է բոլորովին ։ Ո՞չապէս ուրեմն միշտ պիտի խաբուիմ , և միշտ պիտի մատնուիմ իմ բարիքս վայելող մարդոցմէ անդամ ։ Ո՛հ . . . . թէ և այս գլխարկը հոս տեսայ և թէպէտ այս գոյնը դոյ գտայ , բայց անոր վրայ ունեցած սերէս յաղթուելով պիտի հաւատայի . այո՛ պիտի հաւատայի անոր ։ Պարոն հարկիրապետ , բռնէ թագուհին ու բարձր խորհրդարանը տար ։

ՔԱԹԷՐԻՆ . Վեհափառ տէր , տէր իմ Վեհափառ . . . .

ՀԷՆՐԻ . Դու դուն , Քաթէրին , պատրաստուէ Ո՛ն տը Պուլէնի դատապարտութիւնը տուող դատաւորներուն պատասխան տալու ։

## ԵՕԹՆԵՐՈՐԴ ՊԱՏԿԵՐ

Խորհրդարանի սրահը։

### ՏԵՍԱՐԱՆ Ե.

ՀԷՆՐԻ , ՍՈՒՍԷՔՍ , ՔՐԱՆՄԷՐ ,
ԱՆԴԱՄՔ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻՆ ։

ՀԷՆՐԻ , աթոռի վրայ կանգնած . Աղէկ գիտէք , պարոններ , որ մատնութեան և շնութեան դատապարտութիւնը մահ է . ուստի ես իմ ամբաստանութիւնս կը նորոգեմ և կը պահանջեմ որ ըսպաննուի ։

ՆԱԽԱԳԱՀԸ . Տեարք իմ , խորհուրդը այս տեղեկութիւնները բաւական կը համարի՞ ։

ՇԱՏ ՁԱՅՆԵՐ . Այո՛ , այո՛ , այո՛ ։

ՍՈՒՍԷՔՍ . Ո՛չ ։

ՀԷՆՐԻ . Ի՞նչպէս , պարոն .

ՍՈՒՍԷՔՍ . Այս տեղեկութիւնները հնազանդելու համար բաւական են , բայց խղճմտանաց համար՝ ո՛չ ։ Խորհրդարանը անկախութեան և արդարութեան ատեան մ'է , որ իր վճիռներուն հաշիւը միայն Աստուծոյ կու տայ ։ Վեհափառ տէր , երկու ժամէ 'ի վեր որ այս խորհուրդը կազմած ենք՝ կ'ամբաստանէք , բայց ո՞ւր են ամբաստանութեան ապացոյցները .

ՀԷՆՐԻ . Ապացոյցները պատրաստ են , պարոն , սակայն ես ձեզ իմ խօսքս կու տամ .

ՍՈՒՍԷՔՍ , շարունակելով . Վասն զի այս ապացոյցները Ձեր Վեհափառութենէ խնդրելու իշխանութիւն ունինք մեր դատավճիռը տալէն առաջ , որ հոգին մարմինէն պիտի բաժնէ և թագուհին թագաւորէն ։

ՀԷՆՐԻ . Արդէն շնութիւնը զան

ինծմէ բաժնեց, պարոն, դահիճին կայինին ըրածէն ալ աւելի ։

ՍՈՒՍԼԷՔՍ, ծանրութեամբ. Ուստի, պարոններ, գլուխը ձեռքը այն անձը առ Աստուած զրկելնէս առաջ, զոր ան գլուխը պսակ դնելով մեզ զրկեց, չպարտինք անոր դէմ եղած ամբաստանութիւնը արդարութեան կշռին մէջ խղճի մտօք կշռել, և դարձեալ կը կրկնեմ, անատեն միայն անոր դատավճիռը տալ, երբ անոր մեղաց նժարը ստուգիւ այնչափ ծանր ըլլայ, որուն Աստուածային գթութիւնը միայն կարենայ հաւասարակշռել տալ։

ՀԷՆՐԻ. բարկութեամբ, եւ իր մէկ ոտքը իւր առջեւը եղած սեղանին վրայ դնելով. Ի՞նչ կը նշանակէ աս, պարոն, որ դուն իմ ամբաստանածս կը պաշտպանես, հաստատածիս վրայ կը տարակուսիս, երդուածս կ'ուրանաս ։ Պարոն, չես յիշեր թէ դուն ո՞վ ես և ես ո՛վ եմ. կը մոռնաս որ Աստուած աշխարհիս ամենէն մեծ թագաւորութիւններէն մէկը իմ ձեռքս յանձնած է, զոր եթէ բանամ, տասն և չորս միլիոն ժողովրդեան օդ կու տամ, և եթէ գոցեմ՝ կը խեղդեմ զանոնք ։

ՍՈՒՍԼԷՔՍ. Տէր, Ձեր Վեհափառութիւնը կը սխալի, Աստուած թագաւորութեան իշխանութիւնը տուած է անոր և ոչ թագաւորութիւնը, մարմինը և ոչ հոգին ։

ՀԷՆՐԻ. Ահա այդ պատճառաւ, պարոն Սուսէքս, մեզ հնազանդ եղող այն մարմինը ապստամբ հոգի մը կը պարունակէ, և այն հոգին մարմինէն հանելու համար դահիճին օգնութիւնը կը կանչենք ։

ՍՈՒՍԼԷՔՍ. Եւ երբ դահիճը ուշանայ, այնպիսի թագաւոր մը կը ճանչնանք որ իր մէջքը դաշոյն մը կրելով կայինին գործը անով կը տեսնէ զարմանալի կերպով։

ՀԷՆՐԻ, շարժում մը ընելով. Պարոն....

ԱՑԷՆՆԱԿԱԼԸ, Սուսէքսը շրջապատելով. Կոմս, շնորհք ըրէ.... Պարոն Սուսէքս.... կ'աղաչենք....

ՍՈՒՍԼԷՔՍ. Հեռացէք առջեւէս, պարոններ, որպէս զի տեսնէ թագաւորը որ ես առանձին եմ, և եթէ կ'ուզէ՝ կարենայ վրաս գալ։

ՔԱՆԹՕՐՊԷՐԻ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԸ. Վեհափառ տէր, համոզումը խօսքերով սրտին մէջ կը մտնէ և ոչ դաշոյնով.... Ձեր Վեհափառութիւնը ըսաւ որ ապացոյցներ ունի....

ՀԷՆՐԻ. Այո՛, այնպէս է, պարոն Քանթօրպէրի..... (Թագաւորին կը մօտէ ։) Ահա ամբաստանեալը կու գայ, որուն շփոթութիւնը և գունատութիւնը երկու ապացոյցներ են, զորոնք դուք պիտի չմերժէք ։

Թագաւորին ելած տեղէն՝ ժողովրդեան մէջ յայ՜ է. կը լսուին ։

## ՏԵՍԱՐԱՆ Զ.

ՆՈՅՆՆԵՐԸ, ՔԱԹԼՐԻՆ, ՕՔՍՖՕՐՏԻ ԵՒ ՌՕՔԸՖԻԻ ԴՔՍՈՒՀԻՔ ։

ՆՈՒԻՐԱԿԸ. Լռութիւն, պարոններ ։

ՔԱԹԼՐԻՆ, նստելով. Պարոններ, գութ ունեցէք իմ վրաս ։

ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԸ. Վեհափառ տէր, հաճեցէք հիմա ամբաստանեալին առջեւը ձեր ամբաստանութիւնը կրկնելու. քան զի իրաւունք ունի լսելու և պատասխանելու։

ՀԷՆՐԻ. Պարոններ, այս անգամ Ա՛ն՝ որ Պուլէնի վրայ ունեցածիս պէս պարզ կասկածներ չունեցայ, որ ետքը քննութեամբ ստուգուեցան, այլ աչքովս տեսայ և ականջովս լսեցի։

ՔԱԹԸՐԻՆ. Թագաւորը կը սխալի, տեարք իմ։

ՀԷՆՐԻ. Խորհուրդէն դարձած ատեննիս՝ այս կինը, զոր ես ինծի թագուհի ըրի, իր յանցակիցին հետ իր սենեկին մէջ գոցուած գտայ. դուրսէն իրենց ձայները լսեցի, ու դուռը խորտակեցի....

ՔԱԹԸՐԻՆ. Ձեր Վեհափառութիւնը զիս սենեկիս մէջ մինակ գտաւ։

ՀԷՆՐԻ. Այո՛, բայց այն դուռը, որուն կղպակին մէջ դաշոյնի մը ծայրը կոտրեր էին, որպէս զի չբացուի, և ոտիցդ ներքև գտնուած գլխարկը, տիկին... և ասոնցմէ ալ աւելի, շփոթութիւնդ, գունատութիւնդ, և ըրած խոստովանութիւնդ.... վասն զի խոստովանեցար որ սենեկիդ մէջ մէկը կը գտնուէր։

ՔԱԹԸՐԻՆ. Ո՛չ... ամենևին....

ՀԷՆՐԻ. Այո՛, խոստովանեցար, միայն անոր անունը տալ չուզեցիր՝ բայց հոգ չէ, պարոններ, մի և նոյն վճիռը պիտի տաք թէ՛ ներկայ յանցաւորին և թէ բացակայ յանցակցին համար, որպէս զի ան ալ ձեր արդար ձեռաց մէջ ինկած ատենը չյոգնեցընենք զձեզ որ երկու վճիռ տաք։ Ուստի, պարոններ, Քաթէրին թագուհւոյն դէմ ըրած մատնութեան և շնութեան ամբաստանութիւնս կը նորոգեմ. կը հաստատեմ թէ իր սենեկին մէջ գոցուած մարդու մը ձայնը լսեցի, և հոն ու թագուհւոյն ոտիցը տակ անոր գլխարկը տեսայ։ Այս ըսածներս կը հաստատեմ իմ պատուոյս, կրօնքիս, թագիս և Աւետարանին վրայ, այսինքն աշխարհիս մէջ ունեցած ամենէ նուիրական և ամենէ մեծ բանիս վրայ։ Հիմա, պարոններ, աս խօսքերը ըսելէս ետև, ձեզմէ ո՛վ որ ամենափոքր տարակոյս մը ցուցընէ, թագաւորը սուտ հանած պիտի ըլլայ։

ՆԱԽԱԳԱՀԸ. Ի՞նչ պատասխան ունիք տալու, տիկին։

ՔԱԹԸՐԻՆ. Ի՞նչ կ'ուզէք որ ըսեմ, տեարք իմ, թագաւորի մը հզօր խօսքին ի՛նչ պատասխան կրնամ տալ։ Աստուծոյ փայլակին և կայծակին դէմ չպատերազմուիր. աչքերնիս կը գոցենք ու հարուածին կ'սպասենք, կը խոնարհինք և կը զարնեն մեզ։ Այսպիսի սոսկալի ամբաստանութեան մը դէմ դնելու ես ոյժ չունիմ, տեարք իմ. ձեր գթութեամբը և մանաւանդ ձեր արդարասիրութեամբը դատեցէք ուրեմն. ձեր ըրածը բարի է, և առաջուց շնորհակալ կ'ըլլամ և կամ կը ներեմ ձեզ։

ՆԱԽԱԳԱՀԸ. Խորհուրդը այս տեղեկութիւնները բաւական կը համարի։

ԱՏԵՆԱԿԱԼՔ. Այո՛, այո՛, այո՛։

ՆԱԽԱԳԱՀԸ. Բանադատութիւնը ընենք:

ՍՈՒՍԷՔՍ. Կեցէք, պարոններ. ըստ որում խղճմտանքս չներեր որ այդ բանադատութեան մասնակից ըլլամ, որուն հետեւութիւնը առաջուց դիւրաւ կը գուշակեմ, եւ որովհետեւ անոր հետեւութիւնը մահացու վճիռ մը պիտի ըլլայ, եւ այս վճիռն ալ բոլոր ատենակալաց համար խղճի տագնապ մը կամ ամօթ, ուստի կը հանեմ վրայէս ատենակալի այս վերարկուն, զոր իմ նախահարքս չորս դարերէ 'ի վեր կրեցին եւ ինծ թողուցին. այս վայրկենէս եւ ալ ատենակալաց թուոյն մէջը չեմ ես եւ ձեր բանադատութեանց իբր լոկ հանդիսատես ժողովրդեան կարգը կ'անցնիմ, որոնք վճիռները կը ջրեն եւ դատաւորները կը դատեն:

*Իր վերարկուն կը հանէ. աթոռին վրայ կը թողու, եւ հանդիսականներուն եղած խմբակին կը խառնուի:*

ՀԷՆՐԻ. Շատ աղէկ ըրիր, պարոն Սուսէքս. կ'ընդունինք քու հրաժարականդ. փառք Աստուծոյ Անգլիոյ մէջ ազնուական ասպետները պակաս չեն, որոնք քեզի պէս կրնան ատենակալի պատուոյ նշանները կրել: Պարոններ, ես կը քաշուիմ ասկէ, ու կը թողում ձեզ որ բանադատութիւնը ընէք:

*Ներքին դռնէն դուրս կ'ելլէ:*

ՆԱԽԱԳԱՀԸ. Ամբաստանեալը դուրս հանեցէք:

ՔԱԹԵՐԻՆ. Տէարք իմ, մտածեցէք որ թագուհի մը կենաց կամ մահուան վճիռը պիտի տաք. մտածեցէք որ ամեն օգնութենէ եւ խորհուրդէ զուրկ մնացած եմ. մտածեցէք վերջապէս որ ամբաստանողը թագաւոր մ'է, եւ պաշտպանուողը ողորմելի կին մը, եւ թէ իր բաղդին վրայ բանադատելու ժամանակնիդ, իր դատաւորներուն սիրտը շարժելու համար Աստուծոյ աղօթք ընելէն ուրիշ բան չկրնար ընել:

*Դուրս կ'ելլէ:*

## ՏԵՍԱՐԱՆ Է.

*ԱՏԵՆԱԿԱԼՔ՝ բանադատելու համար խումբ խումբ բաժնուած. ՈՒԻԼԵՄՍ, ՃԷՔՍԸՆ՝ ծովակերպեան կողմէն հանդիսականաց մէջ. ԿԻՆ ՄԸ, ՆՈՒԻՐԱԿ ՄԸ:*

ՈՒԻԼԵՄՍ. Ահա՛ տաս ճիշդ հինգ թագուհի եղան մէկ թագաւորի մը համար, եւ վերջին երկուքը շատ քիչ տեւողութիւն ունեցան:

ԿԻՆ ՄԸ. Կը կարծե՞ս որ դատապարտուի, պարոն Ուիլեմս:

ՈՒԻԼԵՄՍ. Տարակոյս չի կայ. Ան' որ Պուլէն այնչափ ալ յանցանք չունէր, եւ իր վճիռը շուտով տրուեցաւ:

ՃԷՔՍԸՆ. Նա անոր գլխատուիլը տեսայ:

ԿԻՆԸ. Սո՞յգ է որ ան բան մը չխոստովաներ է, պարոն Ճէքսըն:

ՃԷՔՍԸՆ. Սոյդ է. գլխատութեան բեմին այնչափ մօտ էի որչափ է ասկէ մինչեւ դիմացի դուռը եւ անոր ամեն բառերը լսեցի:

ԿԻՆԸ. Իսկ մեզի ինչ ըսաւ թագուհին:

ՃԷՔՍԸՆ. Ժողովուրդ Լոնտոնի, ըստ օրինի դատուելէս ետև՝ հոս եկած եմ ըստ օրինի մեռնելու համար. ինծի դէմ եղած վճռին դէմ ամենեւին տրտունջ ընելու միտք չունիմ, այլ անոր գործադրութեանը հնազանդելու եմ։ Ինքզինքս արդարացնելու համար ամենևին չեմ ուզեր մէկը դատապարտել կամ բան մը ըսել.... Կ'աղաչեմ Աստուծոյ որ թագաւորը պահպանէ, և անոր թագաւորութեան օրերը բազմապատկէ։

ԿԻՆԸ. Խեղճ կին։

ՈՒԻԼԵՄՍ. Նշաքը ինչպէս եղաւ։

ՃԷՔՍԸՆ. Աս ըսելէն ետև գլուխը գլխատութեան սեղանին վրայ տարաւ և ըսաւ. Հոգիս Յիսուսի Քրիստոսի կ'աւանդեմ։ Աս խօսքը ըսելուն պէս՝ անոր գործը լմնցաւ. վասն զի դահիճին հետ խօսք ըրեր էր որ այն խօսքը իր հարուածին նշանը ըլլայ։

ՈՒԻԼԵՄՍ. Մէկ հարուածով գլուխը կտրեց։

ՃԷՔՍԸՆ. Այո, թագաւորը Քալէի խիստ հմուտ դահիճը դիտմամբ բերել տուեր էր։

ԿԻՆԸ. Երդւօք դարձեալ զան պիտի կանչեն։

ՃԷՔՍԸՆ. Գուցէ։

ՆՈՒԻՐԱԿԸ. Լսեցէք, պարոններ, ատեանը իր վճիռը պիտի տայ։

ՆԱԽԱԳԱՀԸ. Ամբաստանեալը ներս մտցուցէք։

## ՏԵՍԱՐԱՆ Բ.

ԱՌԱՋԻՆՆԵՐԸ, ՔԱԹԵՐԻՆ՝ երկու զինուորաց օգնութեամբը ներս մտնելով՝ ոտքի վրայ մնալ կ'ընէ. ՀԵՆՐԻ։

ՆԱԽԱԳԱՀԸ. Ինը փետրուարի 1542ին, Հէնրի Վեհափառ թագաւորին մեր առջև բրած ամբաստանութեանը, և անկէ առնուած ապացոյցներուն վրայ Անգլիոյ ատենակալաց ժողովը Քաթէրին Հօուարտ իբր շնացող յանցաւոր ճանչնալով, կը դատապարտէ զան իւր անծանօթ յանցակցին հետ որ երեք օրէն իր գլուխը կտրուի Լոնտոնի աշտարակին մուտքին վրայ։

ՔԱԹԵՐԻՆ, աթոռին վրայ ինկնալով. Ո՛հ, անմահ Աստուած իմ....

ՀԵՆՐԻ, ներքին դողով մը երեւնալով. Շնորհակալ եմ, պարոններ։

ՆԱԽԱԳԱՀԸ. Պարոններ, խորհուրդը վերջացաւ։

ՍՈՒՍԷՔՍ, ձեռքը երկնցնելով. Ո՛չ տակաւին, պարոն նախագահ, եթէ թագաւորը կը բարեհաճի։

ՀԵՆՐԻ. Վճռոյն դէմ ինչ կրնաս ըսել։

ՍՈՒՍԷՔՍ. Ոչինչ, Վեհափառ տէր, ճիշդ սպասածիս պէս ալ եղաւ։

ՀԵՆՐԻ. Ըստ որում այս վճիռը տուող ժողովոյն դուն մասնակից չէիր, անոր պատասխանատուութիւնն ալ քու վրադ չէ։

ՍՈՒՍԷՔՍ. Վեհափառ տէր, ստոյգ է որ ես այսուհետև խորհրդարանի անդամ չեմ, բայց միշտ Սուսէքսի կոմս եմ։ Ատենակալի վերարկուս հանեցի, բայց իմ ասպետական սուրս

պաշտած եմ, և եթէ Ձեր Վեհափառութիւնը կը ներէ, տրուած վճռոյն դէմ պիտի դնեմ անոր օգնութեամբը: (կամաց կամաց Քաթէրինին մօտենալով. անոր առջեւը ծնկան վրայ կուգայ:) Տիկին և թագուհի, գիտեմ խիստ ակար օգնութիւն մ'է իմ ձեզի առաջարկածս, բայց ափսո՛ս, տիկին, այնպիսի յուսահատեալ վիճակի մէջ կը գտնուիք, որ այս ժամուս աս աշխարհիս մէջ ձեր միակ յոյսը այս օգնութիւնն է:

ՔԱԹԷՐԻՆ. Ի՞նչ ըսել կ'ուզէք, պարոն, մի՞թէ չդատապարտուեցայ:

ՍՈՒՍԷՔՍ. Այո՛, տիկին. բայց դուք իրաւունք ունիք մարդոց դատաստանին դէմ Աստուծոյ դատաստանը կոչել: Մենամարտութիւն առաջարկեցէք..... չեն կրնար այդ խնդիրքը մերժել. քանզի Անգլիոյ հին օրէնքները կը ներեն... և եթէ կը բարեհաճիք ձեր առջեւը ծնկան վրայ եղող մարդը իբր ձեր պաշտպանը ընդունիլ, ձեր անմեղութիւնը հռչակելու համար պատրաստ է իր արիւնը թափել:

ԹԱԳՈՒՀԻՈՅՆ ՔՈՎԸ ԵՂՈՂ ԿԻՆԵՐԸ. Ընդունեցէք, տիկին, ընդունեցէք:

ԺՈՂՈՎՈՒՐԴԸ. Այո՛, այո՛... Մենամարտութիւնը Աստուծոյ դատաստանն է:

ՆՈՒԻՐԱԿԸ. Լռեցէք:

ՔԱԹԷՐԻՆ. Ատ ինչ կ'առաջարկէք ինծի, պարոն.... (Ձեռքը անոր երկնցնելով:) Կ'աղաչեմ....

ՍՈՒՍԷՔՍ. Օ՜, ձեզ պաշտպանելու համար մինչև որ զիս արժանի կարծելու պատիւը չընէք ինծի, տիկին, ոտք չպիտի ելլեմ:

ՔԱԹԷՐԻՆ. Բայց թէ որ այդ մենամարտութիւնը մահաբեր ըլլայ:

ՍՈՒՍԷՔՍ. Կեանքս իմ թագուհւոյս է և հոգիս Աստուծոյ. թէ որ մեռնիմ՝ իւրաքանչիւր ոք իրը պիտի առնու:

ՔԱԹԷՐԻՆ. Անշուշտ կ'ուզէ՞ք որ ըլլայ, պարոն....

ՍՈՒՍԷՔՍ. Այո՛, Ձեր վսեմութիւնը կը պաղատիմ:

ՔԱԹԷՐԻՆ, ոտք ելլելով. Տեարք իմ, մարդկային դատաստանին դէմ Աստուծոյ դատաստանը կը կոչեմ: Իմ անմեղութեանս ապացոյց մենամարտութիւն կ'առաջարկեմ, և Սուսէքս կոմսը իմ պաշտպանս կ'որոշեմ:

ՍՈՒՍԷՔՍ. Շնորհակալ եմ, տիկին, շնորհակալ եմ: (Ոտք ելլելով:) Ուրեմն մտիկ ըրէք հիմա, պարոններ. Ես Զարլս–Ուիլիամ–Հէնրի Սուսէքս՝ կոմս ձեռքս նիզակ, կացին կամ սուր առած կը ներկայանամ անոնց դէմ, որոնք կը յանդգնին ինծի հակառակ խօսիլ, և կը հաստատեմ թէ Քաթէրին Հօուարտ Անգլիոյ բարձր խորհրդարանի մէջ անիրաւութեամբ դատուեցաւ, և թէ չնութեան յանցանքով դատապարտուելով, ինքը բոլորովին անմեղ և անբիծ է:

ԺՈՂՈՎՐԴԵԱՆ ՄԷՋԷՆ ՁԱՅՆ ՄԸ. Սուտ խօսեցար, պարոն Սուսէքս:

ՍՈՒՍԷՔՍ. Ատ խօսքերը ըսողը թող գայ ուրեմն այս ձեռնոցը գետնէն վերցընելու:

Սպառազինեալ և երեսն պահապաններէն մէկը յառաջած առջեւ մը կամաց կամաց Սուսէքսին կը մօտենայ:

ՔԱԹԸՐԻՆ, ետ քաշուելով. Ա՛նէ, ա՛նէ....

ԿԻՆՆԸՐԸ. Ո՛վ, տիկին.

ՔԱԹԸՐԻՆ. Ուրուականը...... ոգին.... դեւը....

ԱՍՊԵՏԸ. Նս ալ, տեարք իմ, 'ի պատասխանի Սուսէքս կոմսին առաջարկութեան, կը հաստատեմ իմ արեանս և տոհմիս պատւոյն վրայ, որ խորհրդարանին տուած վճիռը արդարութեամբ տրուած է։ Կը հաստատեմ որ Քաթէրին Թագուհին հետ ամուսնանալէն առաջ ուրիշի հետ ամուսնացած էր, և թէ ան առանց աս բանս խոստովանելու ամուսնացեր էր, և իր ամուսնութենէն ետև ալ իր առջի սիրահարը իր սենեակը ընդունէր էր։ Ուստի աս խօսքերէս ետև Սուսէքս կոմսին ձեռնոցը կը վերցընեմ գետնէն, կ'ընդունիմ իր առաջարկութիւնը, և կ'աղաչեմ Նորին Վեհափառութիւնը որ մենամարտութեան օրը որոշէ։

Վայրկեան մը լռութիւն.

ՀԷՆՐԻ. Վաղը թող ըլլայ, պարոններ. բանակին դատաւորները այսօր փողերու ձայնով որոշուած տեղը և ինչ զէնքով ըլլալիքը կ'իմացընեն։ Աս գիշեր ազատ էք, պարոններ, ձեր քրիստոնէական պարտքերը կատարելու զբաղեցէք. վասն զի քսան և չորս ժամէն ձեզմէ մէկը Աստուծոյ դահին առջևը պիտի երևի։ Խորհուրդը վերջացաւ, պարոններ, թո՛ղ Թագուհին աշտարակը տանին, և թող ազատ թողուն որ իր պաշտպանին հետ հաղորդակցի։

ԱՍՊԵՏԸ, Սուսէքսին. Վաղը տեսնուինք, պարոն։

ՍՈՒՍԷՔՍ, առանց երկմտելու ձեռքը երկնցընելով. Վաղը տեսնուինք։

## ԱՐԱՐՈՒԱԾ ՀԻՆԳԵՐՈՐԴ

## ՈՒԹՆԵՐՈՐԴ ՊԱՏԿԵՐ

*Լոնտոնի աշտարակին մէկ սենեակը. որուն ներքին կողմը քաղաքին վրայ նայող մեծ պատուհան մը կայ սև վարագոյներով գոցուած. աջ կողմը՝ խաչելութիւն մը, որուն տակը ծնգարան մը կը գտնուի. դիմացը՝ դուռ մը։*

### ՏԵՍԱՐԱՆ ԱՌԱՋԻՆ

ՔԱԹԸՐԻՆ, ՕՔՍՖՕՐՏԻ ԵՒ ՐՕՔԷՊԻԻ ԴՔՍՈՒՀԻՔ

ՔԱԹԸՐԻՆ, ծնգարանին վրայ ծնրադրելով. Մեռա՛ւ, մեռաւ ինծի համար, առանց գութ ունենալու սպաննեց զա՛ն։ Ո՛հ, արդեօք այս մարդուն սիրտը պղնձէ՞ է և կուրծքը երկաթէ՞, խեղճ Սուսէքս կոմս։

ՕՔՍՖՕՐՏԻ ԴՔՍՈՒՀԻՆ. Գիւթեալ զրահներ ունենալ պէտք էր որ իր

հակառակորդին հարուածներուն այնպէս դիմանար ։

ՔԱԹԸՐԻՆ. Այո՛, ես աչքովս տեսայ. ատելութեան և վրէժխնդրութեան դևերը իր թևոց առաջնորդը եղեր էին ։

ՕՔՍՖՕՐԴԻ ԴՔՍՈՒՀԻՆ. Ներեցէք ինծ յիշել ձեզ, տիկին, թէ Նորին Վեհափառութիւնը հրամայեց որ Քանթօրպէրիի արքեպիսկոպոսը . . .

ՔԱԹԸՐԻՆ. Այո՛, դքսուհի, այո՛, գիտեմ. Թագուհի ըլլալուս համար՝ Հէնրի եկեղեցւոյ իշխանը շնորհեց ինծ որ իմ վերջին վայրկեաններուս քովս կենայ ։ Շնորհակալ եմ անոր, բայց զուցէ աւելի կ'ուզէի որ գեղացի պարզ քահանայ մը ըլլար ։ Ե՞րբ պիտի կատարուի, տիկիններ ։

ՕՔՍՖՕՐԴԻ ԴՔՍՈՒՀԻՆ. Այս իրիկուն ժամը վեցին ։

ՔԱԹԸՐԻՆ. Կը կարծէ՞ք որ Հէնրի զիս մոռցընել տայ. ո՛հ, միայն մէկ խօսք մ'է . . . չպիտի ըսէ ան . . . . . շատ դիւրին է աս իրեն համար ։ Բայց ըսէք ինծ, տիկիններ, ինքզինքս ազատելու միջոց մը չկա՞յ ։ (Երկու կիները կու լան ։) Ո՛վ Աստուած իմ, ո՛վ Տէր իմ Աստուած . . . . ուրեմն զիս մինակ թողուցէք հոս, որովհետև չէք ուզեր ինծ օգնութիւն մը ընել ։

Կիները դուրս կ'ելլեն ։

## ՏԵՍԱՐԱՆ Բ.

ՔԱԹԸՐԻՆ՝ առանձին

Ծնկան վրայ աղօթք ըրած ատենը՝ ժամացոյցը կը զարնէ ։ և ոտքի ըլլալով՝ խռով խառայ ծնրադրած բազկին վրայ գլուխը կը դնէ ։ Ժամացոյցը երեք անգամ կը զարնէ. ու Քաթըրին անդադար կը մնայ, բայց երրորդ հարուածին բարձրաձայն կը համրէ ։

. . . . Երեք, չորս, հինգ ։ (Վայրկեան մը լուռ եւ անձկութեան մէջ կը մնայ ։) Ժամը հինգն է. ժամ մը ամեն բան պիտի լմննայ, և վաղը արևը գերեզմանիս վրայ պիտի ծագի ։ ։ Ո՛հ, ես որ արևուն այնչափ ծագումները պիտի տեսնէի ու այնչափ ժամերուն հնչիւնը պիտի լսէի, ո՛հ, այս ծաղիկ հասակիս, ու կենացս հաղիւ երրորդ մասին մէջ ինչպէս յաւիտենականութիւնը իր ձեռքը ինծ կ'երկընցընէ . . . . Պիտի մեռնիմ ես, ո՛հ, այս ինչ սոսկալի բառ է, որ տասն և ութը տարիէ 'ի վեր այսօր միայն կը ներկայանայ, ու երէկուանէ 'ի վեր սրտիս ամեն մէկ բաբախման հետ կը զարնէ ։ Մեռնի՛լ, ո՛հ, Աստուած իմ, Աստուած իմ, պիտի թողո՞ւս որ մեռնիմ . . . . Քէնէտի, ո՞ւր ես. ո՞ւր է իմ Րիչմօնտի տնակս, ո՞ւր են դալարագեղ դաշտերս, ու երիտասարդութեանս քաղցր երազները . . . ինչ անմիտ եմ եղեր որ ինքզինքս թշուառ կը համարէի անատեն . . . . Ո՛հ, թէ որ թագաւորը ըսէր ինծ. "Քաթէրին, կը ներեմ քեզ, քաշուէ՛ քու տնակդ, ուր առանձնացած էիր", որչափ շնորհակալ պիտի ըլլայի անոր, ինչպէս անոր ձեռքերը ու ոտքերը պիտի համբուրէի ։ Սակայն կրնայ ինքը աս բանը ընել. ո՛հ, եթէ տեսնէի զան ։ այնչափ պիտի աղաչէի, ու այնչափ

պիտի լայի, որ անշուշտ պիտի ներէր ինծի։ Եթէ ապրիմ և եթէ մեռնիմ, ինչ վնաս ունի թագաւորին․ զիս ըսպաննել տալով միթէ աւելի զօրաւո՞ր պիտի ըլլայ․ այո՛, պէտք է որ տեսնեմ զան։ (*Արտասանդեալ մատնին ձեռքը բռնելով։*) Ո՛վ իմ վերջին յոյսըս, իմ թագաւորութեննէս դուն միայն մնացիր ինծի․ ․ ․ ․ դուն ինծի օգնութեան հասիր․ ․ ․ ․ Բայց ժամանակը կ'անցնի, ժամը կը վազէ․ ․ ․ ․ ժամը հինգ զարնելը ո՞րչափ ատեն եղաւ․ ժամանակս կորսնցուցի․ ․ ․ ․ ո՛հ, ինչպէս շնչերակներս կը զարնեն ու գլուխս տակն ու վրայ կ'ըլլայ․

*Արմուկները ծունկներուն կը կռթնցնէ և իր բռունցքներուն վրայ կը հենէ․ ու աչքը դրան յառած կը կենայ․ Կամաց մը դուռը կը բացուի․ Դահիճը կը մտնէ, կամաց անցնելով ետև կանգ կ'առնու ու մէկ ծնկան վրայ կուգայ․ Քաթերին զայն տեսնելով ծնգտորանին վրայ կ'ելլէ․ ու աստանց աչքերը անոր վրայէն չվերցնելով ձեռքերովը խաչաձևած կը դիտէ։*

## ՏԵՍԱՐԱՆ Գ․

ՔԱԹԷՐԻՆ, ԴԱՀԻՃԸ

ԴԱՀԻՃԸ․ Գիտէ՞ք ես ով եմ, տիկին։

ՔԱԹԷՐԻՆ․ Աղէկ չեմ գիտեր․ դուն․ ․ ․ ․

*Ձիերու ոտքը կը լսուի։*

ԴԱՀԻՃԸ․ Այո՛։

ՔԱԹԷՐԻՆ․ Ինչո՞ւ ծնկան վրայ եկած ես։

ԴԱՀԻՃԸ․ Ըստ սովորութեան՝ ձեզմէ ներողութիւն խնդրելու համար։

ՔԱԹԷՐԻՆ․ Ո՛հ, այս ինչ հեգնութիւն է․ դահիճը գայ իր զոհէն ներողութիւն խնդրէ, ու անոր գլուխը կտրէ։

ԴԱՀԻՃԸ․ Պարտաւորեալ է այդպէս ընելու, տիկին։

ՔԱԹԷՐԻՆ, *իւր մատնին գիտելով*․ Ըսէ՛ ինծի, քու պաշտօնդ սոսկալի չէ՞ր երևիր քեզի։

ԴԱՀԻՃԸ․ Այո՛։

ՔԱԹԷՐԻՆ․ Ինչո՞ւ ուրեմն այդպիսի պաշտօն մը կը վարես։

ԴԱՀԻՃԸ․ Մանկի հաւս հօրս թողուց զան, ու հայրս ալ ինծի։

ՔԱԹԷՐԻՆ․ Այս պաշտօնը կ'ատես դուն, այնպէս չէ՞։

ԴԱՀԻՃԸ․ Ժամանակաւ յօժարութեամբ կեանքիս կէսը կու տայի ուրիշ պաշտօն մը գտնելու համար։

ՔԱԹԷՐԻՆ․ Բայց հիմա։

ԴԱՀԻՃԸ․ Հիմա ալ սովորեցայ։

ՔԱԹԷՐԻՆ․ Լոնտոնի մէջ մինակ դո՞ւն ես այս պաշտօնը ունեցողը։

ԴԱՀԻՃԸ․ Այո՛։

ՔԱԹԷՐԻՆ․ Թէ որ աս քաղաքէս մեկնէիր, քու տեղդ ո՞վ պիտի անցնէր։

ԴԱՀԻՃԸ․ Ընաւ մէկը։

ՔԱԹԷՐԻՆ․ Եւ անատեն պիտի պարտաւորէին Վալէի դահիճը բերել տալ։

ԴԱՀԻՃԸ․ Ա՛ն՝ թագուհւոյն համար անկէ բերել տուին, շատ կ'ուզէի որ ձեզի համար ալ անկէ բերել տային։

ՔԱԹԷՐԻՆ․ Եւ մինչև անոր գալը

երեք կամ չորս օր պիտի ուշանար, այնպէս չէ՞ ։

ԴԱՀԻՃԸ. Անտարակոյս ։

ՔԸԹԸՐԻՆ, մտածելով. Գուցէ այն միջոցին մէջ կրնամ թագաւորը տեսնել, և եթէ չտեսնեմ, կրնամ գրել և անոր մէկ շնորհք խնդրել։ (Ցնցաւրանքն վրայէն իջնալով ։) Բարեկամ, պէտք է որ Լոնտոնէն մեկնիս ։

ԴԱՀԻՃԸ. Անկարելի է ։

ՔԸԹԸՐԻՆ. Ու ինչո՞ւ ։

ԴԱՀԻՃԸ. Իմ կինս և զաւակներս ո՞վ պիտի սնուցանէ ։

ՔԸԹԸՐԻՆ. Ես կարող եմ զքեզ, քու կինդ և զաւակներդ հարստացընել։

ԴԱՀԻՃԸ. Ի՞նչպէս պիտի հարստացրնէք ։

ՔԸԹԸՐԻՆ. Մեծ սենեկապետը ինչ վարձք կու տայ քեզ տարին ։

ԴԱՀԻՃԸ. Քսան ոսկի ։

ՔԸԹԸՐԻՆ. Այս մատնին կը տեսնե՞ս ։

ԴԱՀԻՃԸ. Այո ։

ՔԸԹԸՐԻՆ. Այս մատնին հազար ոսկի կ'արժէ, այսինքն յիսուն տարուան մէջ շահելու գումարդ, այս մատնին քուկդ պիտի ըլլայ թէ որ ուզես ։

ԴԱՀԻՃԸ. Ի՞նչ կուզէք որ ընեմ ուրեմն ։

ՔԸԹԸՐԻՆ. Փախչիս և ոչ ուրիշ բան. ամենևին չեմ ուզեր որ զիս ազատես, քանզի գիտեմ որ չես կըրնար։ Իմ փախչիլս անհնար է. բայց դուն... փախչելովդ ամենևին մէկուն տարակոյս մը պիտի չտաս... ամեն մարդ գիտէ որ դուն կ'ատես քու պաշտօնդ. այո, դուն քու բերանովդ ինծի ըսիր ։ Ուստի հիմա այս վայրկենիս հեռացիր ասկէ, որպէս զի դքեզ փնտռած ատեննին չգտնեն. կնոջդ և զաւակացդ հետ Սկովտիոյ կամ Իրլանտիոյ սահմանները մտիր. Ճակատիդ վրայ գրուած չէ թէ դուն մինչև հիմա ինչ ըրիր, և բնաւ մէկը քու ով ըլլալդ պիտի չկրնայ գիտնալ։ Այսուհետև արեան շրջանակի մը մէջ փակուած չպիտի ապրիս, այլ միւս մարդոց ընկերութեանց մէջ պիտի խառնուիս. ալ այսուհետև մէկէ մը ներողութիւն խնդրելու հարկաւորութիւն պիտի չունենաս, ձեռքերդ արիւնով ներկուած տունդ պիտի չդառնաս, ու պիտի չթողուս քու որդւոյդ այն անօրէն պաշտօնը, զոր հաւդ հօրըդ թողուց և հայրդ քեզ։ Ասոնցմէ զատ՝ պէտք է մտածես որ քու երջանկութիւնդ շահելով, թագուհիի մը կեանքը ազատեցիր, և թէ այս թագուհին իր բոլոր աղօթիցը մէջ քու անունդ պիտի յիշէ, որ Աստուած քու անցեալիդ պատիժը ապագայիդ վրայ չդնէ ։

ԴԱՀԻՃԸ. Առանց այդպիսի մեծ վըտանգի մը մէջ մտնելու՝ այդ մատնին ինծի կը վերաբերի. դատապարտեալց կողոպուտը իմ ժառանգութիւնս է ։

ՔԸԹԸՐԻՆ. Այո, բայց կրնամ իմ կամանցս մէկուն տալ զան ։

ԴԱՀԻՃԸ. Ալ անոնց երեսը չպիտի տեսնէք ։

ՔԸԹԸՐԻՆ. Կրնամ գլխատութեան բեմին վրայէն վարը ժողովրդեան նե-

տել, և պտտալ որ զան ջոնողին կը նուիրեմ։

ԴԸՀԻՃԸ. Այս ընելով դիս մեղքի մէջ պիտի դնէք, տիկին. քանզի այդպէս անխոհեմութեամբ այդ մատանիին գինը ինծի ըսելնէդ ետև՝ հիմա ձեռքերնէդ պիտի առնում զան։

ՔԱԹԷՐԻՆ, մատնին բերնին մէջ դնելով. Փորձէ ուրեմն, նայինք կը համարձակի՞ս թագուհւոյ մը բերանը բանալու։

ԴԸՀԻՃԸ. Այդ մատնին հազար ոսկի՞ կ'արժէ ըսիք, տիկին։

ՔԱԹԷՐԻՆ. Այո՛, հազար ոսկի։

ԴԸՀԻՃԸ. Կ'երդնու՞ք այդպէս ըլլալուն համար։

ՔԱԹԷՐԻՆ, ձեռքը երկնցնելով. Այո՛, կ'երդնում Քրիստոսի վրայ։

ԴԸՀԻՃԸ. Ուրեմն տուր ինծի որ փախչիմ։

ՔԱԹԷՐԻՆ. Իսկ դուն ինչ բանի վրայ պիտի երդնուս որ պիտի փախչիս։

ԴԸՀԻՃԸ. Ես ալ Քրիստոսի վրայ կ'երդնում։

ՔԱԹԷՐԻՆ, գլուխը շարժելով. Ոչ, ես աւելի աղէկ կ'ուզեմ որ զաւակացդ ամենէն փոքրին կենացը վրայ երդում ընես։

ԴԸՀԻՃԸ. Զաւակացս ամենէն փոքրին կենացը վրայ կ'երդնում, տիկին, և Աստուած զան ձեռքէս առնու, թէ որ երդումս դրժեմ. և այս մատնին առնելուս պէս՝ Լոնտոնէն պիտի մեկնիմ ու մէկ մ'ալ չպիտի դառնամ։

ՔԱԹԷՐԻՆ. Ա՛ռ ուրեմն, ու գնա։

[illegible]

## ՏԵՍԱՐԱՆ Դ.

ՔԱԹԷՐԻՆ՝ առանձին, և ծնկան վրայ գալով, ետքը՝ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԸ։

ՔԱԹԷՐԻՆ. Շնորհակալ եմ քեզի, ով Աստուած, վասնզի կը յուսամ որ ալ վրէժխնդրութեանդ վերջ տուիր։

ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԸ, ներս մտնելով. Շատ գոհ եմ, աղջիկս, որ այսպէս բարեպաշտ պատրաստութեան մը մէջ կը գտնեմ զքեզ, ինչպէս որ կը յուսայի, քանզի ասկէ դուրս ելլող մարդը դիմացս ելաւ։

ՔԱԹԷՐԻՆ. Գնաց ան, այնպէս չէ՞։

ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԸ. Այո՛, բայց շուտով ետ պիտի դառնայ։

ՔԱԹԷՐԻՆ. Ե՛տ պիտի դառնայ, բայց ինքը ըսաւ որ ետ պիտի դառնայ։

ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԸ. Բան մը չըսաւ ինծի, աղջիկս, բայց դուն հազիւ կէս ժամ ունիս տակաւին։

ՔԱԹԷՐԻՆ, առանձին. Իրաւ է, կէս ժամս միայն, այնպէս կը կարծէ, քանզի չգիտեր.... (Հառաչելով.) Ո՛հ, այո՛, չգիտեր ան....

ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԸ. Աղջիկս, ինչ զարմանալի խորհուրդներ քու միտքդ կը զբաղեցընեն, որ այսպիսի վայրկեանի մը մէջ կարող կ'ըլլան քու շրթանցդ վրայ ժպիտ մը երեցընել։

ՔԱԹԷՐԻՆ, առանց անոր խօսքերուն ականջ դնելու. Եթէ Հէնրիին տեսնել կարենամ, հայր իմ, կը կարծե՞ս որ

արտասուքս, աղաչանքս, և իմ գեղեցկութիւնս անոր գութը շարժեն ։

ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԸ. Թագաւորաց սիրտը Աստուծոյ աջ ձեռքին մէջն է, տիկին, և որովհետև Աստուած գթասէր է, ամենևին տարակոյս չունիմ որ այս պարագայիս մէջ մեր իշխանին սիրտը գթասիրութեամբ չլեցընէ ։

ՔԱԹԷՐԻՆ. Պէտք է որ զիս թագաւորին քովը տանիս, հայր իմ ։

ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԸ. Ո՞չ, տիկին, աս անկարելի բան է. մոռցա՞ր որ քանի մը վայրկեանէն....

ՔԱԹԷՐԻՆ. Եթէ քանի մը վայրկեանի տեղ քանի մը ժամեր ունենամ....

ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԸ. Գլխատութիւնը ժամը վեցին պիտի կատարուի ։

ՔԱԹԷՐԻՆ. Բայց եթէ ժամը վեցին չկատարուի՞ ։

ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԸ. Ո՞վ արգելք կրնայ ըլլալ, բաւական է որ դահիճին զոհ գտնուի ։

ՔԱԹԷՐԻՆ. Բայց եթէ զոհին դահիճ չգտնուի՞ ։

ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԸ. Ըսածդ չեմ հասկընար ։

ՔԱԹԷՐԻՆ. Այս ըսածս, հայր իմ, երբ խոստովանանք կը յայտնեմ քեզի, աղէկ մտածէ, և Աստուած կ'արգիլէ խոստովանութեան գաղտնիքը յայտնելու ։

ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԸ. Քու խոստովանութիւնդ, տիկին, քեզի հետ հոս պիտի մեռնի ։

ՔԱԹԷՐԻՆ, անոր ունկին կռթնելով և նուազեալ ձայնով խօսելով. Առանց գըլխատիչի գլխատութիւն չըլլար. կ'իմացընեմ քեզի, գլխատիչը աներևոյթ եղաւ. դիմացդ եղած տանը ան ասկէ դուրս կ'ելլէր՝ մէկ մ'ալ չդառնալու համար, և այս վայրկենիս (աւելի ցած ձայնով) Լոնտոնի մէջ չի գտնուիր ։

ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԸ. Աս ինչ զարմանալի բան է ։

ՔԱԹԷՐԻՆ. Մտիկ ըրէ, հայր իմ, դուն ինծի գէշութիւն չես ուզեր. քանզի ես երբէք քեզի չարութիւն մը ըրած չեմ, և դուն չես կրնար ինծի թշնամութիւն մը ընել. եթէ առանց ուզելու քեզի գէշ բան մը ըրած իսկ եմ, հաւատքդ կը հրամայէ քեզի ոչ միայն ներել ինծի, այլ քու ձեռքդ քու նմաններուդ երկնցընել իրենց տառապանացը մէջ, պաշտպանել իրենց տկարութեանը մէջ, և օգնել իրենց վտանգին մէջ, քանզի դուն հաւատոյ առաջին պաշտօնեաներէն մէկն ես...... Ուրեմն, հայր իմ, ձեռքդ ինծի երկնցուր, պաշտպանէ զիս, և օգնէ ինծի ։

ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԸ. Ի՞նչ կրնամ ընել քեզ, տիկին ։

Ժողովրդեան մեծ աղմուկ.

ՔԱԹԷՐԻՆ. Մտիկ ըրէ....

ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԸ. Հրապարակին մէջ ժողվուած ժողովրդեան ձայնն է ։

ՔԱԹԷՐԻՆ. Այո, անոնք իրենց զոհին կ'սպասեն և կը մռմռեն. բայց ես թագաւորին նամակ մը գրել կ'ուզեմ, հայր իմ, կը խոստանա՞ս զան անոր ձեռքը հասցընելու ։ (Պահապա֊

նի մը, որ ներս կը մտնէ։) Ի՞նչ կ'ուզես հաս։

ՊԱՀԱՊԱՆԸ, ամեն կողմ նայելով. Ներեցէք, տիկին.... մէկը կը փընտռէի.... (Տեսարանի խորքին մէջ եղող մարդոց։) Հոս չէ։

Դուրս կ'ելլէ։

ՔԱԹԵՐԻՆ, ուրախութեամբ. Կը տեսնե՞ս, փնտռածնին չպիտի գտնուի, քանզի խօսք տուաւ ինձ։

ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԸ. Յստուած է դքեզ պաշտպանողը, զաւակս. ես ալ քու խնդիրքդ պիտի կատարեմ։

ՔԱԹԵՐԻՆ. Ո՛հ, ինչպէս բարեսիրտ ես, հայր իմ, և ես շնորհակալ եմ քեզ։ Կ'ուզեմ Հէնրիին գիր մը գրել, և.... (փողի մը ձայնը կը լսուի։) Ի՞նչ ձայն է աս։

ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԸ. Չեմ գիտեր։

Քաթերին անոր ետեւէն կը դիտապրուի։

ԴՐՍԷՆ ՁԱՅՆ ՄԸ. Ժողովուրդ Լոնտոնի, արդարութեան պաշտօնեայ մը ծ սենեկապետը իմաց կու տայ որ գլխատութեան ժամուն դահիճը աներեւոյթ եղած է. և որպէս զի տրուած վճռոյն գործադրութիւնը չյապաղի, անոր պաշտօնը կատարելու համար անոր տեղը ներկայացողին քան ոսկի վարձք կը խոստանայ, հրաման տալով անոր որ այս գլխատութիւնը կատարելու ատեն իր երեսը դիմակով ծածկէ։ Ըս ալ կ'իմացընէ որ այս պաշտօնը կատարողը բարի քաղաքացիի մը գործը ըրած պիտի ըլլայ։

Փողը առէնք հետեւէն կը հնչուի. և նոյն հրապարակախօսութիւնը կը լսուի։

ՔԱԹԵՐԻՆ. Ո՛հ, հայր իմ, լսեցի՞ր։

ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԸ. Այո՛։

ՔԱԹԵՐԻՆ. Բայց այս երկինքին տակը պիտի չգտնուի այնպիսի անագորոյն մէկը, որ այսպիսի պաշտօնի մը յանձնառու ըլլայ։

ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԸ. Ես ալ այնպէս կը յուսամ։

ՔԱԹԵՐԻՆ, նստելով. Գրենք ուրեմըն.... բայց ի՞նչ պէտք եմ գրել։ Ըսէ ինձ, հայր իմ, խելքս գըլուխս չէ։

ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԸ. Թագաւորին սիրտը շարժելու համար ինչպէս գրուիլը դուն ինձմէ աղէկ գիտես։

ՔԱԹԵՐԻՆ. Ո՛հ, բնաւ մէկը պիտի չներկայանայ, այնպէս չէ՞. բնաւ մէկը պիտի չուզէ յանձնառու ըլլալ այս սոսկալի պաշտօնին։ Յստուգիւ մարդասպան գազան մը պիտի ըլլայ ան։

ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԸ. Հուսա ըրէ՛ գըրէ, տիկին։

ՔԱԹԵՐԻՆ. « Հէնրի, գլխատու- « թեանս բեմին քայլին վրայ ու ա- « կնկալութեան վերջին յուսով մը.... (Յանկարծ կենալով, եւ սոսկումով արքեպիսկոպոսին ցուցնելով դիմակաւորեալ մարդ մը, որ ներս կը մտնէ։) Տէր իմ, նայէ՛, նայէ՛։ (Ոտք ելլելով եւ ետ քաշուելով։) Ո՛հ, ա՛ն է, ա՛ն է։

## ՏԵՍԱՐԱՆ Ե.

ԱՌԱՋԻՆՆԵՐԸ, ԷԹԷԼՎՈՒՑ՝ Տէմանշօրէալ։

ԷԹԷԼՎՈՒՑ. Պատրաստ էք, տիկին։

ՔԱԹԷՐԻՆ. Անոր ձայնն է, անոր անիծեալ ձայնը.... ինչպէս մոռցեր էի ես զան. ո՛հ, հայր իմ, կորսուեցայ ալ։

Արքեպիսկոպոսին մէկ կողմը կ'անցնի։

ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԸ. Ինչո՞ւ փորձ մը չես ըներ այս մարդուն աղաչելու, աղջիկս։

ՔԱԹԷՐԻՆ. Անո՞ր, հայր իմ, անո՞ր. դուցէ գլխատութեան սեղանը անոր չափ անգթայ չէ։

ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԸ. Եթէ այդպէս է, աղջիկս, աւանդէ ինծի քու մեղացդ խոստովանութիւնը, և որովհետև չի կրցայ մարմինդ ազատել, գոնէ հոգիդ ազատեմ։ Պատրաստ եմ, ահա մօտիկ կ'ընեմ։

ՔԱԹԷՐԻՆ. Չեմ կրնար, հայր իմ, բան մը.... բան մը չեմ յիշեր։

ԷԹԷԼՎՈՒՏ. Սիրեմ անոր տեղը ես ընեմ, տէր իմ, վասն զի ես ամեն բան կը յիշեմ։

ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԸ. Մի՞թէ աս մարդը ամեն բան գիտէ՞։

ՔԱԹԷՐԻՆ. Այո՛, Աստուծոյ չափ գիտէ։

ԷԹԷԼՎՈՒՏ. Այս կինը երիտասարդ աղքատ աղջիկ մ'էր առանց ազնուականութեան, առանց ազգականաց, խոտերու մէջ կորսուած ծաղիկ մը նման ժողովրդեան մէջ կորսուած, առանց հորիզոնի և առանց ապառնիի։ Ստո՞յգ է, Քաթէրին։

ՔԱԹԷՐԻՆ. գլուխը արքեպիսկոպոսին կռթնեցուցած. Ստոյգ է։

ԷԹԷԼՎՈՒՏ. Իր նուաստութեան մէջ մարդ մը զինքը գտնելով, սիրեց զան..... Այս մարդը Անգղիոյ ամենէն ազնուականներէն և ամենէն զօրաւորներէն մէկն էր. կրնար զան համողել, իր սիրուհին ընել, ու ետքը թողուլ. բայց անոր հետ կարգուեցաւ։ Քիչ մը ժամանակ ետքը՝ թագաւորին եղբայր և թագաւորութեան տեղակալ ըլլալու առաջարկուեցաւ այս մարդուն. բայց ան միայն այս կնոջմով գոհ ըլլալով՝ մերժեց զանոնք։ Ստո՞յգ է, Քաթէրին։

ՔԱԹԷՐԻՆ, Էթէլվուտի խօսքերուն վրայ գլուխը խոնարհեցնելով. Ստոյգ է։

ԷԹԷԼՎՈՒՏ. Աս մերժման համար իր աստիճանը, ստացուածքը, իշխանութիւնները, տիտղոսները կորսնցուց։ Աս կնոջ պատճառաւ աղքատ և կողոպտուած մնալով, իր կեանքէն զատ ուրիշ բան չունէր, ան ալ անմիտը իր կնոջը հաւատաց, գերեզմանի մը մէջ փակուեցաւ և անոր բանալին անոր յանձնեց՝ զան կենաց հրեշտակը կարծելով, բայց այս կինը, այս մոռացկոտ և անխիղճ կինը պալատ մը, գաւազան մը, և թագ մը տեսնելով, թողուց գերեզմանին մէջ այն մարդը, որ իրեն համար ամեն բան զոհեր էր, և այն բանալին անդունդին մէջ նետեց, այո՛, անդունդին մէջ..... Ստո՞յգ է, Քաթէրին։

ՔԱԹԷՐԻՆ, մէկ ծնկան վրայ իյնալով. Ստոյգ է։

ԷԹԷԼՎՈՒՏ. Այրի մնաց որ թագուհի ըլլայ. հասաւ իւր բաղձանքին, ինչպէս որ տեսաք զան իւր գահին վրայ, ու ամուսնոյ և սիրելույ ա-

նուններ ուրիշի տալը լսեցիք · Ստոյգ է որ այս նոր ամուսինը Թագաւոր էր, բայց անոր քանի մը չխոստավանելուն համար՝ դուքս խաբածին պէս Թագաւորն ալ խաբեր էր · Խաբուած Թագաւոր մը իր վրէժը կը լուծէ · ուստի զան Խորհրդարանի առաջ քաշեց, ուր դուք ալ նստած էիք, և տրուած վճռոյն մասնակից եղաք · այդ մասնակցութիւնը ամենեւին խղճի տագնապ մը պիտի չըլլայ ձեզ հիմա, վասն զի կը տեսնէք թէ աս կինը որչափ յանցաւոր է · Ինքը գիտէր որ այս վճռոյն, և ասկէ խիստ աւելի սոսկալի մահուան մը արժանի էր · Արդ՝ փոխանակ ձեր արդարութեան առջև, իր գլուխը խոնարհեցընելու, փոխանակ իր կուրծքը ծեծելու ըսելով թէ ինքը յանցաւոր է, և Աստուծոյ գթութիւնը մաղթելու տեղ, Սուսէքս կոմսին յիմար անձնանուիրութիւնը ընդունեց · կոմսը իր սուրը անոր ներկայացուց, և ան ալ չըսաւ կոմսին թէ ինքը անարժան է · կոմսը իր կեանքը անոր նուիրեց, և այս կինը, այն բարի, արդարասէր և ազնուական Սուսէքսը սպաննեց, այո, ինքը սպաննեց զան, հայր իմ, և ոչ անոր հակառակորդը, վասն զի Թողուց անոր որ իր պաշտպանը ըլլայ Աստուծոյ առջև այնպիսի պարագայի մէջ, ուր իր անիրաւ ըլլալը թէ ինքը և թէ Աստուած գիտէր · Ստո՞յգ է, Քաթէրին ·

ՔԱԹԷՐԻՆ, երկու ծնկան վրայ · Ստոյգ է ·

ԷԹԷԼՎՈՒԴ. Հիմա որ իր ամեն մեղքերը լսեցիք, արձակեցէք զան իր մեղքերէն, հայր իմ · վասն զի յանցաւորը ծնկան վրայ եկած է, ժողովուրդը կ'ըսպասէ, և ժամը հիմա վեցը պիտի զարնէ (ներքին պատուհանէն դուրս նայելով) և դահիճը պատրաստ է ·

Ժողովուրդը երեւելովը վերջին ճչոց մը կը հանէ ·

## ՏԵՍԱՐԱՆ Դ.

ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԸ, ՔԱԹԷՐԻՆ, ՐՕՔԵՊԻՒ ԵՒ ՕՔՍՖՕՐՏԻ ԴՔՍՈՒՀԻՔ ·

ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԸ. Աղջիկս, աս ամեն յիշուած մեղքերը գործեցի՞ր ·

ՔԱԹԷՐԻՆ. Այո՛, հայր իմ, արդեօք Աստուած պիտի ներէ՞ ինձ ·

ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԸ, օրհնելով զան · Աստուած ամենակարող է և իր գթութիւնը անսահման..... Աստուծոյ անունովը կ'արձակեմ զքեզ քու մեղքերէդ....

ՔԱԹԷՐԻՆ, ոտք ելլելով · Օքսֆորտի և Րօքէպիի դքսուհի տիկնայք, կ'ուզէի որ ձեր թագուհին յիշելու համար մէկ մէկ յիշատակ թողում ձեզի... բայց որովհետև աղքատ էի երբ գահը ելայ, և աղքատութեամբ անկէ կ'իջնամ, քանի մը չունիմ ձեզի տալու ·

ԴՔՍՈՒՀԻՔ. Ձեր ձեռքը մեզի տըւէք, տիկին ·

Ծունկի վրայ կու գան և Թագուհւոյն ձեռքը կը համբուրեն · Ծնրադրեալ կը մնան ·

ՔԱԹԷՐԻՆ, գլուխը վերցընելով · Երթանք ուրեմն, հայր իմ...

*[illegible] կը [illegible] դուրս կ'ելլէ. [illegible] շարժած են. Սև զգեստաւորները կը բացուին և ներսէն կը [illegible]. [illegible] վրայ [illegible] կը [illegible]. և [illegible] ձայնը կը լսուի.*

ԱՏԵՆԱԴՊԻՐԸ. *Բարձր խորհրդարանի վճիռը մահուան կը դատապարտէ զՔաթէրին Հօուարտ թագուհին և իր մեղսակիցը, և գլխատութիւնը ժամը վեցին պիտի կատարուի.*

*Ժամը կէսը կը զարնէ. [illegible] կը հանէ.*

ԵՐԿՈՒ ԿԻՆԵՐԸ. *Ով Աստուած, ընդունէ զան քու շնորհացդ մէջ.... ով Տէր Աստուած, գթա անոր....*

*[illegible] կը բացուին. [illegible] կ'երևի. [illegible]. և [illegible] վրայ.*

ԷԹԷԼՎՈՒՏ. *Հիմա, պարոններ, վճիռը պէտք է որ բոլորովին կատարեալ ըլլայ. յանցաւորը զարկի (Իր դիմակը հանելով.) Ահա յանցակիցը.*



# ԲԱՐԵՊԱՇՏՈՒԹԵԱՆ ՎԱՐՁԱՏՐՈՒԹԻՒՆ

Ի ԹԱՐԳՄԱՆՉԷՆ

ՔԱԹԸՐԻՆ ՀՕՎԱՐՏ Լոնտոնի մօտ Րիչմոնտ գիւղին աղքատ աղջիկ մըն՝ Անգղիոյ տա-նուհւոյ Էլիզապէթի հետ սնուցանած. Էլիզապէթ Հէնրի Ը. Անգղիոյ թագաւորին աղջիկն էր եւ անոր սիրտանդուրութիւնն զինքն իր սնուցանողին փոքրիկը կը դարձնէր։ Գիւղացւոց մը Հէնրի Քաթէրինը տեսնելով զան կնութեան կ'ուզէ առնել. Էլիզապէթ Քաթէրինին ճենուկ մը չինեց կու տայ, որով Քաթէրինը կը թմրեցնէ. եւ ժողովուրդը մեռած կարծելով զան Էլիզապէթի գերեզմանատան մէջ կը թաղեն։ Էլիզապէթ երբ Քաթէրինի արթննալուն անոր քովը կ'սպասէր. յանկարծ Հէնրի գերեզմանատան դուռը կը բանայ, որ եկեր էր զինքն ան-գամ մ'ալ զան տեսնելու եւ իր արքայական մատանին անոր մատը կը դնէ։ Էլիզապէթ մեծ եր-կիւղով զան քովը առած կ'երթայ։ Քանի մը վայրկեան ետքը Քաթէրին կ'արթննայ. եւ ինքզինքը մինակ գերեզմանի մէջ տեսնելով սոսկումէն դողալու ատեն Էլիզապէթ կը հասնի. կը պատմէ եղածները եւ գիշերը մութին զան իր պալատը կը տանի։

Հետեւեալ օրը Հէնրի Էլիզապէթի այցելութեան կու գայ եւ իր թագաւորութեան տեղա-կացութիւնը ու իր Մարգարիտ քրոջը ձեռքը կ'առաջարկէ անոր. Էլիզապէթ կը մերժէ. Հէնրի կ'սպառնայ որ եթէ չընդունի՝ իր բոլոր ստացուածքը յարքունիս գրաւէ եւ զինքը իր սիրտ-ննդ. դատապարտէ։ Էլիզապէթ այս հարուածներէն ազատելու համար Քաթէրինին սուտ բժշ-կին ինքն ալ կ'առնու ու իր գերեզմանատան երկու բանալիներ մէկը Քաթէրինին կը յանձնէ որ հետեւեալ օրը գայ զինքը առնու եւ միասին փախչին։

Երկու բանալիներ մէկը քաղ սպասուհուն թագաւորին կը յանձնուի։

Քաթէրինի սիրոյ փառասիրութեամբ չցուած երբ կը մտածէ թէ թագաւոր մը զինքը սիրեր է. ու հիմա թագաւորի գիտի ըլլայ. կը թողու իր երկիրը որ իր գերեզմանին մէջ մեռնի ու ինքը թագաւորին առջեւ կ'երթայ։ Հէնրի զան իր թագուհին կ'ընէ։

Հէնրիի Մարգարիտ քոյրը, որ Էլիզապէթի սիրահարուհիէն էր. գերեզմանատան բանալին կ'առ-նու. որ երթայ անգամ մը եւս իր սիրելին տեսնէ. Էլիզապէթ ողբերգով երբ անհամբերու-թեամբ Քաթէրինի կ'սպասէր, յանկարծ անոր տեղ Մարգարիտ իշխանուհին կը տեսնէ. կը յայտնէ անոր իր բոլոր դառնութիւնը. եւ անոր օգնութեամբ մինչեւ Քաթէրինի սենեակը կը թա-փանցէ. Քաթէրին, որ զան մեռած կը կարծէր. կը սոսկայ երբ զան կը տեսնէ, կ'առաջարկէ անոր որ միասին փախչին. բայց Էլիզապէթ կը մերժէ։

Ուրիշ օր մը երբ Էլիզապէթ նորէն այցելութիւն կ'ընէ թագուհւոյն եւ այնչափ կը կենայ անոր քովը որ թագաւորը իր դարպասն կը դառնայ սենեակը գոց կը գտնէ, դուռը կը զարնէ եւ ներսը երկու հոգւոյ ձայն կը լսէ. դուռը կը խորտակէ. բայց Էլիզապէթ իր գլխարկը թողլով կը փախչի պալատի ճամբաներէն։

Հէնրի զՔաթէրին Հօւարտ յանցաւոր գտնելով դատապարտելի կը կանչէ. եւ առանձնակալ ատենի ժողովը զան գլխատութեան կը դատապարտէ։

Գլխատութեան ժամուն Քաթէրին իր մահին դահիճին տալով, Լոնտոնին կը փախցը-նէ, յուսալով որ մինչեւ քանի մը օր ուրիշ մը բերելնին՝ կորսնցուցած երազին զՀէնրին տես-նել ու անոր գութը շարժել. բայց աս բանը իմացուելով, հրաման կ'ըլլայ թէ ով որ Քաթէրինի գլուխը կտրէ՝ քանի ոսկի վարձք պիտի առնու, ու իր երեսը գիմակով կրնայ ծածկել։ Էլիզապէթ դիմակաւորեալ կը ներկայանայ, Քաթէրին կը ճանչնայ զան ու կը սոսկայ, Էլիզապէթ անոր գլուխը զարնելէն ետեւ՝ իր դիմակը կը հանէ եւ կը հրա-տարակէ զինքը Քաթէրինի սենեկին մէջ գտնուած այն մեղսակիցը, որ թագաւորին դատա-պարտութեանը մասնակից պիտի ըլլար։

2204
24559
12013